

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ

*2018 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին*

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն.....	1
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն.....	2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն.....	3
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն.....	4

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Հիմնական գործունեության նկարագրություն.....	5
2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները.....	5
3. Համախմբման հիմունքներ.....	7
4. Նշանակալի դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ.....	8
5. Հասույթ.....	10
6. Վաճառքի ինքնարժեք.....	11
7. Իրացման ծախսեր.....	11
8. Վարչական ծախսեր.....	11
8. Վարչական ծախսեր (շարունակություն).....	12
9. Նվիրատվություններ սոցիալական ծրագրերին.....	12
10. Այլ ծախսեր.....	12
11. Ֆինանսական եկամուտ և ֆինանսական ծախսեր.....	13
12. Աշխատակազմի գծով ծախսեր.....	13
13. Շահութահարկ.....	14
14. Հիմնական միջոցներ.....	16
15. Մակաբացման գործունեության ակտիվ.....	17
16. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ներդրումներ.....	17
17. Հետախուզման և գնահատման ակտիվներ.....	18
18. Կանխավճարներ.....	18
19. Տրամադրված փոխառություններ.....	18
20. Պաշարներ.....	19
21. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր.....	19
22. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ.....	21
23. Կապիտալ և պահուստներ.....	21
24. Վարկեր և փոխառություններ.....	21
25. Պահուստներ.....	23
26. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ.....	24
27. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր.....	25
28. Ֆինանսական վարձակալություն.....	25
29. Պայմանականորեն գնանշվող վաճառքների գծով ստացված կանխավճարներ.....	25
30. Իրական արժեք և ռիսկերի կառավարում.....	26
31. Պայմանական պարտավորություններ.....	34
32. Գործառնական ռիսկեր.....	35
33. Կապակցված կողմեր.....	36
34. Հաշվապահական հաշվառման քաղաքականության և բացահայտումների փոփոխություններ.....	38
35. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած իրադարձություններ.....	44
36. Հրապարակված, բայց դեռևս ուժի մեջ չմտած ստանդարտներ.....	44
37. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը.....	48

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ փակ բաժնետիրական ընկերության
բաժնետերերին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության
և նրա դուստր ընկերության (այսուհետ՝ «Խումբ») համախմբված ֆինանսական
հաշվետվությունները, որոնք ներառում են 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական
վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա
համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և
դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև
համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ
հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական
առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի համախմբված ֆինանսական վիճակը 2018թ.
դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված
ֆինանսական արդյունքները և համախմբված դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն
Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ)
համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է
այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական
հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների
խորհրդի կողմից հրապարակված *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի* (ՀԷՄՄԽ
կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՄԽ կանոնների:

Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և
համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատ գործելու հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Խումբը, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացրած աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն:

Ի լրումն՝

- ▶ հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,

- ▶ ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- ▶ գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև դեկլարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- ▶ եզրահանգում ենք դեկլարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևավորել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Խմբի գործունեության անընդհատության դադարեցմանը,
- ▶ գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը,
- ▶ ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ներսում գործող կազմակերպությունների կամ ձեռնարկատիրական գործունեությունների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք Խմբի աուդիտի ուղղորդման, դեկլարման և իրականացման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ

Աուդիտի բաժնի հիմնադիր գործընկեր՝
Գլխավոր տնօրեն՝ Ն. Սարգսյան՝
ի դեմս լիազորված անձ Է. Հայրապետյանի
(գործող 2016թ. օգոստոսի 1-ին տրված լիազորագրի հիման վրա)



Էրիկ Հայրապետյան

ՀՀ, ք. Երևան

29 ապրիլ, 2019թ.



Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

հազ. դրամ	Ծան.	2018թ.	2017թ.
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ	14	209,084,432	194,293,704
Մակարացման գործունեության ակտիվ	15	4,090,780	4,090,780
Պաշարներ	20	12,469,763	3,794,527
Ոչ նյութական ակտիվներ		408,203	99,040
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ներդրումներ	16	877,159	-
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	16	-	928,484
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով	18	3,352,442	6,724,894
Տրամադրված փոխառություններ	19	5,573,313	-
Հետախուզման և գնահատման ակտիվներ	17	-	2,438,081
Փոխհատուցվող ԱԱՀ		944,875	1,142,475
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		51,000	51,000
Ոչ ընթացիկ ակտիվներ		236,851,967	213,562,985
Պաշարներ	20	20,431,684	13,151,871
Կանխավճարներ այլ հարկերի գծով		392,188	492,486
Փոխհատուցվող ԱԱՀ		3,396,316	1,541,473
Հետաձգված ԱԱՀ		525,279	548,397
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	21	9,600,820	13,579,858
Կանխավճարներ ընթացիկ ակտիվների գծով	18	6,805,004	8,150,173
Տրամադրված փոխառություններ	19	3,341,837	-
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	26	254,868	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	22	525,227	5,678,570
Այլ ընթացիկ ակտիվներ		1,611	1,771
Ընթացիկ ակտիվներ		45,274,834	43,144,599
Ընդամենը ակտիվներ		282,126,801	256,707,584
Մեֆական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	23	54,966,680	54,966,680
Կուտակված շահույթ		51,016,078	36,511,813
Ընդամենը սեփական կապիտալ		105,982,758	91,478,493
Պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	24	23,757,102	49,306,949
Պահուստներ	25	3,236,671	3,136,131
Ֆինանսական վարձակալություն	28	2,138,218	-
Պայմանականորեն գնանշվող վաճառքների գծով ստացված կանխավճարներ, պայմանագրային պարտավորություններ	29	39,157,288	24,841,042
Հետաձգված հարկային պարտավորություններ	13	12,978,254	15,706,183
Ոչ ընթացիկ պարտավորություններ		81,267,533	92,990,305
Վարկեր և փոխառություններ	24	43,591,519	22,831,584
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ	26	-	7,140,890
Պահուստներ	25	406,804	553,462
Ֆինանսական վարձակալություն	28	927,246	-
Պայմանականորեն գնանշվող վաճառքների գծով ստացված կանխավճարներ, պայմանագրային պարտավորություններ	29	22,809,090	13,785,285
Պարտավորություններ շահութահարկի գծով	13	-	4,487,225
Պարտավորություններ ռոյալթիի գծով		1,939,170	5,209,644
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	27	25,202,681	18,230,696
Ընթացիկ պարտավորություններ		94,876,510	72,238,786
Ընդամենը պարտավորություններ		176,144,043	165,229,091
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		282,126,801	256,707,584

Հաստատվել է ստորագրվել է խմբի ղեկավարության կողմից 2019թ. ապրիլի 29-ին:

Մենթ Պոլտակով
Գլխավոր տնօրենՎարդան Մարտիրոսյան
Գլխավոր հաշվապահ

1-37 ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն

2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

<i>հազ. դրամ</i>	<i>Ծան.</i>	<i>2018թ.</i>	<i>2017թ.</i>
Հասույթ	5	199,900,935	188,553,245
Վաճառքի ինքնարժեք	6	(103,087,295)	(98,836,312)
Համախառն շահույթ		96,813,640	89,716,933
Այլ եկամուտ		1,333,215	556,122
Իրացման ծախսեր	7	(10,252,977)	(10,298,126)
Վարչական ծախսեր	8	(14,339,312)	(12,663,416)
Նվիրատվություններ սոցիալական ծրագրերին	9	(7,900,100)	(3,481,634)
Այլ ծախսեր	10	(32,353,872)	(24,371,698)
Գործառնական գործունեությունից շահույթ		33,300,594	39,458,181
Ակնկալվող վարկային կորուստների գծով ծախս	19,21	(394,771)	–
Ֆինանսական եկամուտ	11	3,673,928	312,668
Ֆինանսական ծախսեր	11	(12,395,745)	(23,664,792)
Զուտ եկամուտ փոխարժեքային տարբերություններից		88,079	3,862
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը		24,272,085	16,109,919
Շահութահարկի գծով ծախս	13	(8,733,843)	(5,264,349)
Հաշվետու տարվա ընդամենը համապարփակ շահույթ		15,538,242	10,845,570

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

<i>հազ. դրամ</i>	<i>Կանոնադրական կապիտալ (Ծան. 22)</i>	<i>Կուտակված շահույթ</i>	<i>Ընդամենը</i>
2017թ. հունվարի 1-ի դրությամբ	54,966,680	25,666,243	80,632,923
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ շահույթ	–	10,845,570	10,845,570
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	54,966,680	36,511,813	91,478,493
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	54,966,680	36,511,813	91,478,493
ՖՀՄՍ 9-ի ներդրման ազդեցությունը (Ծան. 33)	–	(383,902)	(383,902)
ՖՀՄՍ 15-ի ներդրման ազդեցությունը (Ծան. 33)	–	(650,075)	(650,075)
Վերահաշվարկված սկզբնական մնացորդ	54,966,680	35,477,836	90,444,516
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ շահույթ	–	15,538,242	15,538,242
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	54,966,680	51,016,078	105,982,758

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն**2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

<i>հազ. դրամ</i>	<i>2018թ.</i>	<i>2017թ.</i>
Գործառնական գործունեություն		
Իրացումից ստացված գումարներ, ներառյալ ԱԱՀ-ն	218,298,208	203,031,277
Վճարումներ մատակարարներին, ներառյալ ԱԱՀ-ն	(124,965,235)	(112,868,825)
Վճարումներ աշխատակիցներին՝ եկամտային հարկից զուտ	(20,463,853)	(15,884,697)
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների մարումից ելքեր	(4,563,573)	(12,536,523)
Վճարումներ շահութահարկի գծով*	(15,690,502)	
Վճարումներ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի	(5,240,781)	(222,198)
Վճարումներ ռոյալթիի գծով	(12,970,001)	(10,323,209)
Նվիրատվություններ սոցիալական ծրագրերին	(5,433,720)	(3,618,069)
Վճարված տոկոսներ ստացված ոչ ընթացիկ կանխավճարների գծով	(2,434,340)	
Բանկային ծառայությունների վճարներ և վնասներ փոխարկումից	(1,214,734)	(214,769)
Այլ ստացված գումարներ	1,859,844	200,514
Այլ վճարումներ	(3,156,122)	(1,010,536)
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից	24,025,191	46,552,965
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Հիմնական միջոցների և մակաբաժան գործունեության ակտիվի գծով ծախսումներ	(18,654,085)	(15,777,426)
Մուտքեր հիմնական միջոցների օտարումից	1,599	44,200
Տրված փոխառություններ	(797,326)	
Ստացված տոկոսներ	48,985	37,980
Ստացված շահաբաժիններ Արցախի ՀԷԿ-ում բաժնետոմսերից	117,115	–
Զուտ դրամական միջոցների հոսքեր օգտագործված ներդրումային գործունեությունում	(19,283,712)	(15,695,246)
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		
Մուտքեր վարկերից և փոխառություններից	212,025,762	–
Վարկերի և փոխառությունների մարում	(215,820,449)	(23,422,190)
Վճարված տոկոս, ներառյալ ոչ ռեզիդենտի շահութահարկը	(5,523,837)	(6,585,458)
Զուտ դրամական միջոցների հոսքեր օգտագործված ֆինանսական գործունեությունում	(9,318,524)	(30,007,648)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ	(4,577,045)	850,071
Դրամական միջոցները և դրանց համարժեքները հունվարի 1-ի դրությամբ (Ծան. 22)	5,678,570	4,791,358
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների զուտ տարբերություններ	(576,298)	37,141
Դրամական միջոցները և դրանց համարժեքները դեկտեմբերի 31-ի դրությամբ (Ծան. 22)	525,227	5,678,570

* 2017թ. ընթացքում շահութահարկի գծով 2,823,965 հազար և 137,000 հազար դրամ գումարով կանխավճարները հաշվանցվել են, համապատասխանաբար, ռոյալթիի և եկամտահարկի գծով կրեդիտորական պարտքերի դիմաց: Շահութահարկի գծով կանխավճարները՝ 168,431 հազար դրամի չափով, հաշվանցվել են, համապատասխանաբար, տույժ, տուգանքների, իսկ 153,206 հազար դրամի չափով՝ շահութահարկի գծով 2017թ. -ի կրեդիտորական պարտքերի դիմաց:

1. Հիմնական գործունեության նկարագրություն

ա) Տեղեկատվություն Խմբի վերաբերյալ

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունը («Ընկերություն») և իր դուստր ընկերությունը՝ Լեռ-Էքս ՍՊ ընկերությունը («Դուստր ընկերություն»), միասին կազմելով Խումբ («Խումբ») հանդիսանում են փակ բաժնետիրական ընկերություն և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն՝ Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի սահմանման համաձայն: Ընկերությունը հիմնադրվել էր որպես պետական ձեռնարկություն 1952թ-ին: 2005թ. հունվարի 1-ին Ընկերությունը սեփականաշնորհվեց կառավարության 2004թ. դեկտեմբերի 9-ի թիվ 1677-Ա որոշման համաձայն:

Ընկերության հիմնական գործունեության փաստացի վայրը և իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Սյունիքի մարզ, Քաջարան, Լեռնագործների փող. 18:

Խմբի հիմնական գործունեությունը հանքարդյունաբերությունն է, պղնձի և մոլիբդենի խտանյութի արտադրությունը: Պատրաստի արտադրանքը իրացվում է պղնձի և մոլիբդենի խտանյութի, ֆերոմոլիբդենի տեսքով: Խմբի գործունեությունը կարգավորվում է Խմբի և ՀՀ Էներգետիկ Ենթակառուցվածքների և Բնական Պաշարների նախարարության միջև կնքված Լիցենզիայի պայմանագրերով («Լիցենզիայի պայմանագրեր»): Լիցենզիայի պայմանագրերի համաձայն Խմբի գործունեությունը լիցենզավորված է մինչև 2041թ.:

Խմբի սեփականատերեր են հանդիսանում «Քրոնիմետ Մայնինգ» Էյ-Ջի-ն (60%), «Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ-ն (15%) (99.3% վերջնական սեփականատերն է հանդիսանում «Քրոնիմետ Հոլդինգ» ՍՊ ընկերությունը), «ԱՄԲ Հոլդինգ» ՍՊ ընկերությունը (12.5%) և «Զանգեզուր Մայնինգ» ՍՊ ընկերությունը (12.5%) («Բաժնետերեր»):

Խմբի վերջնական մայր կազմակերպությունն է հանդիսանում «Քրոնիմետ Վերվալտունգ» ՍՊ ընկերությունը, որը վերահսկվում է Գյունտեր Պիլարսկիի և իր ընտանիքի կողմից: Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են Ծան. 33-ում:

բ) Գործարար միջավայր

Հայաստանի Հանրապետությունը շարունակում է տնտեսական բարեփոխումները և իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը: Հայաստանի տնտեսության ապագա կայունությունը մեծապես կախված է այս բարեփոխումներից և զարգացումներից, ինչպես նաև կառավարության կողմից ձեռնարկվող տնտեսական, ֆինանսական և դրամավարկային քաղաքականությունների արդյունավետությունից:

Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխան քայլեր է ձեռնարկում ներկայիս իրավիճակում Խմբի գործունեության կայունությունը ապահովելու համար:

2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

ա) Ընդհանուր մաս

Խմբի սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից թողարկված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ «ՀՀՄՄ») պահանջների համաձայն:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են սկզբնական արժեքի հիմունքով՝ բացառությամբ ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ բացահայտվածի: Օրինակ՝ ածանցյալ ֆինանսական գործիքները գնահատված են իրական արժեքով:

2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները (շարունակություն)**բ) Դուստր ընկերություններ**

Հետևյալ դուստր ընկերությունը ընդգրկված է Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝

<i>Դուստր ընկերություն</i>	<i>Մեֆականությու- ն/ձայնի իրավունք, %</i>	<i>Հիմնական գործունեության վայր</i>	<i>Գրանցման երկիր</i>	<i>Գործունեության բնույթը</i>
«Լեռ-Էքս» ՍՊԸ	100%	Կապան, Հայաստան	Հայաստանի Հանրապետություն	Հանքարդյունա- բերություն

գ) Իրացվելիության դիրք

2018թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի ընթացիկ պարտավորությունները գերազանցում են ընթացիկ ակտիվները 49,601,676 հազար դրամով: Ղեկավարությունը գտնում է, որ իրացվելիության անհավասարակշռությունը ժամանակավոր բնույթ է կրում և և կփոխվի պղնձի գների աճի հետ:

Ղեկավարությունը ուսումնասիրել է Խմբի պլանավորված դրամական հոսքերը և կիրառված համապատասխան ենթադրությունները և կատարել է համապատասխան սթրես թեստեր (կապված հիմնականում պղնձի պահանջարկի եւ գների հետ): Արդյունքում՝ Ղեկավարությունը ունի ողջամիտ կանխատեսում, որ Խումբը ունի բավարար միջոցներ իր գործառնական գործունեությունը տեսանելի ապագայում շարունակելու համար:

դ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը հանդիսանում է Խմբի ընկերությունների ֆունկցիոնալ արժույթը և այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը:

Արտարժույթով կատարված գործարքները Խմբի կողմից սկզբնապես գրանցվում են համապատասխան ֆունկցիոնալ արժույթի սփռթ դրույքներով՝ այն օրվա դրությամբ, երբ գործարքն առաջին անգամ բավարարում է ճանաչման չափանիշներին: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվներն ու պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի սփռթ դրույքներով՝ կիրառելով հաշվետու ամսաթվի փոխարժեքը: Բոլոր տարբերությունները ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Ոչ դրամային հոդվածների համար, որոնք ներկայացվում են արտարժույթով արտահայտված սկզբնական արժեքով, վերագնահատման ժամանակ կիրառվում է սկզբնական գործարքի ամսաթվի փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքը:

Ֆինանսական ամբողջ տեղեկատվությունը ներկայացված է դրամով, եթե այլ բան նշված չէ: ՀՀ Կենտրոնական բանկի կողմից պաշտոնապես սահմանված փոխարժեքները 2018 և 2017թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են համապատասխանաբար 483.75 ՀՀ դրամ և 484.10 ՀՀ դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց և 553.65 ՀՀ դրամ և 580.1 ՀՀ դրամ 1 Եվրոյի դիմաց:

ե) Իրական արժեքի չափում

Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության մի շարք դրույթներ և բացահայտումներ պահանջվում են իրական արժեքի չափում ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների համար:

Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելիս Խումբը հնարավորության սահմաններում օգտագործում է դիտարկելի շուկայական տվյալները:

2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները (շարունակություն)

ե) Իրական արժեքի չափում (շարունակություն)

Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակների, հիմք ընդունելով գնահատման մեթոդներում օգտագործված ելակետային տվյալները, ինչպես ներկայացված է ստորև:

- ▶ 1-ին մակարդակ. համանման ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված):
- ▶ 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):
- ▶ 3-րդ մակարդակ. ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Եթե ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելու համար օգտագործվող ելակետային տվյալները կարող են դասակարգվել իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակների, ապա իրական արժեքի չափումն ամբողջությամբ դասվում է հիերարխիայի այն նույն մակարդակին, որին դասվում են այն ամենացածր մակարդակի ելակետային տվյալները, որոնք նշանակալի են ամբողջությամբ վերցված իրական արժեքի չափման համար:

Լրացուցիչ տեղեկատվությունը իրական արժեքի գնահատման վերաբերյալ ներկայացված է Ծան. 28-ում:

3. Համախմբման հիմունքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները բաղկացած են «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության և իր դուստր ընկերության ֆինանսական հաշվետվություններից 2018թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ: Դուստր ընկերություն է համարվում այն ընկերությունը, որի նկատմամբ Խումբը վերահսկողություն է իրականացնում: Վերահսկողությունն իրականացվում է այն դեպքում, երբ Խումբն իրավունք ունի ներդրումներից ստանալ փոփոխական արդյունքներ կամ ենթարկվում է այդ արդյունքների փոփոխությունների հետ կապված ռիսկին և կարող է ազդել այդ ներդրումներից ստացվող արդյունքների վրա իր իրավասությունների միջոցով: Մասնավորապես, Խումբը վերահսկում է ներդրումը, միայն և միայն այն դեպքում, երբ բավարարվում են հետևյալ պայմանները

- ▶ Խումբն ունի իրավասություն ներդրման օբյեկտի նկատմամբ (այսինքն՝ գոյություն ունեցող իրավունքներ, որոնք ապահովում են ներդրման օբյեկտի նշանակալի գործունեությունը կառավարելու հնարավորություն),
- ▶ Խումբն ունի իրավունք ներդրումներից ստացվող փոփոխական արդյունքների նկատմամբ և ենթարկվում է այդ արդյունքների փոփոխությունների հետ կապված ռիսկին,
- ▶ Խումբն ունի հնարավորություն օգտագործելու իր իրավասությունները ներդրման օբյեկտի նկատմամբ՝ ներդրումներից փոփոխական արդյունքների վրա ազդելու նպատակով:

Որպես կանոն, ենթադրվում է, որ վերահսկողությունը պայմանավորված է ձայնի իրավունքի մեծամասնությամբ: Սույն ենթադրության հաստատման, ինչպես նաև Խմբի մոտ մեծամասնությունից ավելի քիչ քվեարկման կամ ներդրման օբյեկտի նկատմամբ մեծամասնությունից ավելի քիչ նմանատիպ իրավունքների առկայության դեպքում, Խումբը հաշվի է առնում է բոլոր փաստերը և հանգամանքները տվյալ ներդրման օբյեկտի նկատմամբ իրավասության առկայությունը գնահատելիս, ներառյալ

- ▶ ներդրման օբյեկտի նկատմամբ ձայնի իրավունք ունեցող անձանց հետ պայմանագրային համաձայնությունը,
- ▶ այլ համաձայնագրերից ծագող իրավունքները,
- ▶ Խմբին պատկանող առկա և հնարավոր քվեարկման իրավունքները:

Նշանակալի գործունեությունները այն գործունեություններն են, որոնք զգալիորեն ազդում են դուստր ընկերության արդյունքների վրա: Դուստր ընկերության գործառնական և կապիտալ բյուջեները հաստատելու, ինչպես նաև առանցքային ղեկավար անձնակազմի նշանակելու որոշումների կարողությունը վկայում են այն մասին, որ Ընկերությունը ունի դուստր ընկերության նշանակալի գործունեությունը կառավարելու իրավունք:

3. Համախմբման հիմունքներ (շարունակություն)

Խումբը կրկին գնահատում է ներդրման օբյեկտի նկատմամբ վերահսկողության առկայությունը, եթե փաստերը և հանգամանքները ցույց են տալիս, որ վերահսկողության երեք տարրերից մեկում կամ մի քանիստում կան փոփոխություններ: Դուստր կազմակերպության համախմբումը սկսվում է, երբ Խումբը ձեռք է բերում վերահսկողություն դուստր ընկերության նկատմամբ և դադարում է, երբ Խումբը կորցնում է այդ վերահսկողությունը: Դուստր ընկերության ակտիվները, պարտավորությունները, եկամուտները և ծախսերը ներառվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվության մեջ՝ սկսած Խմբի կողմից դուստր ընկերության նկատմամբ վերահսկողության ձեռքբերման պահից մինչև այդ վերահսկողության դադարելը: Երբ Խմբի բաժնեմասը 100%-ից պակաս է, արտաքին բաժնետերերին վերագրելի բաժնեմասը արտացոլվում է չվերահսկվող բաժնեմաս հոդվածում:

Շահույթը կամ վնասը և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների ցանկացած բաղադրիչ վերագրվում է Խմբի մայր ընկերության սեփականատերերին և չվերահսկվող բաժնեմասին, նույնիսկ եթե այն հանգեցնում է չվերահսկվող բաժնեմասերի մոտ բացասական մնացորդի: Անհրաժեշտության դեպքում, դուստր ընկերությունների ֆինանսական հաշվետվությունները ճշգրտվում են՝ այդ ընկերությունների հաշվապահական հաշվառման քաղաքականությունները Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականություններին համապատասխանեցնելու նպատակով: Ներխմբային բոլոր ակտիվները և պարտավորությունները, կապիտալը, եկամուտները, ծախսերը և դրամական հոսքերը, որոնք առաջացել են Խմբի ներսում գործառնությունների արդյունքում, համախմբելիս ամբողջությամբ բացառվում են:

Առանց վերահսկման կորստի դուստր ընկերությունում մասնակցության փոփոխությունը հաշվառվում է որպես սեփական կապիտալում փոփոխություն:

Եթե Խումբը կորցնում է դուստր ընկերության նկատմամբ վերահսկողությունը, այն ապաճանաչում է դուստր ընկերության ակտիվները (ներառյալ՝ գույքիլը), պարտավորությունները, չվերահսկվող բաժնեմասը և կապիտալի այլ բաղադրիչները, իսկ արդյունքում առաջացած օգուտը կամ վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքներում: Պահպանված ցանկացած ներդրում ճանաչվում է իրական արժեքով:

4. Նշանակալի դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ

ա) Դատողությունների, գնահատումների և ենթադրությունների կիրառումը

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է Խմբի ղեկավարությունից կիրառել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն եկամուտների ու ծախսերի, ակտիվների, պարտավորությունների և կից բացահայտումների վրա, ինչպես նաև պայմանական պարտավորությունների բացահայտումների վրա համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ: Գնահատումները և ենթադրությունները շարունակաբար վերլուծվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա, ներառյալ ապագա իրադարձությունների սպասումները, որոնք կարող են տեղի ունենալ որոշակի հանգամանքների պարագայում: Այս գնահատումների և ենթադրությունների վերաբերյալ անորոշությունը կարող է հանգեցնել այնպիսի հետևանքների, որոնք կպահանջեն հետագայում ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումներ:

Մասնավորապես, Խումբը հայտնաբերել է մի շարք ոլորտներ, որտեղ պահանջվում են նշանակալի դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ: Այս ոլորտների և նրանց՝ տարբեր հաշվապահական քաղաքականությունների վրա ազդեցության վերաբերյալ հետագա տեղեկատվությունը նկարագրված է հաշվապահական քաղաքականության հետ կապակցված ծանոթագրությունում՝ կապակցած որակական և քանակական ծանոթագրությունում, ինչպես նկարագրված է ստորև:

Այն ներառում է.

Դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ

- ▶ Ծան. 15 Մակաբացման գործունեության ակտիվ,
- ▶ Ծան. 2 (դ) Ֆունկցիոնալ արժույթ,
- ▶ Ծան. 37 (բ) Եկամուտի ճանաչում,
- ▶ Ծան. 37 (է) Շահութահարկ,
- ▶ Ծան 10 Այլ ծախսեր՝ ռոյալթիի գնահատում

4. Նշանակալի դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ (շարունակություն)**ա) Դատողությունների, գնահատումների և ենթադրությունների կիրառումը (շարունակություն)**

- ▶ Օան. 4 (բ) Հանքաքարի պաշարներ – օգտակար հանածոների պաշարների գնահատում, որոնք հիմք են հանդիսանում դրամական միջոցների ապագա հոսքերի գնահատման համար,
- ▶ Հետազոտման և գնահատման ծախսեր,
- ▶ Օան. 37 (ի) Հիմնական միջոցներ – արտադրական միավորի մաշվածության հաշվարկի որոշում,
- ▶ Օան. 37 (ի) Հիմնական միջոցներ – հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ,
- ▶ Օան. 25 (ա) Պահուստներ,
- ▶ Օան. 37 (ա) Ակտիվների վերականգման կարողություն,
- ▶ Օան. 37 (ժ) Պաշարներ,
- ▶ Օան. 30 Ֆինանսական գործիքներ և ռիսկերի կառավարում – ֆինանսական գործիքների իրական արժեք,
- ▶ Օան. 21 Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժեզրկում:

2018թ ընթացքում հաշվապահական հաշվառման քաղաքականության և ղեկավարության գնահատումներում փոփոխություններ տեղի չեն ունեցել:

բ) Գնահատումներ և ենթադրություններ

Ապագային վերաբերող առանցքային ենթադրությունները և այլ առանցքային աղբյուրների գնահատման անորոշությանն առնչվող ենթադրությունները հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ, որոնք պարունակում են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքի ճշգրտման նշանակալի ռիսկ, հաջորդ ֆինանսական տարում, ներկայացված են ստորև կամ համապատասխան հաշվապահական քաղաքականության ծանոթագրությունում (հղումների համար տես վերոնշյալ ցուցակը):

Խումբը իր ենթադրությունները և գնահատումները կառուցել է հիմնվելով առանձին ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ժամանակ հասանելի չափանիշների վրա: Ներկա հանգամանքները և ենթադրությունները ապագա զարգացումների վերաբերյալ, այնուամենայնիվ կարող են փոխվել շուկայական փոփոխությունների հետ կապված կամ Խմբի վերահսկողությունից դուրս գտնվող հանգամանքներից ելնելով: Այսպիսի փոփոխությունները, երբ տեղի են ունենում, արտացոլվում են ենթադրություններում:

գ) Հանքաքարի պաշարներ և շահագործման լիցենզիա

Հանքաքարի պաշարների և հանքային ռեսուրսները գնահատվել են այն չափով, որքանով հնարավոր է տնտեսապես և իրավական հիմունքներով արդյունահանումը Խմբի հանքերից: Այսպիսի պաշարների և հանքային ռեսուրսների գնահատումները և փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ Խմբի հրապարակված համախմբված ֆինանսական վիճակի և արդյունքների վրա հետևյալ կերպ:

- ▶ Ապագա դրամական հոսքերի գնահատման փոփոխությունը կարող է ազդել հիմնական միջոցների, մակաբաժան գործունեության ակտիվների և հետախուզման և գնահատման գործունեության ակտիվների հաշվեկշռային արժեքների վրա:
- ▶ Մաշվածությունը և ամորտիզացիան կարող են փոխվել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, որտեղ այսպիսի ծախսերը որոշվում են թողարկված միավորի հիման վրա կամ որտեղ համապատասխան ակտիվների օգտակար ծառայության ժամկետներն են փոխվում:
- ▶ Մակաբաժան ծախսումները, որոնք՝ կապիտալացվել են որպես հիմնական միջոցների մաս կամ այլ ոչ ընթացիկ ակտիվների կամ պաշարների մաս ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կամ ծախսագրվել են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, կարող են փոխվել՝ պայմանավորված մակաբաժան գործակիցների փոփոխությամբ:
- ▶ Տեղանքի վերականգնման կամ բնապահպանական պահուստները կարող են փոխվել, երբ պաշարների գնահատման փոփոխությունը ազդեցություն է ունենում այս գործողությունների սկսելու ժամանակի և ծախսերի մեծության վրա:
- ▶ Հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը և հաշվեկշռային արժեքը կարող է փոխվել՝ պայմանավորված այս ակտիվների գոյության վերաբերյալ դատողությունների և հավանական վերականգնումների վերաբերյալ գնահատումների փոփոխություններով:

4. Նշանակալի դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ (շարունակություն)**գ) Հանքաքարի պաշարներ և շահագործման լիցենզիա (շարունակություն)**

Խումբը գործում է մինչև 2041թ-ը գործող լիցենզիայի ներքո՝ համաձայն համար PV-232 լիցենզիայի պայմանագրի՝ կնքված 2012թ-ի նոյեմբերի 27-ին: Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս դեկլարությունը առաջնորդվել է այն ենթադրությամբ, որ լիցենզիայի գործողության ժամկետը կերկարաձգվի 2041թ-ից ավել: Այս ենթադրությունը հիմնված է Հնդերքի մասին օրենսգրքի դրույթների վրա, որոնք նախատեսում են լիցենզիայի երկարաձգում՝ հիմնված ներկայացված դիմումի վրա:

Խումբն ուներ նաև Հանքասարի, Սյունիքի մարզ, մերձակայքում գտնվող հանքի հետախուզման լիցենզիա մինչև 2017թ.-ի օգոստոսը:

Ի լրումն՝ Խումբը ստացել է JORC-ի համապատասխան հանքային ռեսուրսների գնահատման NI43-101 հաշվետվությունը՝ թողարկված Golder Associates-ի կողմից 2015թ-ի հոկտեմբերին:

Խումբը օգտագործում է վերոնշյալ գնահատումները տեղանքի վերականգնման ծախսերի ժամանակացույցի, հիմնական միջոցների, մակաբացման գործունեության ակտիվի և հետախուզման և գնահատման գործունեության ակտիվների օգտակար ծառայության ժամկետների և արժեզրկման գնահատման համար:

5. Հասույթ

<i>հազ.դրամ</i>	<i>2018թ.</i>	<i>2017թ.</i>
Հասույթ պղնձի խտանյութի վաճառքից	134,067,520	146,189,567
Հասույթ ֆերոմոլիբդենի վաճառքից	60,090,531	39,716,526
Հասույթ պղնձի խտանյութի առաքման ծառայությունից	3,552,742	2,396,443
Հասույթ մատուցված մակաբացման ծառայությունից	2,086,000	–
Հասույթ այլ արտադրանքի վաճառքից	104,142	250,709
	199,900,935	188,553,245

Հասույթ պղնձի խտանյութի և ֆերոմոլիբդենի վաճառքից.

	<i>2018թ.</i>		<i>2017թ.</i>	
	<i>հազ. դրամ</i>	<i>Չոր մետրիկ տոննա</i>	<i>հազ. դրամ</i>	<i>Չոր մետրիկ տոննա</i>
Պղնձի խտանյութ	134,067,520	242,871	146,189,567	260,646
Ֆերոմոլիբդեն	60,090,531	6,980	39,716,526	6,520
	194,158,051		185,906,093	

Պղնձի խտանյութի և ֆերոմոլիբդենի վաճառքից եկամուտը ճանաչվում է ժամանակի այն պահին, երբ բոլոր ռիսկերը և իրավունքները փոխանցվում են (տես Ծան. 34), իսկ առաքումից եկամուտը ճանաչվում է ժամանակի այն պահին, երբ ծառայությունը փաստացի մատուցված է:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ 22,805,390 հազար դրամ գումարով պայմանականորեն գնանշվող վաճառք, որը բաղկացած էր 18,561 չոր մետրիկ տոննա պղնձի խտանյութից, 893 չոր մետրիկ տոննա ֆերոմոլիբդենից (2017թ-ին՝ 27,610,249 հազար դրամ՝ բաղկացած 29,946 չոր մետրիկ տոննա պղնձի խտանյութից և 651 չոր մետրիկ տոննա մոլիբդենի խտանյութից), որի իրական արժեքը կազմում էր մոտավորապես 22,336,268 հազար դրամ (2017թ-ին՝ 29,969,364 հազար դրամ):

6. Վաճառքի ինքնարժեք

<i>հազ. դրամ</i>	<i>2018թ.</i>	<i>2018թ.</i>
Պղնձի խտանյութի և ֆերոմոլիբդենի վաճառքի ինքնարժեք	102,210,290	98,576,113
Մատուցված ծառայությունների ինքնարժեք	649,266	
Այլ վաճառքների ինքնարժեք	227,739	260,199
	103,087,295	98,836,312

Պղնձի խտանյութի և ֆերոմոլիբդենի վաճառքի ինքնարժեք.

<i>հազ. դրամ</i>	<i>2018թ.</i>	<i>2018թ.</i>
Նյութեր	30,510,915	30,172,381
Մտացված ծառայություններ	19,831,873	19,631,776
Աշխատավարձ	17,312,329	14,007,048
Վերամշակման ծախսումներ	13,230,281	12,117,971
Մաշվածություն	10,555,435	10,906,874
Էլեկտրականություն և գազ	10,386,107	11,302,121
Բնապահպանական հարկեր	49,483	55,308
Այլ	333,867	382,634
	102,210,290	98,576,113

Մատուցված մակաբացման ծառայության ինքնարժեքը ներառում է աշխատավարձի անուղակի ծախսեր 115,000 հազար ՀՀ դրամի չափով (2017՝ զրո) (տես Ծան. 12) և մաշվածության ծախսեր 63,334 հազար ՀՀ դրամի չափով (2017՝ զրո) (տես Ծան. 14):

7. Իրացման ծախսեր

<i>հազ. դրամ</i>	<i>2018թ.</i>	<i>2017թ.</i>
Պղնձի խտանյութի փոխադրման ծախսեր	8,877,543	9,158,401
Մոլիբդենի խտանյութի փոխադրման ծախսեր	241,862	211,742
Փաթեթավորման, տեսակավորման և պահպանման ծախսեր	224,982	200,084
Այլ	908,590	727,899
	10,252,977	10,298,126

Փաթեթավորման, տեսակավորման և պահպանման ծախսերը ներառում են 122,207 հազար դրամ գումարով անուղակի աշխատավարձի գծով ծախսեր (2017թ. -ին՝ 89,959 հազար դրամ) (տես Ծան. 12): Փաթեթավորման, տեսակավորման և պահպանման ծախսերը չեն ներառում մաշվածության ծախսեր 2018թ. -ի համար (2017թ. -ին՝ զրո) (տես Ծան. 14):

8. Վարչական ծախսեր

<i>հազ. դրամ</i>	<i>2018թ.</i>	<i>2017թ.</i>
Աշխատավարձ	5,115,737	4,704,861
Տրանսպորտային և ավտոմեքենաների սպասարկման ծախսեր	2,254,118	1,760,472
Առևտրի, խորհրդատվական և այլ մասնագիտական ծառայություններ	1,715,438	951,682
Երկրաբանական ուսումնասիրություններ և հետախուզություններ	1,397,077	1,605,603
Ապահովագրության ծախսեր և բանկային ծառայությունների վճարներ	723,494	647,538
Վարձակալական ծախսեր	455,623	101,049
Գրասենյակային, կոմունալ և տեղեկատվական ծախսեր	431,466	380,215
Գործուղման, վերապատրաստման և ներկայացուցչական ծախսեր	383,224	231,792
Մաշվածության, ամորտիզացիայի և պահպանման ծախսեր	341,093	218,018
Հեջավորման միջնորդավճարի գծով ծախսեր	161,354	201,664
Երաշխավորության գծով ծախսեր	25,827	544,909
Այլ	1,334,861	1,315,613
	14,339,312	12,663,416

8. Վարչական ծախսեր (շարունակություն)

Տրանսպորտային և ավտոմեքենաների սպասարկման ծախսերը ներառում են 559,481 հազար դրամ գումարով անուղղակի աշխատավարձի գծով ծախսեր (2017թ.-ին՝ 243,852 հազար դրամ) (տես Ծան. 12) և 324,706 հազար դրամ գումարով մաշվածության ծախսեր (2017թ.-ին՝ 237,787 հազար դրամ) (տես Ծան. 14):

9. Նվիրատվություններ սոցիալական ծրագրերին

<i>հազ. դրամ</i>	<i>2018թ.</i>	<i>2017թ.</i>
Նվիրատվության ձևով տրամադրված դրամական միջոցներ	5,203,683	3,412,860
Նվիրատվության ձևով տրամադրված հիմնական միջոցներ և պաշարներ	2,696,417	68,774
	7,900,100	3,481,634

Խումբը հատկացումներ է կատարում տարբեր սոցիալական ծրագրերին ու հաստատություններին:

10. Այլ ծախսեր

<i>հազ. դրամ</i>	<i>2018թ.</i>	<i>2017թ.</i>
Ռոյալթիի գծով ծախս	20,566,081	17,842,943
Աշխատավարձ	2,462,701	1,014,922
Հետախուզման և գնահատման ակտիվի արժեզրկում	2,438,081	–
Հանքարդյունաբերության ակտիվների արժեզրկում	1,845,992	–
Կանխավճարների և դեբիտորական պարտքերի դուրսգրում	1,190,513	–
Աշխատակիցների հատուցումներ՝ բացառությամբ աշխատավարձի	804,819	840,500
Հարկեր՝ բացառությամբ շահութահարկի	730,620	554,775
Մաշվածություն	569,711	630,242
Հիմնական միջոցների օտարումից վնաս	525,496	1,074,756
Վարձակալության գծով ծախսեր	507,000	–
Պաշարների դուրսգրում	332,343	326,910
Տեղանքի վերականգնման պահուստ	230,740	–
Տույժեր և տուգանքներ	10,299	764,647
Արձակման նպաստներ	–	114,182
Այլ	139,476	1,207,821
	32,353,872	24,371,698

* Ռոյալթիի գծով ծախսը բաղկացած է երկու բաղադրիչից.

- ▶ հասույթի 4%-ի չափով հաշվարկված ռոյալթի 8,703,905 հազար դրամ գումարով (2017թ.-ին՝ 7,738,382 հազար դրամ),
- ▶ հարկվող շահույթի 12.5%-ի չափով հաշվարկված ռոյալթի 11,862,176 հազար դրամ գումարով (2017թ.-ին՝ 9,681,602 հազար դրամ):

Հասույթի ու հարկվող շահույթի գծով ճշգրտումները կատարվել են կիրառելի օրենքների և կանոնակարգերի ուղեցույցների ու պահանջների համաձայն:

2017թ.-ին Խումբը ճանաչել է ռոյալթիի գծով ծախս, կապված նախորդ ժամանակաշրջանների հետ՝ 422,959 հազար դրամի չափով:

11. Ֆինանսական եկամուտ և ֆինանսական ծախսեր

<i>հազ. դրամ</i>	<i>2018թ.</i>	<i>2017թ.</i>
Շահույթում կամ վնասում ճանաչված		
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից գուտ շահույթ	3,093,339	–
Տոկոսային եկամուտ տրամադրված փոխառությունների գծով	465,810	123,363
Եկամուտ Արցախի ՀԷԿ ԲԲԸ-ի մասնակցության շահաբաժիններից (Ծան. 16)	65,793	151,325
Տոկոսային եկամուտ բանկային հաշիվների գծով	48,986	37,980
Ֆինանսական եկամուտ	3,673,928	312,668
Տոկոսային ծախս վարկերի և փոխառությունների գծով	(10,163,140)	(6,635,138)
Տոկոսային ծախս պայմանականորեն գնանշվող վաճառքների գծով ստացված կանխավճարների գծով	(1,570,299)	(1,740,300)
Տեղանքի վերականգնման պահուստի և արձակման նպաստների պահուստի գծով զեղչի ծախսագրում	(332,407)	(437,161)
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից գուտ վնաս	–	(14,837,967)
Այլ տոկոսային ծախսեր	(329,899)	(14,226)
Ֆինանսական ծախսեր	(12,395,745)	(23,664,792)
Ժամանակաշրջանի ընթացքում կապիտալացված փոխառության ծախսումներ	(586,972)	(1,667,601)

Կապիտալացման ենթակա փոխառության ծախսումների գումարը հաշվարկելու համար օգտագործվել է 12.72% կապիտալացման դրույքը (2017թ.-ին՝ 11.60%): Կապիտալացման դրույքը սահմանվել է որպես Խմբի 2018թ. փոխառությունների նկատմամբ կիրառելի փոխառությունների ծախսումների կշռված միջինը:

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից գուտ շահույթը բաղկացած է ճանաչված վնասից՝ 4,390,165 հազար դրամ (2017թ.՝ վնաս 8,216,127 հազար դրամ) և չճանաչված շահույթից՝ 7,483,504 հազար դրամ (2017թ.՝ վնաս 6,621,840 հազար դրամ):

12. Աշխատակազմի գծով ծախսեր

<i>հազ. դրամ</i>	<i>2018թ.</i>	<i>2017թ.</i>
Աշխատավարձ	29,280,293	21,908,081
Աշխատակիցների հատուցումներ՝ բացառությամբ աշխատավարձի (Ծան. 10)	804,819	840,500
Արձակման նպաստներ (Ծան. 25)	–	114,183
	30,085,112	22,862,764

Աշխատավարձ՝ 17,427,329 հազար դրամ գումարով, ճանաչվել է վաճառված ապրանքների ինքնարժեքի կազմում (2017թ.-ին՝ 14,007,048 հազար դրամ), 122,207 հազար դրամ գումարով՝ իրացման ծախսերի կազմում (2017թ.-ին՝ 89,959 հազար դրամ), 5,675,218 հազար դրամ գումարով՝ վարչական ծախսերի կազմում (2017թ.-ին՝ 4,948,713 հազար դրամ), 2,462,701 հազար դրամ գումարով՝ այլ ծախսերի կազմում (2017թ.-ին՝ 1,041,922 հազար դրամ), 1,158,131 հազար դրամ գումարով կապիտալացվել է անավարտ շինարարությունը (2017թ.-ին՝ 413,580 հազար դրամ), 627,293 հազար դրամ գումարով կապիտալացվել է պատրաստի արտադրանքի և պաշարների վրա (2017թ.-ին՝ 137,018 հազար դրամ), 1,683,754 հազար դրամ գումարով կապիտալացվել է ոչ ընթացիկ պաշարների՝ հանքաքարի պաշարների վրա, (2017թ.-ին՝ 1,180,892 հազար դրամ), 123,660 հազար ՀՀ դրամ (2017: 115,949 հազար ՀՀ դրամ) գումարով, ճանաչվել է հորատման ծառայությունների կազմում:

13. Շահութահարկ**ա) Շահութաբաժնի կամ վնասում ճանաչված գումարներ**

Շահութահարկի գծով ծախսի հիմնական բաղադրիչներն են՝

<i>հազ. դրամ</i>	<i>2018թ.</i>	<i>2017թ.</i>
Շահութահարկի գծով ծախս	11,203,277	4,646,217
Նախորդ ժամանակաշրջանի շահութահարկի ճշգրտում	–	170,133
Հետաձգված հարկերի գծով ժամանակավոր տարբերությունների առաջացում և վերականգնում	(2,469,434)	447,999
Շահութահարկի գծով ծախս	8,733,843	5,264,349

ՀՀ իրավաբանական անձիք պարտավոր են ինքնուրույն ներկայացնել հարկային հաշվետվություններ: Հայկական ընկերությունների համար շահութահարկի դրույքաչափը 2018 և 2017 թթ. համար կազմել է 20%:

Շահութահարկի արդյունավետ դրույքաչափը տարբերվում է շահութահարկի՝ օրենքով սահմանված դրույքաչափից: Օրենքով սահմանված դրույքաչափի հիման վրա շահութահարկի գծով ծախսի համաձայնեցումը իրականի հետ հետևյալն է.

<i>հազ. դրամ</i>	<i>2018թ.</i>	<i>2017թ.</i>
Շահույթ նախքան շահութահարկը	24,272,085	16,109,919
Օրենքով սահմանված հարկի դրույքաչափ	20%	20%
Շահութահարկի գծով ծախս՝ օրենքով սահմանված դրույքաչափով	4,854,417	3,221,984
Չնվազեցվող ծախսեր		
Հիմնական միջոցների հարկային բազայի փոփոխություն՝ հարկային օրենսդրության փոփոխության պատճառով	(1,285,782)	
Ստացված կանխավճարների հարկային բազայի ճշգրտում՝ հարկային օրենսդրության փոփոխության պատճառով	180,709	
Հետաձգված հարկային ակտիվ ճանաչված 2017 թ. -ին հիմնական միջոցների գնահատված հարկային արժեքի աճի պատճառով	–	(1,038,395)
Նախորդ ժամանակաշրջանի ընթացիկ եկամտահարկի գծով ճշգրտումներ	–	170,133
Հաջորդ ժամանակաշրջանի փոխանցված հարկային վնասի հակադարձում	–	421,913
Չճանաչված նվազեցվող ժամանակավոր տարբերությունների և հարկային վնասների փոփոխություն	76,389	78,632
Այլ չնվազեցվող ծախսեր	4,908,110	2,410,082
	8,733,843	5,264,349

13. Շահութահարկ (շարունակություն)**բ) Ժամանակավոր տարբերությունների շարժը տարվա ընթացքում**

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները դեկտեմբերի 31-ի դրությամբ և դրանց շարժը համապատասխան տարիների համար ներկայացված է ստորև.

	<i>1 հունվարի 2017թ.</i>	<i>Ժամանակավոր տարբերությ- ունների առաջացում և հակադարձում</i>	<i>31 դեկտեմբերի 2017թ.</i>	<i>Մկզբնական մնացորդի վերաչափում</i>	<i>Ժամանակավոր տարբերությ- ունների առաջացում և հակադարձում</i>	<i>31 դեկտեմբերի 2018թ.</i>
Հարկվող ժամանակավոր տարբերությունների հարկային ազդեցություն՝						
Պաշարներ	199,422	(47,105)	152,317	–	123,833	276,150
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	–	–	–	258,494	(114,399)	144,095
Տրված կանխավճարներ ընթացիկ ակտիվների գծով	–	–	–	–	44,397	44,397
Տրամադրված փոխառություններ	–	–	–	–	35,500	35,500
Տեղանքի վերականգնման պահուստ	616,387	(53,416)	562,971	–	22,569	585,540
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	–	(146,887)	(146,887)	–	681,784	534,897
Հետաձգված հարկային ակտիվ	815,809	(247,408)	568,401	258,494	793,684	1,620,579
Հարկվող ժամանակավոր տարբերությունների հարկային ազդեցություն՝						
Հիմնական միջոցներ	(18,486,589)	1,811,976	(16,674,613)	–	2,221,183	(14,453,430)
Հետախուզման և գնահատման ակտիվներ	(90,857)	–	(90,857)	–	90,857	–
Պայմանականորեն գնանշվող վաճառքների գծով ստացված կանխավճարներ	231,323	(432,543)	(201,220)	–	201,220	–
Վարկեր և փոխառություններ Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	(968,445)	232,373	(736,072)	–	641,643	(94,429)
	98,732	1,329,446	1,428,178	–	(1,479,152)	(50,974)
Հետաձգված հարկային պարտավորություններ	(19,215,836)	2,941,252	(16,274,584)	–	1,675,751	(14,598,833)
Զուտ հետաձգված հարկային պարտավորություններ	(18,400,027)	2,693,844	(15,706,183)	258,494	2,469,435	(12,978,254)

գ) Զճանաչված հետաձգված հարկային ակտիվներ

	<i>1 հունվարի 2017թ.</i>	<i>Ժամանակավոր տարբերությ- ունների առաջացում և հակադարձում</i>	<i>31 դեկտեմբերի 2017թ.</i>	<i>Ժամանակա-վոր տարբերությ- ունների առաջացում և հակադարձում</i>	<i>31 դեկտեմբերի 2018թ.</i>
Հաջորդ ժամանակաշրջան փոխանցված հարկային վնաս	634,660	(21,795)	612,865	(503,373)	109,492
Հիմնական միջոցներ	334,949	(55,059)	279,890	383,798	663,688
Պաշարներ	10,309	(4,927)	5,382	(1,145)	4,237
Տեղանքի վերականգնման պահուստ	–	1,645	1,645	44,330	45,975
Հետաձգված հարկային ակտիվ	979,918	(80,136)	899,782	(76,390)	823,392
Զճանաչված հետաձգված հարկային ակտիվ			(899,782)		(823,392)

Գործող հարկային օրենսդրության համաձայն՝ նվազեցվող ժամանակավոր տարբերությունները գործողության ժամկետ չունեն։ Դուստր ընկերության նվազեցվող ժամանակավոր տարբերությունների և հարկային վնասների գծով հետաձգված հարկային ակտիվներ չեն ձանաչվել, քանի որ անորոշ է, արդյոք կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց Դուստր ընկերությունը կկարողանա իրացնել այդ հոդվածներից ստացված օգուտը:

14. Հիմնական միջոցներ

<i>հազ. դրամ</i>	<i>Հոդ և շենքեր</i>	<i>Մեքենա- սարքավորում- ներ</i>	<i>Հանքարդյու- նաբերական ակտիվներ</i>	<i>Տնտեսական գույք</i>	<i>Անավարտ շինարարութ- յուն</i>	<i>Ընդամենը</i>
Սկզբնական արժեք						
2017թ. հունվարի						
1-ի դրությամբ	66,147,082	181,517,736	2,245,676	808,348	46,050,197	296,769,039
Ավելացումներ	6,001,451	6,406,525	8,226	114,281	7,382,414	19,912,897
Օտարումներ	(768,127)	(3,331,772)	–	(27,484)	(1,393,908)	(5,521,291)
Տեղափոխումներ	317,513	1,537,825	–	–	(1,855,338)	–
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	71,697,919	186,130,314	2,253,902	895,145	50,183,365	311,160,645
2018թ. հունվարի						
1-ի դրությամբ	71,697,919	186,130,314	2,253,902	895,145	50,183,365	311,160,645
Ավելացումներ	887,204	17,596,807	–	231,868	15,486,791	34,202,670
Օտարումներ	(2,449,303)	(2,121,754)	–	(66,541)	(1,102,039)	(5,739,637)
Արժեզրկում	–	–	(1,991,730)	–	–	(1,991,730)
Տեղափոխումներ	2,242,422	3,655,813	–	–	(5,898,235)	–
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	72,378,242	205,261,180	262,172	1,060,472	58,669,882	337,631,948
Մաշվածություն						
2017թ. հունվարի						
1-ի դրությամբ	(15,763,807)	(89,911,525)	(138,776)	(616,573)	–	(106,430,681)
Հաշվետու տարվա մաշվածության	(1,821,156)	(11,287,046)	(35,680)	(79,562)	–	(13,223,444)
Օտարումներ	28,871	2,731,595	–	26,718	–	2,787,184
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(17,556,092)	(98,466,976)	(174,456)	(669,417)	–	(116,866,941)
2018թ. հունվարի						
1-ի դրությամբ	(17,556,092)	(98,466,976)	(174,456)	(669,417)	–	(116,866,941)
Հաշվետու տարվա մաշվածության	(2,043,938)	(11,554,918)	(35,769)	(116,564)	–	(13,751,189)
Օտարումներ	240,005	1,632,307	–	52,564	–	1,924,876
Արժեզրկում	–	–	145,738	–	–	145,738
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(19,360,025)	(108,389,587)	(64,487)	(733,417)	–	(128,547,516)
Զուտ հաշվեկշռային արժեք						
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	54,141,827	87,663,338	2,079,446	225,728	50,183,365	194,293,704
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	53,018,217	96,871,593	197,685	327,055	58,669,882	209,084,432

Մաշվածության ծախսը՝ 10,618,769 հազար դրամ (2017թ.-ին՝ 11,302,121 հազար դրամ) գումարով, ճանաչվել է վաճառված ապրանքների ինքնարժեքի կազմում, 2018թ.-ին իրացման ծախսերը չեն ներառել մաշվածության ծախս (2017թ.-ին՝ զրո), 665,799 հազար դրամ (2017թ.-ին՝ 455,805 հազար դրամ)՝ վարչական ծախսերի կազմում, 569,711 հազար դրամ (2017թ.-ին՝ 630,242 հազար դրամ)՝ այլ ծախսերի կազմում, 1,004,989 հազար դրամ (2017 թ.-ին՝ 440,116 հազար դրամ) կապիտալացվել է ոչ ընթացիկ պաշարների՝ հանքաքարի պաշարներին, 509,035 հազար դրամ (2017թ.-ին՝ 117,079 հազար դրամ) կապիտալացվել է անավարտ շինարարությանը, 383,409 հազար դրամ (2017թ.-ին՝ 179,538 հազար դրամ) կապիտալացվել է պատրաստի արտադրանքին և պաշարներին :

2018թ. ընթացքում 1,158,131 հազար դրամ (2017թ.-ին՝ 413,580 հազար դրամ) գումարով աշխատավարձ կապիտալացվել է անավարտ շինարարությանը (տես Ծան. 12):

2018թ. ընթացքում 586,972 հազար դրամ (2017թ.-ին՝ 1,667,601 հազար դրամ) գումարով փոխառության ծախսումները կապիտալացվել են անավարտ շինարարությանը (տես Ծան. 11):

14. Հիմնական միջոցներ (շարունակություն)

2018թ. ընթացքում տեղանքի վերականգման պահուստի գնահատման փոփոխությունը 585,909 հազար դրամի չափով կապիտալացվել է համապատասխան հիմնական միջոցներին (2017թ.-ին՝ 519,166 հազար դրամ) (տես Ծան. 25):

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 56,701,055 հազար դրամ հաշվեկշռային արժեքով հիմնական միջոցները գրավադրված են գրավով ապահովված բանկային վարկերի դիմաց (տես Ծան. 24):

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վարձակալությամբ տնօրինվող սարքավորումների հաշվեկշռային արժեքը կազմում է 3,162,178 հազար դրամ (2017թ.-ին՝ զրո) (տես Ծան. 28):

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամբողջովին մաշված և օգտագործման մեջ գտնվող հիմնական միջոցների սկզբնական արժեքը կազմում է 56,705,110 հազար դրամ (2017թ.-ին՝ 42,633,886 հազար դրամ):

2013թ. ընթացքում Դուստր ընկերությունը դադարեցրել է արտադրական գործունեությունը և կենտրոնացել է հետախուզման աշխատանքների իրականացման վրա: 2015թ.-ին մետաղների գների նվազման հետևանքով դադարեցվել են նաև հետախուզման աշխատանքները:

Դուստր ընկերությունը դադարեցրել է արտադրությունը և հետախուզման աշխատանքները Հանքասարի հարակից տարածքում: 2018թ.-ի ընթացքում Դուստր ընկերության ղեկավարությունը որոշում կայացրեց փակել հանքը և կենտրոնացնել իր գործունեությունը Ընկերությանը մատուցվող ծառայություններին, որի արդյունքում Դուստր ընկերությունը ճանաչեց հանքարդյունաբերության ակտիվների արժեզրկում՝ 1,845,992 հազար ՀՀ դրամի չափով (2017՝ զրո):

15. Մակաբացման գործունեության ակտիվ

2014թ.-ին Խումբը սկսել է ինտենսիվ մակաբացման գործունեություն Քաջարանի հանքի Շյուրկուտ հատվածում, որտեղ գալիք տարիներին ակնկալվում է արդյունահանել հանքաքար, և նախաարտադրական մակաբացման ծախսումները կապիտալացրել է որպես մակաբացման գործունեության ակտիվ՝ 4,090,780 հազար դրամի չափով: Մակաբացման գործունեություն չի իրականացվել 2018 և 2017թթ.-ին:

16. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ներդրումներ և վաճառքի համար մատչելի ներդրումներ

<i>'000 AMD</i>	<i>2018</i>	<i>2017</i>
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ներդրումներ		
«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ	877,159	–
	877,159	–
հազ. դրամ	2018թ.	2017թ.
Վաճառքի համար մատչելի ներդրումներ		
«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ	–	928,484
	–	928,484

2018թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի ներդրումը «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի կապիտալում («ԱՀԷԿ») կազմել է 6.18% (2017թ.-ին՝ 6.18%): Բաժնետոմսերը ցուցակված են Հայաստանի ֆոնդային բորսայում:

Ներդրման իրական արժեքը որոշվել է գեղչված դրամական հոսքերի մեթոդով, որը դասակարգվում է որպես 3-րդ մակարդակ իրական արժեքի հիերարխիայում (տես Ծան. 30):

Խմբի ենթարկվածությունը պարտքային, արտաբաժնային և տոկոսադրույքի ռիսկերին վաճառքի համար մատչելի ներդրումների հետ կապված ներկայացված է Ծան. 30-ում:

17. Հետախուզման և գնահատման ակտիվներ

2018թ. Խումբը դադարեցրել է արտադրությունը և հետախուզման աշխատանքները Հանքասար հանքի շրջակայքում, և այս որոշմամբ պայմանավորված ճանաչել է հետախուզման և գնահատման ակտիվի արժեզրկում 2,438,081 հազար ՀՀ դրամի չափով (տես Ծան. 10):

18. Կանխավճարներ

<i>հազ. դրամ</i>	<i>2018թ.</i>	<i>2017թ.</i>
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով		
Կանխավճարներ հիմնական միջոցների գծով	2,864,177	6,379,570
Կանխավճարներ հողի վարձակալության գծով	488,265	345,324
	3,352,442	6,724,894
Կանխավճարներ ընթացիկ ակտիվների գծով		
Կանխավճարներ պաշարների գծով	4,174,620	4,705,034
Կանխավճարներ ծառայությունների գծով	2,131,129	3,157,429
Այլ կանխավճարների գծով	499,255	287,710
	6,805,004	8,150,173
	10,157,446	14,875,067

19. Տրամադրված փոխառություններ

2018թ. հունվարին Խումբն իր մայր կազմակերպության հետ կնքել է ընդհանուր 19,231 հազար ԱՄՆ դոլարի չափով փոխառությունների տրամադրման պայմանագիր 1 ամսվա LIBOR+4.95 % տարեկան տոկոսադրույքով, մինչև 2021թ.-ի Հունվարը մարման ժամկետով: 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ տրված փոխառությունների ընդհանուր հաշվեկշռային արժեքը կազմում է 8,915,150 հազար ՀՀ դրամ:

Խմբի ենթարկվածությունը փոխարժեքի և տոկոսադրույքի ռիսկերին և ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայունության վերլուծությունը նկարագրված է Ծան. 30-ում:

Ակնկալվող վարկային կորուստների չափման նպատակներով տրված փոխառությունները դասակարգված են 1-ին փուլում: 2018թ.-ի ընթացքում փուլերի միջև տեղափոխություններ տեղի չեն ունեցել: Տրամադրված փոխառությունների գծով հաշվարկված ակնկալվող վարկային կորուստների չափը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 177,498 հազար ՀՀ դրամ (2017՝ զրո):

20. Պաշարներ

<i>հազ. դրամ</i>	<i>2018թ.</i>	<i>2017թ.</i>
Պահեստամասեր	8,309,876	5,724,135
Հումք և սպառողական նյութեր	4,984,650	4,480,874
Պատրաստի արտադրանք	2,676,212	1,882,696
Մշակման հանձնված մոլիբդենի խտանյութ*	2,540,296	32,271
Շինանյութ	218,382	123,973
Այլ	1,702,268	907,922
Ընդամենը ընթացիկ պաշարներ	20,431,684	13,151,871
Ոչ ընթացիկ պաշարներ – հանքաքարի պաշարներ**	12,469,763	3,794,527
Ընդամենը պաշարներ՝ սկզբնական արժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով	32,901,447	16,946,398

* Խումբը ծառայությունների մատուցման պայմանագրեր է ստորագրել կապակցված կողմերի հետ մոլիբդենի խտանյութը ֆերոմոլիբդենի վերամշակելու համար: Վերամշակման ընթացքում Խումբը պահպանում է սեփականության իրավունքը: Մտացված վերամշակման ծառայությունների գծով համապատասխան ծախսերը ներկայացված են Ծան. 6-ում:

** Ոչ ընթացիկ պաշարները ներկայացնում են մետաղի ցածր պարունակությամբ հանքաքար, որը հնարավոր չէ տնտեսապես արդյունավետ վերամշակել ներկայիս շուկայական գների պայմաններում, և պահուստավորվել է հետագայում վերամշակման նպատակով:

2018թ.-ի ընթացքում 332,343 հազար դրամ (2017թ.-ին՝ 326,910 հազար դրամ) ճանաչվել է որպես գուտ իրացման արժեքով հաշվառվող պաշարների արժեքի նվազեցման ծախս, ինչը արտացոլվել է այլ ծախսերում (տես Ծան. 10):

Աշխատավարձ 627,293 հազար դրամ գումարով (2017թ.-ին՝ 137,018 հազար դրամ) (տես Ծան. 12), և մաշվածություն՝ 383,409 հազար դրամ գումարով (2017թ.-ին՝ 179,538 հազար դրամ) (տես Ծան. 14), կապիտալացվել են ընթացիկ պաշարների և պատրաստի արտադրանքի հաշվեկշռային արժեքին:

Աշխատավարձ 1,683,754 հազար դրամ գումարով (2017թ.-ին՝ 1,180,892 հազար դրամ) (տես Ծան. 12), և մաշվածություն՝ 1,004,989 հազար դրամ գումարով (2017թ.-ին՝ 440,116 հազար դրամ), կապիտալացվել է ոչ ընթացիկ պաշարների՝ հանքաքարի պաշարների հաշվեկշռային արժեքին (տես Ծան. 14):

21. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

<i>'000 AMD</i>	<i>2018թ.</i>	<i>2017թ.</i>
Առևտրային դեբիտորական պարտքեր (ոչ ենթակա պայմանական գնանշման) – ամորտիզացված արժեք	8,816,361	1,021,612
Առևտրային դեբիտորական պարտքեր (ենթակա պայմանական գնանշման) – իրական արժեք	923,451	11,133,866
Այլ դեբիտորական պարտքեր	558,158	1,424,380
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	10,297,970	13,579,858
Ակնկալվող վարկային կորուստներ	(697,150)	–
Ընդհանուր առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	9,600,820	13,579,858

Առևտրային դեբիտորական պարտքերը (ոչ ենթակա պայմանական գնանշման) ոչ տոկոսակիր են և հիմնականում ունեն մինչև 1 տարի ժամկետայնություն:

Առևտրային դեբիտորական պարտքերը (ենթակա պայմանական գնանշման) ոչ տոկոսակիր են, սակայն, ինչպես նկարագրված է Ծան. 34-ում, գնորդման ժամանակաշրջանում ենթարկվում են ապրանքների ապագա գների փոփոխության և, հետևաբար, չեն անցնում «բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ» (SPPI) թեստը և մինչև մարման ամսաթիվը չափվում են իրական արժեքով: Այս առևտրային դեբիտորական պարտքերը սկզբնապես չափվում են այն գումարի չափով, որքան Խումբը ակնկալում է ստանալ, որն է՝ գնորդման ժամանակաշրջանի վերջում Խմբի կողմից ակնկալվող ստացվելիք գնի գնահատումը:

21. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր (շարունակություն)

Նախնական հաշիվ-ապրանքագրի մոտավորապես 90%-ը (հիմք ընդունելով պայմանական գինը (պղնձի համար հաշվարկվում է որպես առաքումից մեկ շաբաթ առաջվա միջին գինը, իսկ մոլիբդենի համար՝ որպես առաքումից մեկ ամիս առաջվա միջին գինը)) ստացվում է կանխիկ, երբ ապրանքները բեռնվում են, որը նվազեցնում է ՖՀՄՍ 15-ի համաձայն ճանաչված սկզբնական դեբիտորական պարտքի չափը: Գնորոշման ժամանակաշրջանները կարող են տատանվել առաքումից հետո մեկից երկու ամսվա միջև, իսկ վերջնական վճարումն իրականացվում է գնորոշման ժամանակաշրջանից հետո 30-60 օրերի ընթացքում: Իրական արժեքի հետ կապված բացահայտումների մանրամասները ներկայացված են Ծան. 30-ում:

Ստորև ներկայացված է առևտրային դեբիտորական պարտքերի (ոչ ենթակա պայմանական գնանշման) ակնկալվող վարկային կորուստների պահուստի տեղաշարժը 2018թ.-ի ընթացքում:

<i>'000 ՀՀ դրամ</i>	<i>2018</i>
2018թ.-ի հունվարի 1-ի դրությամբ	(479,877)
Նոր ձևավորված ակտիվներ	(525,087)
Մարում	301,573
Դուրս գրված ակտիվներ	6,241
2018թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ	(697,150)

Ստորև ներկայացված է Խմբի վարկային ռիսկին ենթակա դեբիտորական պարտքերի (ոչ ենթակա պայմանական գնորոշման) մասին տեղեկատվությունը:

<i>'000 AMD</i>	<i>Մինչև 3 ամիս</i>	<i>3-ից 6 ամիս</i>	<i>6-ից 9 ամիս</i>	<i>9-ից 12 ամիս</i>	<i>1 տարուց ավել</i>	<i>Ընդամենը</i>
31 հունվար 2018						
Համախառն հաշվեկշռային արժեք	2,113,143	864,726	2,975,557	2,368,474	1,052,619	9,374,519
Ակնկալվող վարկային կորուստ	(95,322)	(27,665)	(117,761)	(40,083)	(416,319)	(697,150)
Զուտ հաշվեկշռային արժեք	2,017,821	837,061	2,857,796	2,328,391	636,300	8,677,369

<i>'000 AMD</i>	<i>Մինչև 3 ամիս</i>	<i>3-ից 6 ամիս</i>	<i>6-ից 9 ամիս</i>	<i>9-ից 12 ամիս</i>	<i>1 տարուց ավել</i>	<i>Ընդամենը</i>
1 հունվար 2018						
Համախառն հաշվեկշռային արժեք	733,364	52,720	107,149	1,071,439	481,320	2,445,992
Ակնկալվող վարկային կորուստ	(13,854)	(1,986)	(1,760)	(61,087)	(401,190)	(479,877)
Զուտ հաշվեկշռային արժեք	719,510	50,734	105,389	1,010,352	80,130	1,966,115

Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս ֆինանսական արդյունքների մասին համապարփակ հաշվետվությունում անսկսկալվող վարկային կորուստների գծով ծախսը 2018թ դեկտեմբերի 31-ի դրությամբ:

<i>Առևտրային դեբիտորական պարտքեր (ոչ ենթակա պայմանական գնորոշման)</i>	<i>Փուլ 1 ՀՀ դրամ'000</i>	<i>Փուլ 2 ՀՀ դրամ'000</i>	<i>Փուլ 3 ՀՀ դրամ'000</i>	<i>Ընդամենը ՀՀ դրամ'000</i>
Ակնկալվող վարկային կորուստների գծով ծախս 2018 հունվարի 1-ի դրությամբ	17,600	74,991	387,286	479,877
Ակնկալվող վարկային կորուստների գծով ծախս 2018 դեկտեմբերի 1-ի դրությամբ	240,748	69,116	387,286	697,150

22. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

հազ. դրամ	2018թ.	2017թ.
Բանկային հաշիվների մնացորդներ	525,217	5,678,228
Կանխիկը դրամարկղում	10	342
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	525,227	5,678,570

Խմբի ենթարկվածությունն արտարժույթի և տոկոսադրույքի ռիսկերին և ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների զգայունության վերլուծությունը ներկայացված են Ծան. 30-ում:

23. Կապիտալ և պահուստներ**ա) Կանոնադրական կապիտալ**

	<i>Սովորական բաժնետոմսեր</i>	
<i>Բաժնետոմսերի քանակը, եթե այլ տեղեկատվություն նշված չէ</i>	<i>2018թ.</i>	<i>2017թ.</i>
Անվանական արժեք	20,000 ՀՀ դրամ	20,000 ՀՀ դրամ
Հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ թողարկված, ամբողջովին վճարված	2,748,334	2,748,334

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Խմբի բաժնետերերի ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

բ) Շահաբաժիններ

ՀՀ օրենսդրության համաձայն Խմբի բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են Խմբի ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվություններում գրանցված կուտակված շահույթի մնացորդով՝ բացառությամբ կուտակված շահույթի գծով գործող ստորև ներկայացված սահմանափակումների:

24. Վարկեր և փոխառություններ

Այս ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն Խմբի ամորտիզացված արժեքով չափվող տոկոսակիր վարկերի և փոխառությունների պայմանագրային պայմանների մասին: Տոկոսադրույքի, արտարժույթի և իրացվելիության ռիսկերին Խմբի ենթարկվածության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Ծան. 29-ում:

հազ. դրամ	2018թ.	2017թ.
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Գրավով ապահովված բանկային վարկեր և վարկային գծեր/օվերդրաֆտներ	23,757,102	43,680,955
Գրավով չապահովված փոխառություն բաժնետիրոջից	–	5,625,994
	23,757,102	49,306,949
Ընթացիկ պարտավորություններ		
Գրավով ապահովված բանկային վարկեր և վարկային գծեր/օվերդրաֆտներ	16,950,204	22,831,584
Գրավով չապահովված վարկեր այլ կազմակերպություններից	26,641,315	–
	43,591,519	22,831,584

Խումբը 2016թ մարտին ստորագրել է վարկային գծի պայմանագիր հայկական բանկերից մեկի հետ՝ 10,000 հազար ԱՄՆ դոլար առավելագույն սահմանաչափով, 2020թ. մարման ժամկետով: 2018թ ի ընթացքում գործող պայմանագրի վերանայման արդյունքում վարկային սահմանաչափը նվազեցվել է 8,000 հազար ԱՄՆ դոլար: Վարկային գծի պայմանագրի շրջանակներում Խումբը չունի օգտագործված մաս 2018թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ (2017՝ 4,405,310 հազար ՀՀ դրամ): Վարկային գծի համար ապահովություն են ծառայում Խմբի բանկային հաշիվների մնացորդները և հոդերը:

24. Վարկեր և փոխառություններ (շարունակություն)

Գրավով ապահովված բանկային վարկերը ներառում են երկու վարկային պայմանագրեր հայկական բանկերի հետ՝ կնքված 2018թ.-ին, 2019թ. հունիս և 2023թ ապրիլ մարման ժամկետներով, որոնց մնացորդը կազմում է համապատասխանաբար՝ 6,332,864 հազար և 23,757,102 հազար ՀՀ դրամ:

Գրավով ապահովված բանկային վարկերը ներառում են նաև օվերդրաֆտներ երկու հայկական բանկերից՝ 13,000 հազար ԱՄՆ դոլար և 13,400 հազար ԱՄՆ դոլար առավելագույն սահմանաչափերով: Օվերդրաֆտների պայմանագրերի շրջանակներում 2018թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ խումբը ստացել է համապատասխանաբար 5,713,241 հազար (2017: 2,983,154 հազար դրամ) և 4,914,099 հազար դրամի չափով վարկեր (2017: 3,539,221 հազար դրամ): Օվերդրաֆտի պայմանագրերը մարվում են համապատասխանաբար 2020թ.-ի սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին: Վերոնշյալ վարկերի մնացորդները առ 2018թ.-ի դեկտեմբերի 31-ը դասակարգված են որպես ընթացիկ պարտավորություններ՝ համաձայն օվերդրաֆտի պայմանագրերի՝ օգտագործված մասերը պետք է մարվեն կանխիկացման պահից 1 տարվա ընթացքում:

Գրավով ապահովված բանկային վարկերը և վարկային գծերը տրամադրված են միևնույն հայկական բանկերից և ապահովված են խմբի բանկային հաշիվների մնացորդներով և հողերով (տես Ծան. 14):

Պայմաններ և մարման ժամկետներ

Ստորև ներկայացված են դեռևս չմարված վարկերի և փոխառությունների պայմանները:

<i>հազ. դրամ</i>	<i>Արժույթ</i>	<i>Անվանական տոկոսադր.</i>	<i>Սպասվող մարման տարի</i>	<i>Անվանական արժեք</i>	<i>Հաշվեկշռային արժեք</i>
31 դեկտեմբերի 2018թ.	ԱՄՆ				
Գրավով ապահովված վարկ	դոլար	9%	2019-2023	30,552,113	30,079,966
	ԱՄՆ				
Գրավով ապահովված օվերդրաֆտ	դոլար	9%	2020	10,627,340	10,627,340
Գրավով չապահովված վարկեր ոչ ֆինանսական հաստատություններից	դոլար	8%-10%	2019-2023	26,641,314	26,641,315
Ընդամենը տոկոսակիր պարտավորություններ				67,820,767	67,348,621

<i>հազ. դրամ</i>	<i>Արժույթ</i>	<i>Անվանական տոկոսադր.</i>	<i>Սպասվող մարման տարի</i>	<i>Անվանական արժեք</i>	<i>Հաշվեկշռային արժեք</i>
31 դեկտեմբերի 2017թ.	ԱՄՆ				
Գրավով ապահովված բանկային վարկ	դոլար	Libor + 6.5%	2021	59,478,206	55,554,439
	ԱՄՆ				
Գրավով ապահովված օվերդրաֆտ	դոլար	9%	2020	6,522,375	6,522,375
Գրավով չապահովված փոխառություն բաժնետերերից	դոլար	Libor + 4.95%	2021	5,625,994	5,625,994
	ԱՄՆ				
Գրավով ապահովված վարկային գիծ	դոլար	9%	2019	4,435,725	4,435,725
Ընդամենը տոկոսակիր պարտավորություններ				76,062,300	72,138,533

25. Պահուստներ

<i>հազ. դրամ</i>	<i>Տեղանքի վերականգնման գծով պահուստ</i>	<i>Աշխատանքների արձակման նպաստներ</i>	<i>Ընդամենը</i>
Ոչ ընթացիկ	2,672,272	463,859	3,136,131
Ընթացիկ	150,812	402,650	553,462
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	2,823,084	866,509	3,689,593
Տարվա ընթացքում օգտագործված պահուստ	(743,452)	(411,668)	(1,155,120)
Փափոխություններ գնահատումներում	585,909	(38,261)	547,648
Լրացուցիչ պահուստների ստեղծում (Ծան. 10)	230,740	–	230,740
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը	–	(1,793)	(1,793)
Զեղչի ծախսագրում (Ծան. 11)	270,384	62,023	332,407
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,166,665	476,810	3,643,475
Ոչ ընթացիկ	3,050,170	186,501	3,236,671
Ընթացիկ	116,495	290,309	406,804

ա) Տեղանքի վերականգնման գծով պահուստ

Արժվանիկ պոչամբար

Խումբը ունի հանքի շահագործման և խտանյութի արտադրության նպատակով օգտագործված պոչամբարի (Արժվանիկի պոչամբար) օգտագործման ընթացքում աղտոտված հողատարածքը վերականգնելու կառուցողական պարտականություն: Արժվանիկի պոչամբարի վերականգնման աշխատանքների պահուստը 2018թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 2,487,446 հազար դրամ (2017թ.-ին՝ 2,482,003 հազար դրամ):

Նշված պարտականությունը կատարելու համար պահանջվող չգեղչված դրամական միջոցների հոսքերի ընդհանուր գումարը գնահատված է 7,786,792 հազար դրամ (2017թ.-ին՝ 7,026,800 հազար դրամ)՝ հաշվի առնելով Հայաստանի համար կանխատեսվող սղաճի միջին դրույքը՝ 3.57% (2017թ.-ին՝ 3.57%): Տասնհինգ տարի ժամկետում կատարվելիք վերականգնման ծախսերի գումարի նկատմամբ կիրառվել է տարեկան գեղչ՝ 10.10% (2017՝ 11.10%): Պահուստի ժամկետները որոշվել են՝ հիմք ընդունելով 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գործող պոչամբարի հետ կապված վերականգնման պարտականության կատարման ժամկետների ղեկավարության գնահատականը: Զեղչի դրույքն իրենից ներկայացնում է ՀՀ կառավարության երկարաժամկետ պարտատոմսերի համար կիրառվող դրույքը:

Պահուստի գումարը աճել է 2017թ. դեկտեմբերի 31-ին ճանաչված գումարի նկատմամբ, պայմանավորված է վերականգնման աշխատանքների գնահատված ծավալի, տարեկան գեղչի և սղաճի դրույքների փոփոխություններով: Գնահատումների այս փոփոխությունները ճանաչվել են առաջընթաց որպես տեղանքի վերականգնման պարտավորության և համապատասխան պարտավորությանը վերաբերող ակտիվի ճշգրտում:

Հանքասարի պոչամբար

Խումբն ունի հանքի շահագործման և խտանյութի արտադրության նպատակով օգտագործված պոչամբարի (Հանքասարի պոչամբար) օգտագործման ընթացքում, աղտոտված հողատարածքը վերականգնելու կառուցողական պարտականություն: Հանքասարի պոչամբարի վերականգնման աշխատանքների պահուստը 2018թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 238,966 (2017՝ 8,226 հազար դրամ):

Նշված պարտականությունը կատարելու համար պահանջվող չգեղչված դրամական միջոցների հոսքերի ընդհանուր գումարը գնահատված է 266,585 հազար դրամ (2017թ.-ին՝ 36,771)՝ հաշվի առնելով Հայաստանի համար կանխատեսվող սղաճի միջին 3.88% դրույքը (2017թ.-ին՝ 3.57%): Երեք տարի ժամկետում կատարվելիք վերականգնման ծախսերի գումարի նկատմամբ կիրառվել է տարեկան 7.4% գեղչ: Պահուստի ժամկետները որոշվել են՝ հիմք ընդունելով 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գործող պոչամբարի հետ կապված վերականգնման պարտականության կատարման ժամկետների ղեկավարության գնահատականը: Զեղչի դրույքն իրենից ներկայացնում է ՀՀ կառավարության երկարաժամկետ պարտատոմսերի համար կիրառվող դրույքը:

25. Պահուստներ (շարունակություն)**ա) Տեղանքի վերականգնման գծով պահուստ (շարունակություն)***Հանքի փակում և թափոնների լցակույտեր*

2013թ. ընթացքում պարզաբանվել և իրավաբանորեն կատարման ենթակա են դարձել` Ընդերքի մասին վերանայված օրենսգրքի համաձայն, հայկական հանքարդյունաբերական ընկերությունների տեղանքի վերականգնման պարտականությունները: Վերանայված օրենսգիրքը սահմանում է համակարգ, որի շրջանակներում Խումբը պետք է վճարումներ կատարի համապատասխան պետական հիմնադրամին: Պահանջվող վճարումների հաշվարկն իրականացվում է առանձին իրավական ակտով` կառավարության կողմից սահմանված բանաձևի համաձայն: 2013թ. փետրվարի 11-ին կառավարությունը հրապարակեց տեղանքի վերականգնման պարտավորության գծով վճարումների հաշվարկին վերաբերող իրավական ակտ, որը պետք է պատրաստվի ղեկավարության կողմից և հաստատվի պետական մարմինների կողմից:

Վերականգնման աշխատանքների ծավալը, ժամկետները և ծախսերը սահմանված են Խմբի Հանքի փակման ծրագրով: Վերականգնման աշխատանքները ներառում են հետևյալ բնույթի գործողություններ. թափոնների լցակույտերի մակերևույթի և լանջերի ռեկուլտիվացիա, բաց հանքի պատերի ամրացում և ռեկուլտիվացիա, լցակույտերի տարածքում ջրահեռացման համակարգի վերականգնում, բաց հանքը, լցակույտերը և գործարանը միացնող ճանապարհների քանդում և հողի ու բուսականության շերտով ծածկում, բոլոր վնասված հողատարածքների վերականգնում, փոսերի լցում:

2018թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ հանքի փակման և թափոնների լցակույտերի վերականգնման աշխատանքների գծով պահուստը կազմել է 440,253 հազար դրամ (2017թ.-ին` 332,855 հազար դրամ):

Պարտավորությունը մարելու համար անհրաժեշտ չգեղչված դրամական հոսքերի ընդհանուր գումարը գնահատվում է 2,943,820 հազար դրամ: 24 տարուց հետո կատարվելիք վերականգնման աշխատանքների ծախսերի գեղչման համար կիրառվել է տարեկան 10.70% գեղչման տոկոսադրույք (2017: 12.30%): Պահուստի ժամկետայնությունը որոշվել է Խմբի Լիցենզիայի պայմանագրով սահմանված ժամկետի հիման վրա: Ձեռքի դրույքն իրենից ներկայացնում է ՀՀ կառավարության երկարաժամկետ պարտատոմսերի համար կիրառվող դրույքը:

բ) Աշխատակիցների արձակման նպաստներ

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ աշխատակիցների արձակման նպաստների գծով պահուստը վերաբերում է Խմբի նախկին ղեկավարությանը 751,902 հազար դրամ (2017թ.-ին` 940,415 հազար դրամ) վճարելու Խմբի պայմանագրային պարտականությանը` 2014թ. հուլիսին վերջիններիս աշխատանքային պայմանագրերի դադարեցման հետ կապված:

1-ից 3 տարի ժամանակաշրջանում կատարման ենթակա վճարումների գեղչման համար կիրառվել է տարեկան 8.62% (2017թ.-ին` 5.8%) գեղչման դրույք` հիմք ընդունելով նոր աշխատանքային պայմանագրերի դադարեցման ժամկետների ղեկավարության գնահատումը:

26. Իրական արժեքով` շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ

Իրական արժեքով` շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվները` 254,868 հազար դրամ գումարով (2017թ.-ին` 7,140,890 հազար դրամ), իրենցից ներկայացնում են մեկ պայմանագրային կողմի հետ (2017թ.-ին` մեկ պայմանագրային կողմ) պղնձի ֆյուչերսների իրական արժեքը:

Խմբի ենթարկվածությունը պարտքային, արտարժույթի և իրացվելիության ռիսկերին շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների հետ կապված ներկայացված է Ծան. 30-ում:

27. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

<i>հազ. դրամ</i>	<i>2018թ.</i>	<i>2017թ.</i>
Պաշարների և հիմնական միջոցների ձեռքբերման համար վճարվելիք գումարներ	18,073,421	11,355,655
Ստացված ծառայությունների գծով վճարվելիք գումարներ	4,490,433	3,532,265
Փակված ածանցյալ գործիքների գծով վճարվելիք գումարներ	–	1,185,032
Իրական արժեքի վերագնահատում պայմանականորեն գնանշվող վաճառքների գծով	740,593	–
Այլ վճարվելիք գումարներ և հաշվեգրված ծախսեր	1,898,234	2,157,744
	25,202,681	18,230,696

Խմբի ենթարկվածությունը պարտքային և արտարժույթի ռիսկերին և առևտրական և այլ կրեդիտորական պարտքերի հետ կապված արժեզրկման կորուստները ներկայացված են Ծան. 30-ում: Խումբն ունի 2.1 մլն ԱՄՆ դոլար պարտավորություններ, որոնց գծով հաշվեգրվում է տոկոս 6% տոկոսադրույքով:

Այլ վճարվելիք գումարներ և հաշվեգրված ծախսերը ներառում են նաև ոչ ֆինանսական պարտավորությունները 44,024 հազար դրամ (2017՝ 560,073 հազար դրամ):

28. Ֆինանսական վարձակալություն

Խումբն ունի ֆինանսական վարձակալության պայմանագրեր տարբեր մեքենասարքավորումների համար: Ֆինանսական վարձակալության պայմանագրերի համաձայն Խմբի պարտավորությունները ապահովված են վարձակալված ակտիվների նկատմամբ վարձատրուի սեփականության իրավունքով: Ֆինանսական վարձակալության պայմանագրերի համաձայն՝ ապագա նվազագույն վարձավճարները, զուտ նվազագույն վարձավճարների ներկա արժեքի հետ միասին հետևյալն են.

<i>‘000 ՀՀ դրամ</i>	<i>2018թ.</i>	
	<i>Նվազագույն վարձավճարներ</i>	
	<i>մինչ դիսկոնտավորում</i>	<i>Ներկա արժեք</i>
Մեկ տարուց մինչև հինգ տարի	800,579	717,857
Հինգ տարուց ավել	2,956,207	2,347,607
Ընդամենը նվազագույն վարձավճարներ	3,756,786	3,065,464
Հանած ֆինանսական ծախսեր հանդիսացող գումարները	(691,322)	–
Նվազագույն վարձավճարների ներկա արժեք	3,065,464	3,065,464

29. Պայմանականորեն գնանշվող վաճառքների գծով ստացված կանխավճարներ և պայմանագրային պարտավորություններ

Պայմանականորեն գնանշվող վաճառքների գծով ստացված ոչ ընթացիկ կանխավճարներում ներառված են 9,735,810 հազար դրամ գումարով կանխավճարներ (2017թ. -ին՝ 14,361,382 հազար դրամ), որոնք ենթակա են հաշվանցման պղնձի և մոլիբդենի վաճառքի դիմաց 2020-2021թթ. ընթացքում: Այս մնացորդների գծով կիրառվում է 1 ամսվա ԱՄՆ դոլար Libor գումարած 4.95%:

2016 և 2017թթ. -ի ընթացքում Խումբը կնքել է պղնձի մատակարարման երկու “streaming” պայմանագրեր, որոնց շրջանակներում Խումբն ստանում է համապատասխանաբար 25 միլիոն և 50 միլիոն ԱՄՆ դոլար գումարների չափով կանխավճարներ և պարտավորվում է վաճառել 150,000 և 480,000 խոնավ մետրիկ տոննա խտանյութ 2017-2031 և 2018-2041թթ. ընթացքում, զեղչված գներով: 2018թ. -ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ոչ ընթացիկ մնացորդը կազմում է՝ 29,421,478 հազար դրամ (2017թ.՝ 10,479,660 հազար դրամ):

29. Պայմանականորեն գնանշվող վաճառքների գծով ստացված կանխավճարներ և պայմանագրային պարտավորություններ (շարունակություն)

<i>Ոչ ընթացիկ</i>	<i>2018թ.</i>	<i>2017թ.</i>
Հոսքային պայմանագրեր	29,421,478	10,479,660
Պայմանականորեն գնանշվող վաճառքների գծով ստացված ոչ ընթացիկ կանխավճարներ	9,735,810	14,361,382
	39,157,288	24,841,042

<i>Ընթացիկ</i>	<i>2018թ.</i>	<i>2017թ.</i>
Պայմանականորեն գնանշվող վաճառքների գծով ստացված ընթացիկ կանխավճարներ	20,529,702	12,165,858
Հոսանքային պայմանագրեր	1,814,063	806,833
Պայմանագրային պարտավորություն*	465,325	812,594
	22,809,090	13,785,285

* 2018թ. հունվարի 1-ի դրությամբ պայմանագրային պարտավորությունների սկզբնական մնացորդը կազմել է 812,594 հազար ՀՀ դրամ: Պայմանագրային պարտավորությունների շարժը մեկ ժամանակաշրջանից դեպի մյուս ժամանակաշրջան կախված է բեռնափոխադրումների/առաքման ծառայությունների հետ կապված հետաձգված հասույթից, որոնք ժամանակաշրջանի վերջում դեռևս գտնվում են առաքման ընթացքում, այսինքն՝ պղնձի խտանյութի առաքումը, որը ենթակա է CIP միջազգային առևտրի պայմաններին, ժամանակաշրջանի վերջում դեռևս ընթացքի մեջ է:

30. Իրական արժեք և ռիսկերի կառավարում**ա) Իրական արժեքի չափման գործընթացներ****Հաշվեկշռային և իրական արժեքի համադրություն**

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Խմբի ֆինանսական գործիքների հաշվեկշռային և իրական արժեքների համադրումն ըստ դասերի, բացառությամբ ֆինանսական գործիքների, որոնց հաշվեկշռային արժեքները մոտավորապես համապատասխանում են դրանց իրական արժեքներին:

հազ. դրամ	Ֆինանսական գործիքի դասակարգում	Հաշվեկշռային արժեք		Իրական արժեք	
		2018թ.	2017թ.	2018թ.	2017թ.
Ֆինանսական պարտավորություններ					
Վարկեր և փոխառություններ՝	Ամորտիզացված արժեք	67,348,621	72,138,533	67,348,621	76,576,452

Իրական արժեքի հիերարխիա

Իրական արժեքի վերաբերյալ տեղեկատվության բացահայտման նպատակով Խումբն առանձնացրել է ակտիվների և պարտավորությունների դասեր՝ հիմնվելով ակտիվների և պարտավորությունների բնույթի, առանձնահատկությունների և ռիսկերի, ինչպես նաև իրական արժեքի հիերարխիայի վրա:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի, դրամական միջոցների և դրանց համարժեքների, տրված փոխառությունների իրական արժեքը մոտավորապես համապատասխանում է վերջիններիս հաշվեկշռային արժեքին:

30. Իրական արժեք և ռիսկերի կառավարում (շարունակություն)

ա) Իրական արժեքի չափման գործընթացներ (շարունակություն)

<i>հազ. դրամ</i>	<i>Իրական արժեքի չափումը՝ օգտագործելով</i>			<i>Ընդամենը</i>
	<i>Գնանշումներ ակտիվ շուկայում (1-ին մակարդակ)</i>	<i>Հակաան դիտարկելի եղակետային տվյալներ (2-րդ մակարդակ)</i>	<i>Հակաան ոչ դիտարկելի եղակետային տվյալներ (3-րդ մակարդակ)</i>	
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Իրական արժեքով չափվող ակտիվներ Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ (Ման. 16) Շահույթի կամ վնասի միջոցով՝ իրական արժեքով չափվող ներդրումներ	–	–	877,159	877,159
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր Առևտրային և այլ դեբիտորական պարտք (պայմանական գնանշում) – իրական արժեք (պղինձ)	–	923,451	–	923,451
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ (Ման. 26) Ապրանքային ֆյուչերս պայմանագրեր (պղինձ)	254,868	–	–	254,868
Ընդամենը	254,868	923,451	877,159	2,055,478

Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի և դրամական միջոցների և դրանց համարժեքների իրական արժեքը մոտավորապես համապատասխանում է վերջիններիս հաշվեկշռային արժեքին 2017թ. -ի դեկտեմբերի 31-ի դրությամբ:

<i>հազ. դրամ</i>	<i>Իրական արժեքի չափումը՝ օգտագործելով</i>			<i>Ընդամենը</i>
	<i>Գնանշումներ ակտիվ շուկայում (1-ին մակարդակ)</i>	<i>Հակաան դիտարկելի եղակետային տվյալներ (2-րդ մակարդակ)</i>	<i>Հակաան ոչ դիտարկելի եղակետային տվյալներ (3-րդ մակարդակ)</i>	
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ (Ման. 16) Վաճառքի համար մատչելի ներդրումներ Դեբիտորական պարտք վաճառքից Պղնձի վաճառքի պայմանագրերում ներկառուցված ածանցյալ գործիքներ Մոլիբդենի վաճառքի պայմանագրերում ներկառուցված ածանցյալ գործիքներ	–	–	928,484	928,484
–	–	1,302,015	–	1,302,015
–	–	–	1,057,099	1,057,099
Ընդամենը	–	1,302,015	1,985,583	3,287,598
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ (Ման. 26) Ապրանքային ֆյուչերս պայմանագրեր (պղինձ)	(7,140,890)	–	–	(7,140,890)
Ընդամենը	(7,140,890)	–	–	(7,140,890)
Պարտավորություններ, որոնց իրական արժեքը բացահայտվում է Վարկեր և փոխառություններ (Ման. 24)	–	–	(72,138,533)	(72,138,533)
Ընդամենը	–	–	(72,138,533)	(72,138,533)

30. Իրական արժեք և ռիսկերի կառավարում (շարունակություն)**ա) Իրական արժեքի չափման գործընթացներ (շարունակություն)**

3-րդ մակարդակ. Շահույթի կամ վնասի միջոցով՝ իրական արժեքով չափվող ներդրումներ և վաճառքի համար մատչելի ներդրումներ

2018 և 2017թթ.-ին ԱՀԷԿ-ի բաժնետոմսերը ակտիվորեն չեն շրջանառվել և իրական արժեքը որոշվել է դրամական հոսքերի գեղջման մեթոդով:

Նշանակալի չդիտարկվող տարրերի գնահատման նկարագրությունը

Իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում դասակարգված ֆինանսական գործիքների իրական արժեքի հաշվարկման համար օգտագործված նշանակալի չդիտարկվող տարրերը և դրանց քանակական զգայունության վերլուծությունը 2018թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է ստորև.

	<i>Գնահատման մեթոդ</i>	<i>Նշանակալի չդիտարկվող տարր</i>	<i>Մուտքագրվող տարրերի արժեք կամ սանդղակ</i>	<i>Մուտքային տարրի զգայունությունը իրական արժեքի նկատմամբ</i>
Շահույթի կամ վնասի միջոցով՝ իրական արժեքով չափվող ներդրումներ	Դրամական հոսքերի գեղջման մեթոդ	Կապիտալի միջին կշռված արժեք	11%	Կապիտալի միջին կշռված արժեքի 1% ավելացումը կհանգեցնի իրական արժեքի 227,646 հազար դրամի նվազման

Խմբի հիմնական ֆինանսական պարտավորությունները, բացառությամբ ածանցյալ գործիքների, ներառում են առևտրական և այլ կրեդիտորական պարտքերը, բանկային վարկերը և օվերդրաֆտները: Այս ֆինանսական գործիքների հիմնական նպատակն է կարճաժամկետ դրամական հոսքերի կառավարումը և Խմբի կապիտալ ծախսումների ծրագրի շրջանակներում միջոցների ներգրավումը: Խմբի հիմնական ֆինանսական ակտիվները, բացառությամբ ածանցյալ գործիքների, ներառում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ներդրումները, առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, տրամադրված փոխառությունները, դրամական միջոցները և դրանց համարժեքները:

բ) Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Խումբը ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- ▶ Շուկայական ռիսկ,
- ▶ Իրացվելիության ռիսկ,
- ▶ Պարտքային ռիսկ:

Այս ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն վերը նշված յուրաքանչյուր ռիսկին Խմբի ենթարկվածության մասին, ռիսկերի չափման և կառավարման հետ կապված Խմբի նպատակները, քաղաքականությունը և գործընթացները, ինչպես նաև կապիտալի կառավարման Խմբի մոտեցումը: Հավելյալ քանակական բացահայտումներ ներկայացված են տվյալ համախմբված ֆինանսական հաշվետվության տարբեր հատվածներում:

Ռիսկերի կառավարման հիմունքներ

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում Խմբի ռիսկերի կառավարման համակարգի մշակման և վերահսկողության համար:

Խմբի ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Խումբը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և համակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների ու Խմբի գործունեության փոփոխություններն արտացոլելու նպատակով: Դասընթացների, կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով Խումբը նպատակ ունի ձևավորել վերահսկման կանոնակարգված ու կառուցողական միջավայր, որտեղ բոլոր աշխատակիցները հստակ կպատկերացնեն իրենց դերերը և պարտականությունները:

30. Իրական արժեք և ռիսկերի կառավարում (շարունակություն)**բ) Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)****ա. Շուկայական ռիսկ**

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի իրական արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը բաղկացած է երեք տեսակի ռիսկերից՝ ապրանքների գնի, տոկոսադրույքի և արտարժույթի փոխարժեքի ռիսկերից: Շուկայական ռիսկի ներգործությունը ենթարկված ֆինանսական գործիքները ներառում են վարկերը և փոխառությունները, դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական և կրեդիտորական պարտքերը և ածանցյալ ֆինանսական գործիքները:

Ապրանքի գնի ռիսկ

Խումբը ենթարկվում է իր կողմից արտադրվող հանքային արտադրանքի համապատասխան շուկայական գների տատանումների ռիսկին:

Խմբի գերակա ենթարկվածությունը ապրանքների գնի ռիսկին պայմանավորված է պղնձի խտանյութի և ֆերոմոլիբդենի գներով: Այս ապրանքների ֆորվարդային գները հաշվետու ամսաթվի դրությամբ ազդում են վաճառքի պայմանագրերում առկա ներկառուցված ածանցյալ գործիքների իրական արժեքի վրա:

Ապրանքների գնի զգայունությունը

Ստորև ներկայացված աղյուսակը ամփոփում է պղնձի գների տատանումներով պայմանավորված ածանցյալ ֆինանսական գործիքների իրական արժեքի ազդեցությունը նախքան հարկումը շահույթի վրա: Սեփական կապիտալի վրա ունեցած ազդեցությունը միևնույն է ինչ նախքան հարկումը շահույթի վրա ունեցած ազդեցությունը, քանի որ այս ածանցյալ ֆինանսական գործիքները նախորոշված չեն որպես հեջավորման գործիք, այլ դասակարգված են որպես վաճառքի համար պահվող, ուստի չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Վերլուծությունը հիմնված է այն ենթադրության վրա, որ պղնձի գները փոխվել են 8.14%-ով այլ փոփոխականների հաստատուն մնալու պարագայում: Ապրանքի գների ողջամտորեն հնարավոր տատանումները որոշվել են տնտեսական վերլուծաբանների կանխատեսումների հիման վրա:

	2018թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա նախքան հարկումը շահույթի վրա ազդեցություն աճ/(նվազում)	2017թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա նախքան հարկումը շահույթի վրա ազդեցություն աճ/(նվազում)
Պղնձի գների աճ/(նվազում)		
Աճ 8.14 % (2017` 4.27%)	1,290,348	(2,910,742)
Նվազում 8.14% (2017` 4.27%)	(1,290,348)	2,910,742

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի իրական արժեքի տատանումների ռիսկն է շուկայական տոկոսադրույքի փոփոխության հետևանքով: 2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը չունի լրացող տոկոսադրույքով փոխառում միջոցներ (2017թ-ին` 85%):

Ղեկավարությունը չունի ֆորմալ քաղաքականություն փոփոխուն և հաստատուն տոկոսադրույքով դիրքերի հարաբերակցության վերաբերյալ: Այնուամենայնիվ, նոր վարկային միջոցներ կամ փոխառություններ ներգրավելիս ղեկավարությունը կիրառում է դատողություն` որոշելու, թե մինչ մարման ժամկետը նախատեսված ժամանակահատվածում կազմակերպության տեսանկյունից հաստատուն թե փոփոխուն դրույքն է առավել նպատակահարմար:

30. Իրական արժեք և ռիսկերի կառավարում (շարունակություն)**բ) Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)***Տոկոսադրույթի զգայունությունը*

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Խմբի նախքան հարկումը շահույթի զգայունությունը՝ լողացող տոկոսադրույթով փոխառությունների տոկոսադրույթի հնարավոր փոփոխության նկատմամբ, բոլոր այլ փոփոխականների հաստատուն լինելու պարագայում՝ հիմնված վերջին երկու տարվա պատմական տոկոսադրույթների և տնտեսական վերլուծաբանների կանխատեսումների վրա:

	<i>2018թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա նախքան հարկումը շահույթի վրա ազդեցություն աճ/(նվազում)</i>	<i>2018թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա նախքան հարկումը շահույթի վրա ազդեցություն աճ/(նվազում)</i>
<i>Տոկոսադրույթի աճ/(նվազում)</i>		
Աճ 0.50% (2017՝ 0.70%)	(88,835)	(1,000,058)
Նվազում 0.15% (2017՝ 0.08%)	26,650	101,427

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթային ռիսկը ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի իրական արժեքի տատանումների ռիսկն է արտարժույթների փոխարժեքի փոփոխության հետևանքով:

Խումբը ենթակա է արտարժույթային ռիսկի՝ ֆունկցիոնալ արժույթից տարբերվող արժույթներով վաճառքների, գնումների և փոխառությունների չափերի անհամապատասխանության հետևանքով: Վերոհիշյալ գործարքները հիմնականում արտահայտված են ԱՄՆ դոլարով:

Որպես կանոն, վարկերն և փոխառություններն արտահայտվում են այն արտարժույթով, որը համապատասխանում է Խմբի գործառնություններից առաջացող դրամական միջոցներին՝ հիմնականում ԱՄՆ դոլարին: Այսպիսով, առաջանում է տնտեսական հեջավորում՝ առանց ածանցյալ պայմանագրեր կնքելու անհրաժեշտության:

Արտարժույթով արտահայտված այլ դրամային ակտիվների և պարտավորությունների համար Խմբի քաղաքականությունը պահանջում է ապահովել զուտ ենթարկվածության ընդունելի մակարդակը, գնելով կամ վաճառելով արտարժույթը սփոթ դրույթներով՝ անհրաժեշտության դեպքում կարճաժամկետ անհավասարակշռությունը վերացնելու համար:

Արտարժույթի փոխարժեքի զգայունության

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս՝ ԱՄՆ դոլարի փոխարժեքի հնարավոր տատանումների ազդեցությունը համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա (կախված արտարժույթի փոխարժեքի փոփոխության նկատմամբ ոչ առևտրային դրամական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի զգայունությունից)

30. Իրական արժեք և ռիսկերի կառավարում (շարունակություն)**բ) Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)****բ. Իրացվելիության ռիսկ**

<i>Արտարժույթի փոխարժեքի աճ/ (նվազում)</i>	<i>2018թ. -ի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա նախքան հարկումը շահույթի վրա ազդեցություն աճ/(նվազում)</i>	<i>2017թ. -ի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա նախքան հարկումը շահույթի վրա ազդեցություն աճ/(նվազում)</i>
ԱՄՆ դոլար		
Աճ 3.5% (2017` 3.5%)	(452,478)	(3,370,223)
Նվազում 3.5 % (2017` 3.5%)	452,478	3,370,223
Եվրո		
Աճ 8 % (2017` 13.7%)	(28,284)	162,215
Նվազում 8% (2017` 6.3%)	28,284	(74,599)

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Խումբը կունենա դժվարություններ՝ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնց մարումը պահանջում է դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի տրամադրում: Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Խմբի մոտեցումն է ապահովել բավարար իրացվելիություն բնականոն և արտակարգ իրավիճակներում պարտավորությունները կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Խմբի հեղինակությունը վտանգելու:

Որպես կանոն, Խումբը ապահովում է ցպահանջ դրամական միջոցների այնպիսի չափի առկայություն, որը բավարար կլինի ակնկալվող գործառնական ծախսերը 60 օրվա ընթացքում ծածկելու համար՝ ներառյալ ֆինանսական պարտականությունների սպասարկման ծախսերը: Այս պարագայում հաշվի չի առնվում առանձնահատուկ հանգամանքների հնարավոր ազդեցությունը, որոնք հնարավոր չէ կանխատեսել, օրինակ՝ բնական աղետները:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրային ժամկետայնությունը, ներառյալ տոկոսների հաշվարկված վճարումները՝ առանց հաշվանցման համաձայնագրերի ազդեցության:

<i>2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</i>	<i>Ցպահանջ</i>	<i>Մինչև 1 տարի</i>	<i>1-2 տարի</i>	<i>2-5 տարի</i>	<i>Ընդամենը</i>
Տոկոսակիր վարկեր և փոխառություններ	–	51,226,586	7,026,206	14,439,810	72,692,602
Կրեդիտորական պարտքեր և հաշվեգրված պարտավորություններ	1,039,030	24,051,637	–	–	25,090,667
Ֆինանսական վարձակալություն	–	800,579	871,462	2,084,745	3,756,786
	1,039,030	76,078,802	7,897,668	16,524,555	101,540,055
<i>2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</i>	<i>Ցպահանջ</i>	<i>Մինչև 1 տարի</i>	<i>1-2 տարի</i>	<i>2-5 տարի</i>	<i>Ընդամենը</i>
Տոկոսակիր վարկեր և փոխառություններ	–	23,744,507	18,084,799	47,928,780	89,758,086
Կրեդիտորական պարտքեր և հաշվեգրված պարտավորություններ	849,360	19,783,007	–	–	20,632,367
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ	–	7,140,890	–	–	7,140,890
	849,360	50,668,404	18,084,799	47,928,780	117,531,343

30. Իրական արժեք և ռիսկերի կառավարում (շարունակություն)**բ) Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)**

Գրավով ապահովված բանկային վարկի համար պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքերը ներառում են գործարքի ծախսերի գծով դրամական միջոցների հոսքերը:

գ. Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ պատվիրատուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պարտավորությունները Խմբի նկատմամբ և այն առաջանում է հիմնականում պատվիրատուներից ստացման ենթակա դեբիտորական պարտքերից:

Խումբը չի պահանջում գրավ ֆինանսական ակտիվների գծով: Պարտավորությունների կատարման գծով ռիսկերի գնահատումներ իրականացվում են որոշակի սահմանները գերազանցող գումարներ պահանջող պայմանագրային կողմերի համար, բացառությամբ կապակցված կողմերի:

Ենթարկվածությունը պարտքային ռիսկին

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը: Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը.

<i>հազ. դրամ</i>	<i>Հաշվեկշռային արժեք</i>	
	<i>2018թ.</i>	<i>2017թ.</i>
Բանկային հաշիվների մնացորդներ	525,217	5,678,228
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	9,600,820	13,579,858
Տրամադրված փոխառություններ	8,915,150	
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	254,868	–
	19,296,055	19,258,086

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Պարտքային ռիսկին Խմբի ենթարկվածությունը հիմնականում կախված է յուրաքանչյուր պատվիրատուի առանձնահատկություններից: Այնուամենայնիվ, ղեկավարությունը դիտարկում է նաև պատվիրատուների բազայի կառուցվածքը, ներառյալ այդ պատվիրատուների արդյունաբերության ու երկրների կողմից հանձն առնված պարտավորությունների չկատարման ռիսկը, քանի որ այս գործոնները կարող են ազդեցություն ունենալ պարտքային ռիսկի վրա, մասնավորապես ներկայիս տնտեսական պայմաններում: Պղնձի խտանյութի և ֆերոմոլիբդենի գծով հասույթի մոտ 32.05% (2017թ.-ին՝ 14.00%) վերագրվում է կապակցված կողմերի հետ իրականացվող վաճառքի գործարքներին:

Հասույթի մնացած մասը վերագրելի է հինգ (2017թ.-ին՝ վեց) պատվիրատուի հետ իրականացվող վաճառքի գործարքներին:

Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի գծով պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունն՝ ըստ աշխարհագրական տարածաշրջանների.

<i>հազ. դրամ</i>	<i>Հաշվեկշռային արժեք</i>	
	<i>2018թ.</i>	<i>2017թ.</i>
Տեղական	6,320,555	6,266,208
Արտերկիր	3,280,265	7,313,650
	9,600,820	13,579,858

30. Իրական արժեք և ռիսկերի կառավարում (շարունակություն)**գ. Պարտքային ռիսկ (շարունակություն)**

Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի գծով պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունն՝ ըստ պատվիրատուների տեսանկյանի:

<i>հազ. դրամ</i>	<i>Հաշվեկշռային արժեք</i>	
	<i>2018թ.</i>	<i>2017թ.</i>
Պղնձի և մոլիբդենի պատվիրատուներ	923,451	11,133,866
Այլ արտադրանք – այլ պատվիրատուներ	8,677,369	2,445,992
	9,600,820	13,579,858

Բանկային հաշիվների մնացորդներ

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ 525,217 հազար դրամ գումարով բանկային հաշիվների մնացորդներ (2017թ.՝ 5,678,228 հազար դրամ), որոնք իրենցից ներկայացնում են պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափն այդ ակտիվների գծով: 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր պարտքային ռիսկի 96% վերագրելի է Fitch գործակալության կողմից տրված “B+” վարկանիշով բանկում ունեցած մնացորդներին (2017թ.-ին՝ 90%): 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտքային ռիսկի մնացած 4% վերագրելի է 3 խոշոր հայկական բանկերին:

դ) Կապիտալի կառավարում

Խումբը չունի կապիտալի կառավարման ձևակերպված քաղաքականություն, սակայն ղեկավարությունը ձգտում է ապահովել կապիտալի բավարար բազա իր գործառնական և ռազմավարական պահանջները բավարարելու համար: Դա իրագործվում է դրամական միջոցների արդյունավետ կառավարման, Խմբի հասույթի և շահույթի շարունակական վերահսկման ու հիմնականում Խմբի գործառնական գործունեության դրամական միջոցների հոսքերով, ինչպես նաև վարկերով ու փոխառություններով ֆինանսավորվող, երկարաժամկետ ներդրումային ծրագրերի միջոցով: Ձեռնարկելով այս քայլերը Խումբը նպատակ ունի կայունացնել շահույթի աճը:

ե) Ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխություններ պարտավորություններում

<i>հազ. դրամ</i>	<i>Վարկեր և փոխառություններ</i>
Մնացորդը 1 հունվար 2017 թ.-ի դրությամբ	93,768,294
Վարկերի և փոխառությունների գծով վճարումներ	(23,422,190)
Ոչ դրամային գործարքներ	8,340,408
Արտարժույթի փոխարժեքի տատանումների ազդեցությունը	37,479
Վճարված տոկոսներ, ներառյալ ոչ ռեզիդենտի շահութահարկը	(6,585,458)
Մնացորդը 31 դեկտեմբեր 2017 թ.-ի դրությամբ	72,138,533
Ստացված վճարումներ վարկերի և փոխառությունների գծով	212,025,762
Վարկերի և փոխառությունների գծով վճարումներ	(215,820,449)
Ոչ դրամային գործարքներ	9,948,741
Վարկերի և փոխառությունների գծով ոչ կանխիկ վճարումներ հաշվանցման միջոցով	(5,121,365)
Արտարժույթի փոխարժեքի տատանումների ազդեցությունը	(298,764)
Վճարված տոկոսներ, ներառյալ ոչ ռեզիդենտի շահութահարկը	(5,523,837)
Մնացորդը 31 դեկտեմբեր 2018թ.-ի դրությամբ	67,348,621

31. Պայմանական պարտավորություններ**ա) Ապահովագրություն**

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Խումբը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր բոլոր շենքերի և սարքավորումների համար, ինչպես նաև այն ապահովագրված չէ գործունեության ընդհատումից և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց՝ Խմբի տարածքում տեղի ունեցած պատահարների կամ գործունեության հետևանքով: Քանի դեռ Խումբը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է զգալի անբարենպաստ ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

բ) Հարկային պարտավորվածություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և տարբեր կերպ են մեկնաբանվում տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ ավելի մեծ և էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ պատշաճ կերպով է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի գործող հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են լինել էական այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

գ) Շրջակա միջավայրի պահպանության

Խմբի գործունեությունը կարգավորվում է բազմաթիվ պետական օրենքներով և կանոնակարգերով, որոնք կառավարում են օդը և ջուրը աղտոտող նյութերի արտանետումը, վնասակար նյութերի ու թափոնների և այլ թունավոր նյութերի արտադրությունը, գործածումը, պահպանումը և արտանետումը: Խումբը պահուստ չի ձևավորել շրջակա միջավայրի պահպանության գծով հնարավոր պարտավորությունների համար, քանի որ ղեկավարությունը հավանական չի համարում նման պարտավորությունների առաջացումը մոտ ապագայում: Այնուամենայնիվ, բնապահպանության հարցերը կարգավորող ՀՀ օրենսդրությունը զարգացման փուլում է, և այդ օրենսդրության ու վերջինիս մեկնաբանությունների հնարավոր փոփոխությունները կարող են էական պարտավորություններ առաջացնել ապագայում:

դ) Կապիտալ ներդրումների գծով պարտավորվածություններ և այլ պայմանական պարտավորություններ

Կապիտալ ներդրումների գծով պարտավորվածություններ

Խումբը չունի էական կապիտալ պարտավորվածություններ 2018թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ (2017թ.-ի դրությամբ՝ զրո):

Ֆինանսական երաշխավորություններ

2018թ.-ի ընթացքում Խումբը տրամադրել է ֆինանսական երաշխավորություններ ոչ կապակցված կողմերին ընդհանուր 54,762,694 ԱՄՆ դոլարի կամ 26,491,453 հազար ՀՀ դրամի չափով (2017՝ զրո), երաշխավորության պայմանագրերը մարվում են մինչ 2019 թ.-ի հուլիս: Երաշխավորությունների համար հաշվարկված ակնկալվող վարկային կորուստների չափ ոչ էական մեծություն է:

31. Պարտավորվածություններ և պայմանական պարտավորություններ (շարունակություն)**դ) Կապիտալ ներդրումների գծով պարտավորվածություններ և այլ պայմանական պարտավորություններ (շարունակություն)***Գործառնական վարձակալության պարտավորվածություններ*

Խումբը վարձակալել է հող և այլ գույք: Կարձակալությամբ վարձակալի համար չեն նախատեսվում առանձնահատուկ սահմանափակումներ:

Ապագա նվազագույն վարձակալական վճարները չեղյալ չհամարվող գործառնական վարձակալություններից դեկտեմբերի 31 –ի դրությամբ կազմում են՝

<i>հազ. դրամ</i>	<i>2018թ.</i>	<i>2017թ.</i>
Մինչև մեկ տարի	1,494,138	335,884
Մեկ տարուց ավել, բայց ոչ ավել, քան հինգ տարի	5,516,491	569,199
Հինգ տարուց ավել	3,872,061	3,730,152
	10,882,690	4,635,235

32. Գործառնական ռիսկեր**ա) Հանքեր**

Հանքերն ըստ իրենց էության ենթակա են բազմաթիվ գործառնական ռիսկերի և գործոնների ազդեցության, որոնք, որպես կանոն, գտնվում են Խմբի վերահսկողության սահմաններից դուրս և կարող են ազդեցություն ունենալ Խմբի գործունեության, գործառնական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի վրա: Այս գործառնական ռիսկերը և գործոնները ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով (i) գրունտի և ջրի անկանխատեսելի պայմանները և ջրօգտագործման իրավունքների հետ կապված անբարենպաստ հայցերը, (ii) երկրաբանական խնդիրները, ներառյալ երկրաշարժերը և այլ բնական աղետները, (iii) մետալուրգիական և մշակման այլ գործընթացների հետ կապված խնդիրները, (iv) արտասովոր եղանակային կամ գործառնական պայմանները և այլ ֆորս-մաժորային իրադարձությունները, (v) հանքաքարի ակնկալվողից ցածր որակը կամ կորզման դրույքները, (vi) վթարները, (vii) կառավարության կողմից անհրաժեշտ թույլտվությունների ոչ ժամանակին կամ ընդհանրապես չտրամադրումը, (viii) դատական վարույթների արդյունքները, ներառյալ ընդունված որոշումների բողոքարկումը, (ix) հետագոտման և մշակման աշխատանքների հետ կապված անորոշությունները, (x) փոխադրման ուշացումները, (xi) աշխատանքային վիճաբանությունները, (xii) համապատասխան ապահովագրական փաթեթ ձեռք բերելու անկարողությունը, (xiii) նյութերի և սարքավորումների բացակայությունը, (xiv) գործունեության հատկորոշումների կամ ակնկալիքների համաձայն սարքավորումների գործելու կամ գործընթացների ընթանալու անկարողությունը, (xv) անկանխատեսելի դժվարությունները՝ ձեռք բերված միավորումների համախմբման և ակնկալվող միասնության ձեռք բերման հետ կապված և (xvi) ֆինանսավորում ստանալու փորձերի արդյունքները և ֆինանսական շուկայի պայմանները:

բ) Պղնձի և մոլիբդենի գների տատանումներ

Խմբի ֆինանսական գործունեությունը զգալիորեն կախված է պղնձի գնից, որի վրա ազդեցություն ունեն Խմբի վերահսկողության սահմաններից դուրս գտնվող բազմաթիվ գործոններ: Պղնձի առք ու վաճառքն իրականացվում է Լոնդոնի մետաղների բորսայում (LUF), Նյու Յորքի ապրանքային բորսայում (COMEX) և Շանհայի ֆյուչերսների բորսայում (CSEF): Խմբի պղնձը վաճառվում է LUF գնանշվող գներով: Այս բորսայում ներկայացվող պղնձի գնի վրա էական ազդեցություն ունեն բազմաթիվ գործոններ, ներառյալ՝ (i) պղնձի պահանջարկի և առաջարկի հավասարակշռությունն աշխարհի մասշտաբով, (ii) համաշխարհային տնտեսության աճի տեմպերը, ինդուստրիալ արտադրության միտումները և բնակարանաշինության ու ավտոմոբիլային արդյունաբերության պայմանները, որոնցից բխում է պղնձի պահանջարկի հետ, (iii) Չինաստանի տնտեսական աճն ու քաղաքական պայմանները, որը դարձել է մաքուր պղնձի աշխարհի ամենախոշոր սպառողը, և այլ զարգացող տնտեսությունները, (iv) սպեկուլյատիվ ներդրումային դիրքերը պղնձի և պղնձի ֆյուչերսների հետ կապված, (v) փոխարինող նյութերի առկայությունը և արժեքը և (vi) փոխարժեքի տատանումները, ներառյալ ԱՄՆ դոլարի համեմատական կայունությունը: Պղնձի շուկան բնորոշվում է փոփոխական և ցիկլային բնույթով: 2018թ. ընթացքում LUF-ի ամսական միջին փական սփոթ մեկ տոննա պղնձի գների համար տատանվել են 6,020 ԱՄՆ դոլարից 7,080 ԱՄՆ դոլար: 2019թ. մարտի 31-ին LUF-ի մեկ տոննա պղնձի փական սփոթ գինը կազմել է 6,485 ԱՄՆ դոլար:

32. Պարտավորվածություններ և պայմանական պարտավորություններ (շարունակություն)**բ) Պղնձի և մոլիբդենի գների տատանումներ (շարունակություն)**

Խմբի ֆինանսական գործունեությունը զգալիորեն կախված է նաև մոլիբդենի գնից: Մոլիբդենի գինը փոփոխական և ցիկլային է ինչպես պղնձին, եթե ոչ ավելի: Մոլիբդենի գնի վրա էական ազդեցություն ունեն բազմաթիվ գործոններ, ներառյալ՝ (i) մոլիբդենի պահանջարկի և առաջարկի հավասարակշռությունն աշխարհի մասշտաբով, (ii) համաշխարհային տնտեսության աճի տեմպերը, հատկապես շինարարության և ենթակառուցվածքների ոլորտում, որոնք պահանջում են պողպատի զգալի պաշարներ, (iii) որպես պղնձի արտադրության հավելյալ արտադրատեսակ արտադրվող մոլիբդենի ծավալները, (iv) պաշարների չափերը, (v) փոխարժեքի տատանումները, ներառյալ ԱՄՆ դոլարի համեմատական կայունությունը և (vi) ԱՄՆ-ի և արտերկրյա մրցակիցների արտադրական ծախսերը:

Մոլիբդենի պահանջարկը զգալիորեն կախված է համաշխարհային մասշտաբով պողպատի արդյունաբերությունից, որը այս մետաղն օգտագործում է որպես կարծրացնող և քայքայումը կանխարգելող նյութ: Մոլիբդենի արտադրության մոտավորապես 80 տոկոսը օգտագործվում է այս նպատակի համար: Մնացած պաշարներն օգտագործվում են մասնագիտացված քիմիկատների, մասնավորապես, կատալիզատորների, ջրազրկման ռեակտիվների, քսանյութերի արտադրությունում: Մոլիբդենի համաշխարհային պաշարների մոտավորապես 65 տոկոսը հանդիսանում է պղնձի արդյունահանման հավելյալ արտադրանք, որի վրա այդքան էլ մեծ ազդեցության չունեն մոլիբդենի գները: 2018թ. ընթացքում մոլիբդենի միջին գինը կազմել է մոտավորապես 28,997 ԱՄՆ դոլար մեկ տոննայի համար, ի համեմատություն 2017թ., երբ այն կազմում էր 19,820 ԱՄՆ դոլար մեկ տոննայի համար: 2019թ.-ի մարտի 31-ին ԼՄԲ-ի մեկ տոննա մոլիբդենի սփռված գինը կազմել է 29,250 ԱՄՆ դոլար:

33. Կապակցված կողմեր**ա) Վերահսկողություն**

Կառավարության 2004թ. դեկտեմբերի 9-ի թիվ 1677-Ա որոշման համաձայն Խումբը սեփականաշնորհվեց պետության կողմից: 2018թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի սեփականատերերի կազմը ներկայացված է Ծանուցում 1-ում:

բ) Գործարքներ առանցքային ղեկավար անձնակազմի հետ***Տնօրենների խորհրդի անդամների և առանցքային ղեկավար անձնակազմի վարձատրությունը***

Տարվա ընթացքում ղեկավար անձնակազմը ստացել է ստորև ներկայացված վարձատրությունը, որը ներառված է «Աշխատակազմի գծով ծախսեր» հոդվածում (Ծան. 12):

<i>հազ. դրամ</i>	<i>2018թ.</i>	<i>2017թ.</i>
Աշխատավարձ և պարգևատրումներ		
Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ	1,019,721	1,249,763
Արձակման նպաստներ (Ծան. 25)	411,668	637,203
	1,431,389	1,886,966

Կապակցված կողմերի հետ գնման կամ վաճառքի գործարքների պայմանները չեն տարբերվում անկախ կողմերի միջև գործարքների պայմաններից: Որևէ երաշխիք չի տրամադրվել կամ ստացվել կապակցված կողմերի հետ դեբիտորական կամ կրեդիտորական պարտքերի գծով:

33. Կապակցված կողմեր (շարունակություն)**բ) Գործարքներ առանցքային ղեկավար անձնակազմի հետ (շարունակություն)**

Ստորև ներկայացված են Խմբի գործարքները կապակցված կողմերի հետ:

ա. Հասույթ

հազ. դրամ	Գործարքի արժեքը 2018թ.	Գործարքի արժեքը 2017թ.	Մնացորդը 2018թ.	Մնացորդը 2017թ.
Մուլիբդենի խտանյութի և ֆերոմուլիբդենի վաճառք				
Բաժնետերեր	36,047,178	(15)	–	(9,682,000)
Ընդհանուր ազդեցության ներքո գտնվող ընկերություններ	22,993,851	15	–	–
Պղնձի խտանյութի վաճառք				
Ընդհանուր ազդեցության ներքո գտնվող ընկերություններ	4,162,430	26,751,096	–	2,682,154
Այլ արտադրանքի վաճառք				
Մատուցված ծառայություններ				
Բաժնետերեր	800	1,744	–	80
Այլ կապակցված կողմեր	–	–	2,006,186	–
Տոկոսային եկամուտ				
Ընդհանուր ազդեցության ներքո գտնվող ընկերություններ	–	123,363	–	123,729
Այլ եկամուտներ				
Բաժնետերեր	11,249	–	–	–
Դեբիտորական պարտքերի արժեզրկման հակադարձում	63,215,508	26,876,203	(7,949,754)	(6,876,037)

բ. Ծախսեր

հազ. դրամ	Գործարքի արժեքը 2018թ.	Գործարքի արժեքը 2017թ.	Մնացորդը 2018թ.	Մնացորդը 2017թ.
Նյութերի ձեռքբերում				
Բաժնետերեր	985,670	5,149	(767,378)	(900)
Ընդհանուր ազդեցության ներքո գտնվող ընկերություններ	70,103	–	–	–
Այլ կապակցված կողմեր	–	3,151,407	–	(466,144)
Հիմնական միջոցների ձեռքբերում				
Բաժնետերեր	2,245	327,619	–	(3,892)
Ընդհանուր ազդեցության ներքո գտնվող ընկերություններ	118,412	28,060	–	2,420,500
Ստացված ծառայություններ				
Բաժնետերեր	8,325,036	12,076,348	(632,433)	(244,792)
Ընդհանուր ազդեցության ներքո գտնվող ընկերություններ	1,828,602	1,514,017	(8,463)	(23,620)
Այլ կապակցված կողմեր	–	1,808,487	–	(135,236)
Տրամադրված նվիրատվություններ				
Այլ կապակցված կողմեր	4,378,051	947,257	–	–
Ընդհանուր ազդեցության ներքո գտնվող ընկերություններ	180,000	145,000	–	–
Տոկոսային ծախս ստացված կանխավճարների գծով				
Բաժնետերեր	724,514	660,241	(60,812)	(1,517,104)
Ընդհանուր ազդեցության ներքո գտնվող ընկերություններ	–	174,333	–	(389,070)
Միջնորդավճար				
Ընդհանուր ազդեցության ներքո գտնվող ընկերություններ	161,354	201,664	–	–
	16,773,987	21,039,582	(1,469,086)	(360,258)

Կապակցված կողմերի հետ գործարքների բոլոր մնացորդները պետք է մարվեն կանխիկով՝ հաշվետու ամսաթվից հետո վեց ամսվա ընթացքում: Մնացորդներից գրավով ապահովված չեն:

33. Կապակցված կողմեր (շարունակություն)**բ) Գործարքներ առանցքային ղեկավար անձնակազմի հետ (շարունակություն)**

Ընդհանուր ազդեցության ներքո գտնվող ստացված ծառայությունները հիմնականում ներառում են երկրաբանական ուսումնասիրությունները և հետախուզությունները, որոնք իրականացրել են կապակցված կողմերի ենթակապալառու հանդիսացող ոչ կապակցված կողմերը

Այլ կապակցված կողմերը հանդիսանում են Տնօրենների Խորհրդի կողմից նշանակալի ազդեցության ներքո գտնվող ընկերություններ:

գ. Վարկեր և փոխառություններ

հազ. դրամ	Գործարքի արժեքը 2018թ.	Գործարքի արժեքը 2017թ.	Մնացորդը 2018թ.	Մնացորդը 2017թ.
Տրամադրված փոխառություններ				
Բաժնետերեր	8,600,777	–	8,626,218	–
Տոկոսային եկամուտ տրամադրված փոխառությունների գծով				
Բաժնետերեր	465,810	–	466,431	–
Ստացված վարկեր և փոխառություններ				
Բաժնետերեր	–	–	–	(4,841,000)
Տոկոսային ծախս ստացված փոխառությունների գծով				
Բաժնետերեր	(194,511)	331,878	–	(784,995)
	8,872,076	331,878	9,092,649	(5,625,995)

34. Հաշվապահական հաշվառման քաղաքականության և բացահայտումների փոփոխություններ**Նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ**

2018թ. հունվարի 1-ից Խումբն առաջին անգամ կիրառել է ՖՀՄՍ 15-ը և ՖՀՄՍ 9-ը: Այս նոր ստանդարտների կիրառման հետևանքով առաջացած փոփոխությունների բնույթն ու ազդեցությունը ներկայացված են ստորև: Բացի ստորև նկարագրված փոփոխություններից, կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը համապատասխանում է նախորդ ֆինանսական տարվա հաշվապահական հաշվառման քաղաքականությանը:

2018թ. առաջին անգամ կիրառվել են որոշ այլ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք, սակայն, ազդեցություն չեն ունեցել Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա, և հետևաբար դրանց գծով բացահայտումներ չեն իրականացվել: Խումբը վաղաժամ չի ընդունել այնպիսի ստանդարտներ, մեկնաբանություններ կամ փոփոխություններ, որոնք հրապարակվել են, բայց դեռևս ուժի մեջ չեն մտել:

ՖՀՄՍ 15՝ «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ»

ՖՀՄՍ 15-ը և դրա հետ կապված փոփոխությունները փոխարինում են «Կառուցման պայմանագրերը» ՀՀՄՍ 11-ին, «Հասույթ» ՀՀՄՍ 18-ին և դրա հետ կապված մեկնաբանություններին: Այն կիրառելի է հաճախորդների հետ պայմանագրերից առաջացող ողջ հասույթի համար և ուժի մեջ է մտել 2018թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթի հաշվառման նպատակով ՖՀՄՍ 15-ը սահմանում է հինգ քայլից բաղկացած մոդել: Դրա համաձայն հասույթը պետք է ճանաչվի երբ ծառայության կամ ապրանքի տնօրինման իրավունքը փոխանցվում է հաճախորդին փոխհատուցման գումարի չափով, որի նկատմամբ Խումբն ակնկալում է ստանալ իրավունք՝ հաճախորդին ապրանքներ և ծառայություններ փոխանցելու դիմաց:

ՖՀՄՍ 15-ը պահանջում է, որ ընկերությունները հաճախորդների հետ պայմանագրերի դեպքում մոդելի յուրաքանչյուր քայլ կատարելիս իրականացնեն դատողություններ՝ հաշվի առնելով բոլոր առնչվող փաստերն ու հանգամանքները: Ստանդարտը նաև սահմանում է պայմանագրի ձեռքբերման հետ կապված հավելյալ ծախսերի և պայմանագրի կատարման հետ ուղղակիորեն կապված ծախսերի հաշվառումը: Բացի դրանից, ստանդարտը պահանջում է իրականացնել հասույթի վերաբերյալ ընդլայնված և լայնածավալ բացահայտումներ, որոնք կօգնեն ներդրողներին ավելի լավ հասկանալ հասույթի և հաճախորդների հետ պայմանագրերից առաջացող դրամական միջոցների հոսքերի բնույթը, գումարը, ժամկետները և անորոշությունը:

Խումբը ՖՀՄՍ 15-ը կիրառել է՝ օգտագործելով ձևափոխված հետընթաց կիրառման մեթոդը և չի վերանայել համեմատական տեղեկատվությունը: Հետևաբար, 2017թ.-ի համար տեղեկատվությունը ներկայացվել է ՀՀՄՍ 18-ի համաձայն և 2018թ.-ի համար ներկայացված տեղեկատվության հետ համադրելի չէ: ՖՀՄՍ 15-ի ընդունումից առաջացած տարբերությունները 2018թ. հունվարի 1-ի դրությամբ ուղղակիորեն ճանաչվել են չբաշխված շահույթում և ներկայացված են ստորև:

34. Հաշվապահական հաշվառման քաղաքականության և բացահայտումների փոփոխություններ (շարունակություն)**Նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)****Ընդհանուր ազդեցությունը**

Խմբի՝ հաճախորդների պայմանագրերից հասույթը բաղկացած է երկու հիմնական հոսքից, որոնք են՝ պղնձի ու մոլիբդենի խտանյութի և ֆերոմոլիբդենի վաճառքը: Խումբն իրականացրել է հասույթի հաշվառման վերաբերյալ նոր ստանդարտի ազդեցության համապարփակ վերլուծություն՝ հիմք ընդունելով իր հասույթի հիմնական հոսքերի պայմանագրային դրույթների վերանայումը՝ առաջնային նպատակ ունենալով հասկանալ արդյոք ՀՀՄՍ 15-ի կիրառման դեպքում ճանաչված հասույթի ժամկետը և չափը կարող են տարբերվել:

Խմբի հասույթի բոլոր հոսքերի համար, բացառությամբ «Ծախս և բեռնափոխադրումներ» (CIP) միջազգային առևտրի պայմանների համաձայն իրականացված մետաղի խտանյութերի որոշ վաճառքների (լրացուցիչ քննարկման նպատակով տե՛ս «Բեռնափոխադրում/առաքման ծառայություններ» ստորև ներկայացված մեկնաբանությունը), կատարման ենթակա պարտավորության բնույթը և կատարման ժամկետը և, հետևաբար, ՀՀՄՍ 15-ի համաձայն ճանաչված հասույթի գումարն ու ժամկետը նույնն են, ինչ ՀՀՄՍ 18-ի համաձայն:

Որոշակի տարբերություններ են նշվել (CIP) պայմանագրերի հետ կապված, որը հանգեցրել է սկզբնական մնացորդի որոշակի ճշգրտումների՝ ազդեցություն ունենալով չբաշխված շահույթի վրա: ՀՀՄՍ 15-ի համաձայն Խմբի հասույթի հաշվառման քաղաքականության վերաբերյալ տե՛ս ստորև ներկայացված Ծանոթագրություն 37-ը:

Ազդեցությունը Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա*Պղնձի և մոլիբդենի խտանյութի (մետաղի խտանյութի) վաճառքը*

Մետաղի խտանյութից ստացվող հասույթի ճանաչման ժամկետի հետ կապված փոփոխություններ չեն հայտնաբերվել, քանի որ հաճախորդին հսկողությունը փոխանցվում է առաքման ամսաթվին, որը համապատասխանում է այն ժամանակային պահին, երբ ՀՀՄՍ 18-ի համաձայն ռիսկերն ու հատույցները փոխանցվում են: Մետաղի խտանյութի վաճառքի հետ կապված տեղի են ունեցել որոշ վերադասակարգման փոփոխություններ, որոնք ունեն պայմանական գնանշման պայմաններ:

Այնուամենայնիվ, (CIP) միջազգային առևտրի պայմանների համաձայն իրականացված մետաղի խտանյութի որոշ վաճառքների գծով, երբ Խումբը տրամադրել է բեռնափոխադրումների/առաքման ծառայություններ, տեղի է ունեցել ճանաչված հասույթի գումարի փոփոխություն: Փոփոխության պատճառն այն է, որ այս ծառայությունները ներկայումս համարվում են առանձին կատարման ենթակա պարտավորություններ, որոնք բավարարվում են մետաղի խտանյութի վաճառքից տարբեր ժամանակային կետում:

Հետևաբար, որոշ գործարքների գները, որոնք նախկինում ՀՀՄՍ 18-ի համաձայն բաշխվել են մետաղի խտանյութերի վրա, ներկայումս ՀՀՄՍ 15-ի համաձայն պահանջվում է բաշխել այս նոր կատարման ենթակա պարտավորությունների վրա: Այս բեռնափոխադրումների/առաքման ծառայության հետ կապված հասույթը բացահայտված է առանձին: Առանձնացված հասույթի վերաբերյալ բացահայտումները ներկայացված են Ծանոթագրություն 5-ում:

Պայմանականորեն գնանշված ապրանքների վաճառք

Ինչպես ստորև ներկայացված է Ծանոթագրություն 37-ում, Խմբի կողմից հաճախորդներին մետաղի խտանյութի որոշ վաճառքներ պարունակում են դրույթ, որը գնի ճշգրտումների իրականացման հնարավորություն է տալիս հիմք ընդունելով պայմանագրով նախատեսված գնորոշման ժամանակաշրջանի վերջի դրությամբ շուկայական գինը: Այս վաճառքներն անվանվում են «պայմանականորեն գնանշված վաճառքներ»: Նախկին ստանդարտների համաձայն (ՀՀՄՍ 18՝ «Հասույթ» և ՀՀՄՍ 39՝ «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը») համարվում էր, որ պայմանականորեն գնանշված վաճառքները ունեն ներկառուցված ածանցյալ գործիք, որը, հաշվառման նպատակներից ելնելով, առաքման ամսաթվին պահանջվում է առանձնացնել հիմնական պայմանագրից: Այս պայմանագրերի դեպքում հասույթը սկզբնապես ճանաչվում է առաքման ամսաթվի դրությամբ (սա այն ամսաթիվն է, երբ ռիսկերն ու հատույցները փոխանցվում են) և հիմնված է մետաղի խտանյութի սահմանված վերջին գնահատման (ըստ սկզբնական փորձարկման արդյունքների) և գնահատված ֆորվարդ գնի վրա, որը սահմանվել է առաքման ամսաթվին և Խումբն ակնկալում է ստանալ գնորոշման ժամանակաշրջանի վերջում: Յուրաքանչյուր ժամանակաշրջանում մինչև գնորոշման ժամանակաշրջանի ավարտը ներկառուցված ածանցյալ գործիքի հետագա իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում էին համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և ներկայացվում էին որպես հասույթի վերաչափում:

34. Հաշվապահական հաշվառման քաղաքականության և բացահայտումների փոփոխություններ (շարունակություն)**Նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)**

ՖՀՄՍ 15-ի համաձայն, այս հասույթի հաշվառումը մնացել է անփոփոխ. հասույթը ճանաչվում է, երբ վերահսկողությունը փոխանցվում է հաճախորդին (որը շարունակվում է մնալ առաքման ամսաթիվը) և չափվում է այն գումարի չափով, որը Խումբն ակնկալում է ստանալ: Սա գնորդի ժամանակաշրջանի վերջում ակնկալվող ստացվելիք գնի գնահատումն է, այսինքն՝ ֆորվարդի գինը:

ՖՀՄՍ 9-ի պահանջների ազդեցությունը կհանգեցնի Խմբի հաշվառման փոփոխության: Խումբը ներկայումս նման չարժեքը պետք է ներկայացնի վաճառքի ամսաթվից հետո որպես հասույթի վերաչափում:

Բեռնափոխադրումներ/առաքման ծառայություններ. Ինչպես վերևում նկարագրված է, Խմբի մետաղի խտանյութերի վաճառքների փոքր մասն է, որ իրականացվում է (CIP) միջազգային առևտրի պայմանների համաձայն, երբ Խումբը բեռնափոխադրումների/առաքման ծառայությունների մատուցման համար պատասխանատվություն է կրում հաճախորդին մետաղի խտանյութի հսկողությունը փոխանցելու ամսաթվից հետո:

ՀՀՄՍ 18-ի համաձայն, բեռնափոխադրումների/առաքման ծառայությունները չեն հաշվառվում որպես առանձին ծառայություններ: Փոխարենը, վաճառքի հետ կապված ողջ հասույթը ճանաչվում է բեռնման ամսաթվին և ներկայացվում է որպես մետաղի խտանյութից ստացված հասույթ: ՖՀՄՍ 15-ի համաձայն սահմանվել է, որ ծառայությունների մատուցումը իրենից ներկայացնում է առանձին կատարման ենթակա պարտավորություն, և Խումբը գործում է որպես պայմանագրի հիմնական կողմ:

Արդյունքում, համաձայն ՖՀՄՍ 15-ի, պայմանագրային գնի մի մասը այժմ պահանջվում է բաշխել այդ կատարման ենթակա պարտավորության վրա, և ժամանակի ընթացքում, երբ ծառայությունները մատուցվում են, պետք է ճանաչվի համախառն հիմքով: Որոշ դեպքերում յուրաքանչյուր առաքման համար Խումբն առաքման ամսաթվին կամ դրան մոտ ամսաթվին պայմանական ապրանքագրի հիման վրա պայմանագրային գնի մի մասը ստանում է կանխիկ: Սա հաշվի առնելով՝ այս բեռնափոխադրումների/առաքման ծառայություններին վերաբերող պայմանագրային գնի մի մասը ստացվում է մինչև Խմբի կողմից այդ ծառայությունների մատուցումը: ՖՀՄՍ 15-ի համաձայն այդ գումարները ստացման պահին ճանաչվում են պայմանագրային պարտավորություն և հետագայում ժամանակի ընթացքում, երբ ծառայություններն արդեն մատուցվել են, ճանաչվում են հասույթ:

Հաշվի առնելով Խմբի՝ ապրանքների առաքման պրոֆիլի բնույթը՝ այս ծառայությունների մեծ մասը իրականացվում է միևնույն հաշվետու ժամանակաշրջանում, երբ հիմքում ընկած մետաղի խտանյութի հսկողությունը անցնում է հաճախորդին, և առաքման փոքր մասը, որը ենթակա է միջազգային առևտրի պայմաններին, հաշվետու ժամանակաշրջանում գտնվում է բեռնափոխադրման ընթացքում:

Բացի դրանից, բեռնափոխադրումներից/առաքման ծառայություններից հասույթը առանձին է բացահայտվել: Առանձնացված հասույթի հետ կապված բացահայտումները ներկայացված են Ծանոթագրություն 5-ում: Ստորև ներկայացված է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության և ֆինանսական վիճակի մասին հաշվետվության վրա այս փոփոխությունների ազդեցության համապարփակ ամփոփումը:

Այլ ազդեցություններ

Փոփոխությունը էական ազդեցություն չի ունեցել տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների վրա: Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության վրա գուտ ազդեցություն չի եղել:

Բեռնափոխադրումների և առաքման փոփոխության ազդեցության ամփոփ նկարագիրը

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (2018թ. հունվարի 1-ի և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ):

34. Հաշվապահական հաշվառման քաղաքականության և բացահայտումների փոփոխություններ (շարունակություն)**Նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)**

<i>ՀՀ դրամ '000</i>	<i>Զբաղիված շահույթ</i>
Զբաղիված շահույթ	
Վերջնական մնացորդը՝ ՀՀՄՍ 18-ի համաձայն (2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ)	34,663,659
Հասույթի հետաձգում՝ ՖՀՄՍ 15-ի համաձայն*	(812,594)
Վերոնշյալի հետ կապված հետաձգված հարկ	162,519
Վերանայված սկզբնական մնացորդ ՖՀՄՍ 15-ի համաձայն (2018թ. հունվարի 1-ի դրությամբ)	34,013,584
Ընդամենը սեփական կապիտալում փոփոխություններ ՖՀՄՍ 15-ի կիրառման հետևանքով	650,075

* Սա վերաբերում է 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 812,594 հազար ՀՀ դրամի չափով հասույթի հետաձգմանը բեռնափոխադրումների/առաքման ծառայությունների համար, որը կատարվել է 2018թ.-ին և, հետևաբար 2018թ.-ին ճանաչվել է եկամուտ:

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն (2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա)

Հասույթ	2017թ. Դեկտեմբերի 31	Առանձնացման ճշգրտում	2018թ. հունվարի 1 վերանայված
Պղնձի խտանյութ	148,586,010	(2,396,443)	146,189,567
Ֆերոմոլիբդեն	39,716,526	–	39,716,526
Պղնձի խտանյութի բեռնափոխադրման/առաքման ծառայություններ	–	2,396,443	2,396,443
	188,302,536	–	188,302,536

ՖՀՄՍ 9 Ֆինանսական գործիքներ

ՖՀՄՍ 9-ը փոխարինում է «*Ֆինանսական գործիքներ. ճանաչում և չափում*» ՀՀՄՍ 39-ին. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար՝ համախմբելով ֆինանսական գործիքների հաշվառման երեք ուղղությունները՝ դասակարգում և չափում, արժեզրկում, և հեջի հաշվառում: Խումբը ՖՀՄՍ 9-ը կիրառել է հետևյալ կարգով՝ սկզբնական կիրառման ամսաթիվը ընդունելով 2018թ. հունվարի 1-ը: Խումբը 2017թ.-ի համար չի վերաչափել ֆինանսական գործիքների համեմատական տեղեկատվությունը ՖՀՄՍ 9-ի շրջանակներում: Հետևաբար, 2017թ.-ի համեմատական տեղեկատվությունը պատրաստվել է ՀՀՄՍ 39-ի համաձայն և համադրելի չէ 2018թ.-ի համար ներկայացվող տեղեկատվության հետ: ՖՀՄՍ 9-ի կիրառման հետևանքով առաջացած տարբերությունները անմիջապես ճանաչվել են չբաշխված շահույթում 2018թ. հունվարի 1-ի դրությամբ և բացահայտված են ստորև:

ա) Դասակարգում և չափում

ՖՀՄՍ 9-ի համաձայն տեղի է ունեցել ֆինանսական ակտիվների դասակարգմանը և չափմանը վերաբերող պահանջների փոփոխություն: Նախկինում գոյություն ուներ ֆինանսական ակտիվների չորս դաս, այն են՝ փոխառություններ և դեբիտորական պարտքեր, իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, մինչև մարման ժամկետը պահվող և վաճառքի համար մատչելի: ՖՀՄՍ 9-ի համաձայն, ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես ամորտիզացված արժեքով հաշվառվող, իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող:

34. Հաշվապահական հաշվառման քաղաքականության և բացահայտումների փոփոխություններ (շարունակություն)**Նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)**

Պարտքային գործիքների դեպքում դասակարգումը հիմնված է երկու չափանիշի վրա՝ Խմբի՝ ակտիվների կառավարման բիզնես մոդելի, և թե արդյոք գործիքի պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են «բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ» (SPPI): Ֆինանսական ակտիվը կարող է չափվել ամորտիզացված արժեքով, եթե բավարարում են ստորև նշված երկու պահանջները.

- ▶ Բիզնես մոդել. Բիզնես մոդելի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները պայմանագրային դրամական հոսքեր հավաքագրելու նպատակով,
- ▶ Պայմանագրային դրամական հոսքեր. Գործիքի գծով պայմանագրային դրամական հոսքերը միայն վերաբերում են մայր գումարի և տոկոսների վճարումներին:

Խմբի բիզնես մոդելի գնահատումն իրականացվել է սկզբնական կիրառման ամսաթվին՝ 2018թ.-ի հունվարի 1-ին և հետագայում հետադարձ կարգով կիրառվել է այն ֆինանսական ակտիվների նկատմամբ, որոնք 2018թ.-ի հունվարի 1-ի դրությամբ չեն ապաճանաչվել: Գնահատումը, թե արդյոք պարտքային գործիքների պայմանագրային դրամական հոսքերը բավարարում են SPPI թեստի չափորոշիչներին, իրականացվել է ակտիվների սկզբնական ճանաչման ժամանակ առկա փաստերի և հանգամանքների հիման վրա:

ՖՀՄՍ 9-ի համաձայն դասակարգման և չափման պահանջները, բացառությամբ պայմանականորեն գնանշված վաճառքին առնչվող մնացորդների ներկայացմանը, Խմբի վրա էական ազդեցություն չեն ունեցել:

Ֆինանսական ակտիվներ

Խումբը նախկինում ՀՀՄՍ 39-ի համաձայն իրական արժեքով պահվող ֆինանսական ակտիվները շարունակում է չափել իրական արժեքով: Ստորև նկարագրված է Խմբի ֆինանսական ակտիվների դասակարգումների փոփոխությունները.

- ▶ Առևտրային դեբիտորական պարտքեր (ոչ ենթակա պայմանական գնանշման), նախկինում որպես փոխառություններ և դեբիտորական պարտքեր դասակարգված այլ ընթացիկ ֆինանսական ակտիվներ (օրինակ՝ համատեղ պայմանավորվածություններին տրված այլ դեբիտորական պարտքեր և փոխառություններ). սրանք գնահատվում են որպես պայմանագրային դրամական հոսքերը հավաքագրելու համար պահվող և առաջացնում են դրամական հոսքեր, որոնք իրենցից ներկայացնում են SPPI: Ներկայումս դրանք դասակարգվում և չափվում են որպես ամորտիզացված արժեքով հաշվառվող պարտքային գործիքներ:
- ▶ Առևտրային դեբիտորական պարտքեր (ենթակա պայմանական գնանշման) և գնորդման ժամանակաշրջանի ածանցյալ գործիքներ: Նախքան ՖՀՄՍ 9-ի ընդունումը, գնորդման ժամանակաշրջանի ընթացքում պայմանականորեն գնանշված վաճառքների ենթարկվածությունը ապրանքների գնի փոփոխությունների ռիսկին, նախկինում հանգեցրել է հիմնական առևտրային դեբիտորական պարտքերից ներկառուցված ածանցյալ գործիքների (գնորդման ժամանակաշրջանի ածանցյալ գործիքներ) առանձնացմանը և առանձին հաշվառմանը: ՖՀՄՍ 9-ի համաձայն, ներկառուցված ածանցյալ գործիքները, այլևս չեն առանձնացվում ֆինանսական ակտիվներից: Փոխարենը, առևտրային դեբիտորական պարտքի՝ ապրանքների ապագա գների շարժերի ռիսկին ենթարկվածությունը կհանգեցնի նրան, որ առևտրային դեբիտորական պարտքերը չեն անցնի SPPI թեստը: Հետևաբար, ներկայումս յուրաքանչյուր ժամանակաշրջան մինչև վերջնական կատարումը պահանջվում է բոլոր դեբիտորական պարտքերը չափել որպես իրական արժեքով հաշվառվող՝ իրական արժեքի հետագա փոփոխությունները ճանաչելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Խումբը իրական արժեքի այդպիսի փոփոխությունները ներկայացնում է որպես հասույթի վերաչափում: Այս փոփոխությունը ոչ էական ազդեցություն է ունեցել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Հիմնական ազդեցությունը եղել է ներկայացման և բացահայտման վրա, ներառյալ՝ «Իրական արժեքի չափումը» ՖՀՄՍ 13-ով սահմանված բացահայտումների վրա (Տե՛ս Ծան. 30):

34. Հաշվապահական հաշվառման քաղաքականության և բացահայտումների փոփոխություններ (շարունակություն)**Նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)**

Ընդհանուր առմամբ, ՖՀՄՍ 9-ի կիրառումից հետո Խումբն ունեցել է ֆինանսական ակտիվների հետևյալ պահանջվող կամ ընտրված վերադասակարգումները՝

ՀՀ դրամ '000	Չափումը համաձայն ՀՀՄՍ 39-ի		Վերադասա- կարգում	Վերաչափում Ակնկալվող վարկային կորուստներ	Համաձայն ՖՀՄՍ 9-ի	
	Դաս	Գումար			Գումար	Դաս
Ֆինանսական ակտիվներ						
Վաճառքի համար մատչելի ակտիվներից	AFS ¹	877,159	(877,159)	–	Կիրառելի չէ	Կիրառելի չէ
Դեպի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ներդրումներ			877,159	–	877,159	Իրական արժեքով՝ այլ համապարփա կ եկամուտով չափվող Անորոշված ված արժեքով չափվող
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	L&R ²	2,445,992	–	(479,877)	1,966,115	
Ընդամենը ակտիվներ		3,323,151	–	(479,877)	2,843,274	

¹ AFS՝ վաճառքի համար մատչելի

² L&R՝ Վարկեր և դեբիտորական պարտքեր

Ստորև նկարագրված է ՖՀՄՍ 9-ին անցման ազդեցությունը չբաշխված շահույթի վրա.

ՀՀ դրամ '000	Չբաշխված շահույթ
Չբաշխված շահույթ	
Վերջնական մնացորդը՝ համաձայն ՀՀՄՍ 39-ի (2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ)	36,511,813
ՖՀՄՍ 9-ի համաձայն ակնկալվող վարկային կորուստների ճանաչում	(479,877)
Վերոնշյալի հետ կապված հետաձգված հարկ	95,975
Վերանայված սկզբնական մնացորդ՝ համաձայն ՖՀՄՍ 9-ի (2018թ. հունվարի 1-ի դրությամբ)	36,127,911
Ընդամենը սեփական կապիտալում փոփոխություն ՖՀՄՍ 9-ի կիրառման հետևանքով	383,902

Հետևյալ աղյուսակը համադրում է ՀՀՄՍ 39-ի համաձայն հաշվարկված սկզբնական վարկային կորուստների պահուստները ՖՀՄՍ 9-ի համաձայն հաշվարկված ակնկալվող վարկային կորուստների պահուստների հետ

ՀՀ դրամ '000	ՀՀՄՍ 39-ի համաձայն հաշվարկված ակնկալվող վարկային կորուստների պահուստ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Վերաչափում	ՖՀՄՍ 9-ի համաձայն հաշվարկված ակնկալվող վարկային կորուստների պահուստ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ
Արժեզրկման պահուստ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի գծով	–	479,877	479,877
	–	479,877	479,877

Ֆինանսական պարտավորություններ

Խումբը որևէ ֆինանսական պարտավորություն չի սահմանել որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Խմբի ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման հետ կապված փոփոխություններ չեն եղել:

34. Հաշվապահական հաշվառման քաղաքականության և բացահայտումների փոփոխություններ (շարունակություն)**Նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)****Այլ ազդեցություններ**

Փոփոխությունը էական ազդեցություն չի ունեցել Խմբի դրամական հոսքերի մասին հաշվետվության վրա:

բ) Արժեզրկում

ՖՀՄՍ 9-ի կիրառումը սկզբունքորեն փոխել է Խմբի կողմից իրականացվող տրված փոխառությունների, և այլ դեբիտորական պարտքերի, բանկային հաշիվների և ավանդների արժեզրկման հաշվառումը: ՀՀՄՍ 39-ով նախատեսված կրած վնասների մոտեցումը փոխարինվել է հետագա ժամանակաշրջաններում ակնկալվող վարկային կորուստների (ԱՎԿ) մոտեցմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Խմբի բոլոր առևտրային դեբիտորական պարտքերը (ոչ ենթակա պայմանական գնանշման) և այլ ընթացիկ առևտրային դեբիտորական պարտքերը, որոնք Խումբը չափում է ամորտիզացված արժեքով, կարճաժամկետ են (այսինքն՝ ունեն 12 ամսից ավելի քիչ ժամկետայնություն), ինչպես նաև Խմբի պարտքային վարկանիշը և կիրառվող ռիսկերի կառավարման քաղաքականությունը, անցումը ապագային միտված ակնկալվող վարկային կորուստների մոտեցմանը չի ունեցել էական ազդեցություն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա:

35. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած իրադարձություններ

2019թ. հունվարից մինչև 2019թ. մարտը Խումբը գրավով ապահովված վարկերի գծով հայկական բանկերին կատարել է 18,587 հազար ԱՄՆ դոլարի չափով (9,064,657 հազար ՀՀ դրամ) վճարումներ, ներառյալ տոկոսագումարների վճարումները:

2019թ. մարտին Խումբը կնքել է գավով ապահովված վարկի պայմանագիր և ստացել է 70,000 հազար ԱՄՆ դոլարի (34,022,955 հազար ՀՀ դրամ) չափով վարկ: Վարկը ենթակա է մարման 2022թ. հունվարին:

2019թ. մարտին Խումբը 34,830 հազար ԱՄՆ դոլարի չափով (17,015,479 հազար ՀՀ դրամ) վճարել է ոչ ֆինանսական կազմակերպությունից ներգրավված գրավով չապահովված փոխառությունները:

36. Հրապարակված, բայց դեռևս ուժի մեջ չմտած ստանդարտներ

Խումբը ողջամտորեն ակնկալում է, որ հրապարակված, բայց դեռևս Խմբի ֆինանսական հաշվետվությունների թողարկման ամսաթվին ուժի մեջ չմտած ստանդարտներն ու մեկնաբանությունները կունենան ազդեցություն իր բացահայտումների, ֆինանսական վիճակի կամ ֆինանսական արդյունքների վրա, եթե կիրառվեն ապագա ամսաթվին, որը ներկայացված է ստորև: Խումբը պատրաստվում է ընդունել այդ ստանդարտները, երբ դրանք ուժի մեջ մտնեն: Հրապարակված, բայց դեռևս ուժի մեջ չմտած այլ ստանդարտներն ու մեկնաբանությունները, որոնք ակնկալվում է, որ ազդեցություն չեն ունենա Խմբի վրա, նկարագրված չեն:

ՖՀՄՍ 16՝ «Վարձակալություն»

ՖՀՄՍ 16-ը հրապարակվել է 2016թ.-ի հունվարին և փոխարինում է «Վարձակալություն» ՀՀՄՍ 17-ին, «Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում» ՖՀՄՍ 4-ին, «Գործառնական վարձակալություն. խրախուսող պայմաններ» ՄՄԿ 15-ին և «Վարձակալության իրավական ձև ներառող գործարքների բովանդակության գնահատումը» ՄՄԿ 27-ին: ՖՀՄՍ 16-ը սահմանում է վարձակալության ճանաչման, չափման, ներկայացման և բացահայտման սկզբունքները և պահանջում է, որ վարձակալները ՀՀՄՍ 17-ի համաձայն ֆինանսական վարձակալության հաշվառման նման, բոլոր վարձակալությունները հաշվառեն միասնական հաշվեկշռային մոդելի համաձայն: Ստանդարտը վարձակալության բացառությունների վերաբերյալ պարունակում է երկու ճանաչողական օրինակ, այն է՝ ցածր արժեք ունեցող ակտիվների վարձակալությունը (օր. անհատական համակարգիչները) և կարճաժամկետ վարձակալությունը (օր.՝ 12 ամիս և պակաս ժամկետայնություն ունեցող վարձակալություններ): Վարձակալության մեկնարկի ամսաթվին վարձակալը պետք է ճանաչի վարձակալական վճարներ կատարելու պարտավորություն (այսինքն՝ վարձակալության գծով պարտավորություն) և ակտիվ, որը վարձակալության ժամկետի ընթացքում վարձակալության հիմքում ընկած ակտիվի օգտագործման իրավունքն է (այսինքն՝ ակտիվի օգտագործման իրավունք): Վարձակալը պետք է առանձին ճանաչի վարձակալության գծով պարտավորության տոկոսային ծախսը և ակտիվի օգտագործման իրավունքի գծով մաշվածության ծախսը:

36. Հրապարակված, բայց դեռևս ուժի մեջ չմտած ստանդարտներ (շարունակություն)

Որոշակի իրադարձություններ տեղի ունենալու դեպքում (օրինակ՝ վարձակալության պայմանի փոփոխության դեպքում, վարձակալության վճարումների սահմանման նպատակով օգտագործվող տոկոսադրույքի ինդեքսի փոփոխության հետևանքով վարձակալության ապագա վճարումների փոփոխություն) վարձակալը պետք է վերաչափի վարձակալության գծով պարտավորությունը: Վարձակալը մեծ մասամբ վարձակալության գծով պարտավորության վերաչափման գումարը պետք է ճանաչի որպես ակտիվի օգտագործման իրավունքի ճշգրտում: ՖՀՄՍ 16-ի համաձայն վարձատուի կողմից իրականացվող հաշվառումը, ըստ էության, մնացել է անփոփոխ ներկայումս գործող ՀՀՄՍ 17-ով սահմանված հաշվառումից և տարանջատում է վարձակալության երկու տեսակ՝ գործառնական և ֆինանսական վարձակալություն:

ՖՀՄՍ 16-ը վարձակալից և վարձատուից պահանջում է իրականացնել ավելի լայնածավալ բացահայտումներ, քան ՀՀՄՍ 17-ի համաձայն:

Անցումը ՖՀՄՍ 16-ին

ՖՀՄՍ 16-ը ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Ստանդարտի վաղաժամ կիրառությունը թույլատրվում է, սակայն ոչ ավելի շուտ, քան Խումբը կիրառել է ՖՀՄՍ 15-ը: Վարձակալը կարող է ստանդարտը կիրառել՝ օգտագործելով կամ ամբողջական հետընթաց կիրառման կամ ձևափոխված հետընթաց կիրառման մոտեցումը: Ստանդարտի անցումային դրույթները թույլ են տալիս որոշակի պարզեցումներ: Խումբը նախատեսում է ընդունել ՖՀՄՍ 16-ը՝ օգտագործելով ձևափոխված հետընթաց կիրառման մոտեցումը, որը նշանակում է, որ այն ստանդարտը կիրառելու է 2019թ.-ի հունվարի 1-ից, իսկ ընդունման կուտակային ազդեցությունը պետք է ճանաչի 2019թ. հունվարի 1-ին, և համեմատական տեղեկությունները չեն վերաչափվի: Խումբը պետք է ընտրի օգտագործել ստանդարտով սահմանված բացառությունները վարձակալության այն պայմանագրերի համար, որոնց վարձակալության ժամկետը վերջանում է սկզբնական կիրառման ամսաթվից սկսած 12 ամիսների ընթացքում և այն վարձակալության պայմանագրերի համար, որոնց հիմքում ընկած ակտիվը ունի ցածր արժեք:

2018թ.-ին Խումբը շարունակել է իրականացնել ՖՀՄՍ 16-ի ներդրման ազդեցության մանրամասն գնահատումը: 2018թ.-ի սկզբի ժամանակաշրջանի մեծ մասն օգտագործվել է պայմանագրերի վերանայման, հաշվառման ազդեցության գնահատմանը աջակցելու նպատակով տեղեկատվության համախմբման վրա և բացահայտելու, թե որտեղ են պահանջվում հիմնական քաղաքականության որոշումները: Խումբը ներդնելու է վարձակալության հաշվառման նոր համակարգ, որը օգտագործվելու է Խմբի վարձակալության պայմանագրերի մեծ մասի համար: Ներկայումս աշխատանքներ են տարվում համակարգը կարգավորելու, պահանջվող տեղեկատվությունը հավաքագրելու ու ներբեռնելու և համակարգը թեստավորելու ուղղությամբ: Գործընթացների բարելավման և Խմբի հաշվառման մեկնաբանությունների վերաբերյալ եզրակացություններ կազմելու ուղղությամբ հետագա աշխատանքները շարունակվում են: Բացի դրանից, Խումբը տեղյակ է, որ այլ կազմակերպություններում ներդրման աշխատանքները շարունակվում են և նոր ստանդարտի գործնական կիրառման աշխատանքները շարունակվելու են զարգանալ և առաջ գնալ: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ Խումբը մանրամասն մոնիթորինգի կենթարկի այս զարգացումները և կգնահատի, թե արդյոք կա որևէ ազդեցություն Խմբի ունեցած դիրքերի վրա:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվության վրա ազդեցությունը (աճ/նվազում) 2019թ. հունվարի 1-ի դրությամբ.

‘000 ՀՀ դրամ

Ակտիվներ

Հիմնական միջոցներ (Ակտիվների օգտագործման իրավունք)

6,385,108

Պարտավորություններ

Վարձակալության գծով պարտավորություններ

(6,385,108)

Մեփական կապիտալի վրա զուտ ազդեցությունը

—

36. Հրապարակված, բայց դեռևս ուժի մեջ չմտած ստանդարտներ (շարունակություն)*Մեկիական կապիտալի վրա գույտ ազդեցությունը*

Խմբի կողմից կատարված աշխատանքները ցույց են տալիս, որ ակնկալվում է, որ վարձակալության վերաբերյալ նոր ստանդարտը էական ազդեցություն կունենա Խմբի ֆինանսական հաշվետվություններին վրա, քանի որ այն էականորեն ավելացնում է Խմբի ճանաչված ակտիվներն ու պարտավորությունները (ինչպես վերնում նկարագրված է): Բացի դրանից, գործառնական վարձակալության ներկայումս գործող հաշվառման հետ համեմատած, ազդեցություն կունենա ծախսերի դասակարգման ու ժամկետների վրա, որը կհանգեցնի Խմբի գործառնական վարձակալության որոշակի բարեփոխումների, մինչդեռ դրա տոկոսային ծախսերը կավելանան: Մա պայմանավորված է այն վարձակալության հետ կապված ծախսերի հաշվառման փոփոխությամբ, որոնք ՀՀՄՍ 17-ի համաձայն դասակարգված են եղել որպես գործառնական վարձակալություն: Բացի դրանից, գործառնական վարձակալությունից ստացվող դրամական հոսքերի և ֆինանսական վարձակալությունից ստացվող դրամական հոսքերի դասակարգումը նույնպես փոխվելու է: Խմբի համար սովորաբար կիրառվող մի շարք ֆինանսական գործակիցները և կատարողականի չափանիշները, օգտագործելով առկա սահմանումները, նույնպես կենթարկվեն փոփոխության, ներառյալ՝ գույտ պարտքը, լծակավորումը, հասույթը նախքան շահութահարկի հարկումը և մաշվածության ու ամորտիզացիայի մասհանումները, մեկ միավորի ծախսերը և գործառնական դրամական հոսքերը:

Նոր ստանդարտի համաձայն վարձակալության հիմնական աղբյուրները լինելու են Խմբի ներկայումս առկա գործառնական վարձակալությունները: «Վարձակալություն» ՀՀՄՍ 17-ի համաձայն Խմբի գործառնական վարձակալության գծով պարտավորությունների (չդիսկոնտավորված) վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է «Պարտավորություններ – պարտավորություններ գործառնական վարձակալության գծով – խումբը՝ որպես վարձակալ» Ծանոթագրություն 31-ում:

ՀՀՄՄԿ մեկնաբանություն 23՝ «Անորոշություն շահութահարկի հաշվարկման կանոնների վերաբերյալ»

Մեկնաբանությունը վերաբերում է շահութահարկի հաշվառմանը, երբ հարկի հաշվարկը պարունակում է անորոշություն, որն ազդում է ՀՀՄՍ 12-ի կիրառման վրա: Մեկնաբանությունը չի կիրառվում ՀՀՄՍ 12-ի շրջանակից դուրս հարկերի կամ հավաքագրումների վրա, ինչպես նաև չի պարունակում կոնկրետ պահանջներ անորոշ հարկային մեկնաբանությունների հետ կապված տոկոսների և տույժերի վերաբերյալ: Մեկնաբանությունը, մասնավորապես, վերաբերում է հետևյալին.

- արդյոք կազմակերպությունը առանձին է հաշվի առնում անորոշ հարկային մեկնաբանությունները,
- կազմակերպության ենթադրությունները՝ կապված հարկային մարմինների կողմից հարկման մոտեցումների մեկնաբանությունների ստուգման հետ,
- ինչպես է կազմակերպությունը սահմանում հարկվող շահույթը (հարկային վնասը), հարկման բազան, չօգտագործված հարկային վնասները, չօգտագործված հարկային գերավճարները և հարկային դրույքաչափերը,
- ինչպես է Ընկերությունը դիտարկում փաստերի և հանգամանքների փոփոխությունները:

Խումբը պետք է որոշի, թե արդյոք յուրաքանչյուր անորոշ հարկային մեկնաբանություն պետք է դիտարկել առանձին, թե մեկ կամ մի քանի այլ անորոշ հարկային մեկնաբանությունների հետ միասին: Պետք է կիրառել այն մոտեցումը, որն ավելի լավ է կանխատեսում անորոշության հստակեցման արդյունքը: Մեկնաբանությունն ուժի մեջ է մտնում 2019 թ.-ի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար, սակայն գոյություն ունեն որոշակի անցումային պարզեցումներ: Խումբը կսկսի կիրառել մեկնաբանությունը գործողության մեջ մտնելու ամսաթվից: Քանի որ Խումբը գործունեություն է իրականացնում բարդ հարկային միջավայրում, մեկնաբանության կիրառումը կազմի իր ֆինանսական հաշվետվությունների վրա: Ավելին՝ Խումբը մեկնաբանությունը ժամանակին կիրառելու վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը ձեռք բերելու նպատակով կարող է սահմանել գործընթացներ և ընթացակարգեր:

36. Հրապարակված, բայց դեռևս ուժի մեջ չմտած ստանդարտներ (շարունակություն)

Տարեկան բարեփոխումներ՝ 2015-2017թթ. ժամանակաշրջան (թողարկված 2017թ. դեկտեմբերին)

Այս բարեփոխումները ներառում են.

ՖՀՄՄ 3՝ «ձեռնարկատիրական գործունեության միավորումներ»

Փոփոխությունները հստակեցնում են, որ եթե Խումբը ձեռք է բերում վերահսկողություն համատեղ գործունեության նկատմամբ, ապա այն կիրառում է փուլերով ձեռքբերված ձեռնարկատիրական գործունեության միավորումների նկատմամբ սահմանված պահանջները, ներառյալ՝ համատեղ գործունեության ակտիվներում և պարտավորություններում նախկինում պահվող մասնակցության իրական արժեքի վերաչափումը: Այդպիսով, ձեռքբերողը վերաչափում է համատեղ ձեռնարկությունում իր նախկինում պահվող մասնակցությունը:

Խումբը կիրառում է այս փոփոխությունները այն ձեռնարկատիրական գործունեության միավորումների նկատմամբ, որոնց ձեռքբերման ամսաթիվը առաջին հաշվետու ժամանակաշրջանի սկզբում է կամ դրանից հետո կամ 2019թ. հունվարի 1-ից հետո, ընդ որում՝ վաղաժամկետ կիրառությունը թույլատրվում է: Այս փոփոխությունները կկիրառվեն Խմբի ապագա ձեռնարկատիրական գործունեության միավորումների նկատմամբ:

ՀՀՄՄ 12՝ «Շահութահարկ»

Փոփոխությունները հստակեցնում են, որ շահաբաժինների շահութահարկային հետևանքներն ավելի շատ կապված են բաշխվող շահույթ առաջացրած նախկին գործարքների կամ իրադարձությունների հետ, քան սեփականատերերին կատարված բաշխումների հետ: Հետևաբար, Խումբը շահաբաժինների շահութահարկային հետևանքները ճանաչում է շահույթում կամ վնասում, այլ համապարփակ եկամտում կամ սեփական կապիտալում՝ կախված նրանից, թե Խումբն սկզբնապես որտեղ է ճանաչել նախկին գործարքներն ու իրադարձությունները:

Խումբը կիրառում է այս փոփոխությունները 2019թ. -ի հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար, ընդ որում՝ վաղաժամկետ կիրառությունը թույլատրվում է: Երբ Խումբն առաջին անգամ կիրառել է այս փոփոխությունները, այն կիրառել է ամենավաղ համեմատական ժամանակաշրջանի սկզբում կամ դրանից հետո ճանաչված շահաբաժինների շահութահարկային հետևանքների նկատմամբ: Քանի որ ներկայումս Խմբի կողմից կիրառվող պրակտիկան համապատասխանում է այս փոփոխություններին, Խումբը ֆինանսական հաշվետվությունների վրա որևէ ազդեցություն չի ակնկալում:

ՀՀՄՄ 23՝ «Փոխառության ծախսեր»

Այս փոփոխությունները պարզաբանում են, որ Խումբն ընդհանուր փոխառությունների մեջ է ներառում այն փոխառությունը, որն ի սկզբանե ձեռք է բերվել որակավորվող ակտիվը զարգացնելու նպատակով, երբ ակտիվը օգտագործման կամ վաճառքի համար պատրաստվելու աշխատանքները մեծ մասամբ ավարտված են:

Խումբը կիրառում է փոփոխությունները այն փոխառության ծախսումների նկատմամբ, որոնք կրել է տվյալ տարեկան հաշվետու ժամանակաշրջանի սկզբին կամ դրանից հետո, որի ընթացքում Խումբն առաջին անգամ կիրառում է այդ փոփոխությունները: Խումբը կիրառում է այս փոփոխությունները 2019թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար, ընդ որում, վաղաժամկետ կիրառությունը թույլատրվում է: Այս փոփոխությունները ներկայումս կիրառելի չեն Խմբի համար, բայց կարող են կիրառվել ապագա գործարքների ժամանակ:

37. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունները հետևողականորեն կիրառվել են համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

ա) Ձեռնարկատիրական գործունեության միավորում

Ձեռնարկատիրական գործունեության միավորումները հաշվառվում են՝ օգտագործելով ձեռքբերման մեթոդը: Ձեռքբերման արժեքը չափվում է որպես ձեռքբերման օրվա դրությամբ փոխանցված հատուցման իրական արժեքի և ձեռքբերվող ընկերության ցանկացած չվերահսկվող բաժնեմասի հանրագումար: Յուրաքանչյուր ձեռնարկատիրական գործունեության միավորման համար խումբը որոշում է արդյոք ձեռքբերված կազմակերպության չվերահսկվող բաժնեմասը չափել իրական արժեքով, թե ձեռքբերված ընկերության որոշելի գույք ակտիվների համապատասխան մասի գումարի չափով: Առաջացած ձեռքբերման ծախսումները ծախսագրվում են որպես վարչական ծախսեր:

Եթե խումբը ձեռք է բերում ձեռնարկատիրական գործունեություն, ապա ֆինանսական ակտիվները և պարտավորությունները դասակարգվում են պայմանագրի պայմաններին, տնտեսական բնույթին և ձեռքբերման պահին այլ էական պայմաններին համապատասխան: Սա ներառում է ձեռքբերվող կազմակերպության հիմնական պայմանագրերում ներկառուցված ածանցյալ գործիքների տարանջատման անհրաժեշտության վերլուծությունը:

Որպես ձեռնարկատիրական գործունեության միավորման մաս, խումբը գնահատում է, արդյոք ձեռքբերվող ընկերությունը որևէ գործառնական վարձակալության պայմանագրեր ունի, որոնք անբարենպաստ են, այսինքն՝ վարձակալության պայմանագրի վճարները գերազանցում են նման գործարքների շուկայական արժեքը: Ձեռքբերման պահին իրական արժեքի գնահատման ժամանակ՝ հանքային պաշարները, ռեսուրսները և հետախուզման պոտենցիալը, որոնք կարելի է արժանահավատորեն չափել, ճանաչվում են առանձին: Այլ պոտենցիալ պաշարները, ռեսուրսները և իրավունքները, որոնց իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել, առանձին չեն ճանաչվում և ներառվում են գույքվիլի մեջ:

Ձեռնարկատիրական գործունեության փուլային ձեռքբերման դեպքում խումբը ձեռքբերվող կազմակերպությունում իր նախկինում ունեցած բաժնեմասը վերաչափում է ձեռքբերման ամսաթվի դրությամբ իրական արժեքով և արդյունքում ստացված օգուտը կամ վնասը ճանաչի շահույթում կամ վնասում: Այնուհետև դա հաշվի առնվում գույքվիլի հաշվարկում:

Ցանկացած պայմանական հատուցում, որը պետք է փոխանցվի ձեռքբերողի կողմից, ճանաչվում է ձեռքբերման պահին իրական արժեքով: Պայմանական հատուցում, որը դասակարգվել է որպես ակտիվ կամ պարտավորություն, որը հանդիսանում է ֆինանսական գործիք էՀՄՍ 39-ի շրջանակներում, չափվում է իրական արժեքով, իրական արժեքի փոփոխություններն էլ արտացոլվում են շահույթում կամ վնասում կամ որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքների փոփոխություն: Եթե պայմանական հատուցումը չի ներառվում էՀՄՍ 39-ի շրջանակներում, այն չափվում է համապատասխան ՖՀՄՍ-ի համաձայն: Եթե պայմանական հատուցումը դասակարգվում է որպես սեփական կապիտալ, ապա այն չի վերաչափվում՝ մինչև կապիտալում ամբողջական մարումը:

Գույքվիլը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով, որը հանդիսանում է փոխանցված հատուցման և ճանաչված չվերահսկվող բաժնեմասի հանրագումարի և ձեռքբերված որոշելի գույք ակտիվների և ստանձնած պարտավորությունների իրական արժեքների տարբերությունը: Եթե որոշելի գույք ակտիվների իրական արժեքը գերազանցում է փոխանցված հատուցման գումարը, խումբը վերստուգում է արդյոք այն ճիշտ է բացահայտել բոլոր որոշելի ակտիվները և ստանձնած պարտավորությունները և վերանայում է ձեռքբերման ամսաթվին ճանաչվող գումարների հաշվարկման ընթացակարգերը: Եթե փոխհատուցումը, այնուամենայնիվ, ավելի քիչ է, քան ձեռքբերված գույք ակտիվների իրական արժեքը, ապա տարբերությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում:

Սկզբնական ճանաչումից հետո գույքվիլը չափվում է սկզբնական արժեքով՝ նվազեցնելով արժեզրկումից կուտակված ցանկացած կորստով: Արժեզրկման ստուգման նպատակով ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում ձեռքբերված գույքվիլը, ձեռքբերման ամսաթվից սկսած, պետք է բաշխվի խմբի այն դրամաստեղծ միավորներին, որոնք ակնկալվում է, որ կստանան օգուտներ ձեռնարկատիրական գործունեության միավորումից՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք ձեռքբերվողի այլ ակտիվները կամ պարտավորությունները վերագրված են այդ միավորներին, թե՛ ոչ:

Եթե գույքվիլը կազմում է դրամաստեղծ ստորաբաժանման մաս, և այդ ստորաբաժանման մի մասն օտարվում է, օտարվող մասին վերագրելի գույքվիլը ընդգրկվում է այդ գործունեության հաշվեկշռային արժեքի մեջ օտարումից շահույթը կամ վնասը որոշելիս: Այս պարագայում օտարվող գույքվիլը գնահատվում է օտարվող գործունեության արժեքի և դրամական միջոցներ ստեղծող ստորաբաժանման մնացած մասի արժեքի հարաբերության հիման վրա:

Խումբը բացահայտել է երկու դրամաստեղծ միավոր, որոնք ներկայացնում են խմբի երկու ընկերությունները՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ ՓԲ ընկերությունը և Լեռ-Էքս ՍՊ ընկերությունը:

37. Հաշվապահական հաշվառման նշանակալի բաղաբաղականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)**բ) Ֆինանսական գործիքներ – սկզբնական ճանաչում և հետագա չափում**

Ֆինանսական գործիքը պայմանագիր է, որը մի կազմակերպությունում առաջացնում է ֆինանսական ակտիվ, իսկ մյուսում՝ ֆինանսական պարտավորություն կամ կապիտալի գործիք:

Ֆինանսական ակտիվներ***Սկզբնական ճանաչում և չափում***

Սկզբնական ճանաչման ժամանակ ֆինանսական ակտիվները դասակարգվում և հետագայում չափվում են որպես ամորտիզացված արժեքով հաշվառվող, իրական արժեքով հաշվառվող այլ համապարփակ եկամուտով չափվող, իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Սկզբնական ճանաչման ժամանակ պարտքային գործիքներ հանդիսացող ֆինանսական ակտիվների դասակարգումը կախված է վերջիններիս դրամական հոսքերի բնույթից և դրանք կառավարելու խմբի բիզնես մոդելից: Բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսավորման բաղադրիչ, կամ որոնց համար խումբն օգտագործել է կիրառելի նպատակահարմար մոտեցում՝ խումբն սկզբնապես ֆինանսական ակտիվը չափում է իր իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվը իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող չէ: Այն առևտրային դեբիտորական պարտքերը, որոնք չեն պարունակում էական ֆինանսավորման բաղադրիչ, կամ որոնց համար խումբը օգտագործել է կիրառելի նպատակահարմար մոտեցում և որոնք ունեն 1 տարի և պակաս ժամկետայնություն, չափվում են ՖՀՄՄ 15-ով սահմանված գործարքի գնով:

Որպեսզի ֆինանսական ակտիվը դասակարգվի և չափվի որպես ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով հաշվառվող այլ համապարփակ եկամուտով չափվող, անհրաժեշտ է, որ վերջինս առաջացնի դրամական հոսքեր, որոնք «բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներն են» (SPPI):

Այս գնահատումը կոչվում է SPPI թեստ և կատարվում է գործիքի մակարդակով:

Ֆինանսական ակտիվների կառավարման խմբի բիզնես մոդելը ներկայացնում է, թե ինչպես է դրամական հոսքեր ձևավորելու նպատակով վերջինս կառավարում իր ֆինանսական ակտիվները: Բիզնես մոդելը սահմանում է, թե արդյոք դրամական հոսքերը ձևավորվում են պայմանագրային դրամական հոսքերի հավաքագրումից, ֆինանսական ակտիվների վաճառքից կամ երկուսից միաժամանակ:

Ֆինանսական ակտիվների ձեռքբերումները կամ վաճառքները, որոնք պահանջում են ակտիվների մատակարարում շուկայում գործող կարգավորման միջոցով կամ գործարար սովորույթով (սովորական գործարքներում) սահմանված ժամկետի ընթացքում, ճանաչվում են գործարքի ամսաթվին, այսինքն՝ այն ամսաթվին, երբ խումբը ձեռք է բերել կամ վաճառել ակտիվը:

Հետագա չափում

Հետագա չափման նպատակներով ֆինանսական ակտիվները դասակարգվում են չորս դասերից մեկում.

- Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ (պարտքային գործիքներ),
- Իրական արժեքով հաշվառվող այլ համապարփակ եկամուտով չափվող ֆինանսական ակտիվներ, որոնց կուտակված օգուտները և կորուստները ապաճանաչման ժամանակ վերադասակարգվում են (պարտքային գործիքներ),
- Իրական արժեքով հաշվառվող այլ համապարփակ եկամուտով չափվող ֆինանսական ակտիվներ, որոնց կուտակված օգուտները կամ կորուստները ապաճանաչման ժամանակ չեն վերադասակարգվում (կապիտալի գործիքներ),
- Իրական արժեքով հաշվառվող շահույթ/վնասով չափվող ֆինանսական ակտիվներ:

37. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)**բ) Ֆինանսական գործիքներ. սկզբնական ճանաչումը և հետագա չափումը (շարունակություն)****Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ (պարտքային գործիքներ)**

Խմբին առավել բնորոշ է ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների դասը: Խումբը ֆինանսական ակտիվները չափում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարում են ստորև թվարկված երկու պայմանները.

- Ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է ֆինանսական ակտիվները պահելը՝ պայմանագրային դրամական հոսքերը հավաքագրելու նպատակով, և
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներն են:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների հետագա չափումներն իրականացվում են՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, և ենթակա են արժեզրկման գնահատման: Օգուտներն ու կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում, եթե ակտիվը ապաճանաչվում է, վերանայվում է կամ արժեզրկվում:

Խմբի ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներում ներառվում են բանկային հաշիվները և ավանդները, առևտրային և այլ դեբիտորական պարտքերը (ոչ ենթակա պայմանական գնանշման) և տրված փոխառությունները:

Իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ

Իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվները ներառում են առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվները, օրինակ՝ ածանցյալ գործիքները, սկզբնական ճանաչման ժամանակ իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող դասակարգված ֆինանսական ակտիվները, օրինակ՝ պարտքային կամ կապիտալի գործիքները կամ ֆինանսական ակտիվները, որոնք պետք է պարտադիր չափվեն իրական արժեքով, այսինքն՝ չեն անցել SPPI թեստը:

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես առևտրային նպատակով պահվող, եթե դրանք ձեռք են բերվել առաջիկայում վաճառելու կամ հետգնման նպատակով: Ածանցյալ գործիքները, ներառյալ՝ առանձնացված ներկառուցված ածանցյալ գործիքները, նույնպես դասակարգվում են որպես առևտրային նպատակով պահվող, եթե դրանք չեն դասակարգվել որպես հեջավորման արդյունավետ գործիք: Ֆինանսական ակտիվները, որոնց դրամական միջոցների հոսքերը չեն անցնում SPPI թեստը, պետք է դասակարգվեն և չափվեն որպես իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող՝ անկախ բիզնես մոդելից:

Չնայած պարտքային գործիքների՝ ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով հաշվառվող այլ համապարփակ եկամուտով չափվող դասակարգվելու չափանիշներին, ինչպես վերևում նկարագրված է, պարտքային գործիքները կարող են նախատեսվել սկզբնական ճանաչման ժամանակ որպես իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե այն վերացնում կամ էապես նվազեցնում է հաշվառման անհամապատասխանությունը:

Իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվառվում են իրական արժեքով, իսկ իրական արժեքի գուտ փոփոխությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Համակցված պայմանագրում ներկառուցված ածանցյալ գործիքը ֆինանսական պարտավորության կամ ոչ ֆինանսական հիմնական պայմանագրի հետ միասին, առանձնացվում է հիմնական պայմանագրից և հաշվառվում է որպես առանձին ածանցյալ գործիք, եթե տնտեսական բնութագիրները և ռիսկերը անմիջականորեն կապված չեն հիմնական պայմանագրի հետ, ներկառուցված ածանցյալ գործիքի նույն պայմաններով առանձնացված գործիքը բավարարում է ածանցյալ գործիքի սահմանմանը և համակցված պայմանագիրը չի չափվում որպես իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Ներկառուցված ածանցյալ գործիքները չափվում են իրական արժեքով և իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

37. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)**բ) Ֆինանսական գործիքներ. սկզբնական ճանաչումը և հետագա չափումը (շարունակություն)****Իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ (շարունակություն)**

Վերագնահատում տեղի է ունենում այն դեպքում, երբ պայմանագրի պայմանները փոփոխվում են, որը էականորեն ձևափոխում է դրամական միջոցների հոսքերը, որոնք հակառակ դեպքում կպահանջվեին, կամ ֆինանսական ակտիվը իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող դասից վերադասակարգվում է: Քանի որ ՖՀՄՍ 9-ը ֆինանսական ակտիվների համար նախատեսում է SPPI թեստ, ֆինանսական ակտիվների համար ներկառուցված ածանցյալ գործիքների առանձնացումը այլևս անհրաժեշտ չէ: Ներկառուցված ածանցյալ գործիքը սովորաբար հանգեցնում է նրան, որ ֆինանսական ակտիվը չի անցնում SPPI թեստը և, հետևաբար, պահանջվում է, որ գործիքը ամբողջությամբ չափվի որպես իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Մա կիրառելի է Խմբի առևտրային դերիտորական պարտքերի (ենթակա է պայմանական գնանշման) համար: Այս դերիտորական պարտքերը վերաբերում են վաճառքների պայմանագրերին, երբ վաճառքի գինը որոշվում է հաճախորդին առաքումն իրականացնելուց հետո՝ հիմք ընդունելով պայմանագրով սահմանված համապատասխան գնորդման ժամանակաշրջանի շուկայական գինը: Ապրանքի գնի փոփոխությունների ռիսկին ենթարկվածությունը հանգեցնում է նրան, որ նման առևտրային դերիտորական պարտքերը չեն անցնում SPPI թեստը: Արդյունքում, այս դերիտորական պարտքերը չափվում են որպես իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող համապատասխան վաճառքի ճանաչման ամսաթվից սկսած, և հետագա փոփոխությունները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես հասույթի վերաչափում:

Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվը (կամ, կիրառելիության դեպքում, ֆինանսական ակտիվի մի մասը կամ միևնույն ֆինանսական ակտիվների խումբը) հիմնականում ապաճանաչվում է (այսինքն՝ հանվում է Խմբի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից), երբ

- ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցրել են իրենց ուժը, կամ
- Խումբը փոխանցել է ակտիվից դրամական միջոցների հոսքերի ստացման իրավունքները կամ փոխանցման համաձայնագրի համաձայն ստանձնել է ստացված դրամական միջոցների հոսքերը ամբողջությամբ երրորդ կողմին վճարելու պարտականություն առանց էական ուշացման, և ա) Խումբը փոխանցել է, ըստ էության, ակտիվի բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ բ) Խումբը երբեք չի փոխանցել կամ պահպանել, ըստ էության, ակտիվի բոլոր ռիսկերն ու հատույցները, բայց փոխանցել է ակտիվի հսկողությունը:

Երբ Խումբը փոխանցել է ակտիվից դրամական միջոցների հոսքերի ստացման իրավունքները կամ ձեռք է բերել փոխանցման համաձայնագիր, վերջինս պետք է գնահատի, թե ինչ չափով է պահպանել ակտիվի սեփականության հետ կապված ռիսկերն ու հատույցները:

Երբ Խումբը ո՛չ փոխանցել է, ո՛չ պահպանել է ակտիվի, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, ոչ էլ փոխանցել է ակտիվի հսկողությունը, ապա Խումբը շարունակում է ճանաչել փոխանցված ակտիվը իր շարունակվող ներգրավվածության չափով: Այս դեպքում, Խումբը նաև ճանաչում է դրա հետ կապված պարտավորությունը: Փոխանցված ակտիվը և դրա հետ կապված պարտավորությունը չափվում են այն հիմքով, որը արտացոլում է Խմբի պահպանած իրավունքներն ու պարտականությունները:

Շարունակվող ներգրավվածությունը, որը ձեռք է բերում փոխանցված ակտիվի նկատմամբ երաշխիքի ձև, չափվում է ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեքի և այն առավելագույն արժեքից նվազագույնով, որը Խմբից կարող է պահանջվել մարել:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ֆինանսական ակտիվների արժեզրկման վերաբերյալ լրացուցիչ բացահայտումները ներկայացված են հետևյալ ծանոթագրություններում.

- Էական ենթադրությունների բացահայտում (Ծանոթագրություն 21),
- Առևտրային և այլ դերիտորական պարտքեր (Ծանոթագրություն 21):

38. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)**բ) Ֆինանսական գործիքներ. սկզբնական ճանաչումը և հետագա չափումը (շարունակություն)****Ապաճանաչում (շարունակություն)**

Խումբը ճանաչում է ակնկալվող վարկային կորուստների պահուստ իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող բոլոր պարտքային գործիքների համար: Ակնկալվող վարկային կորուստների պահուստը հիմնված է պայմանագրի համաձայն պայմանագրային դրամական միջոցների հոսքերի և Խմբի կողմից ստացվելիք ակնկալվող դրամական հոսքերի տարբերության վրա՝ զեղչված մոտարկված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Ակնկալվող դրամական միջոցների հոսքերը ներառում են գրավադրված միջոցների վաճառքից ստացվող դրամական միջոցների հոսքերը կամ այլ պայմանագրային պայմանների մաս կազմող պարտքային դիրքի ամրացումները:

Ակնկալվող վարկային կորուստների պահուստները ճանաչվում են երկու փուլով: Պարտքային ռիսկերի ենթարկվածության բոլոր տեսակների համար, որոնց պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից ի վեր էականորեն չի ավելացել, ակնկալվող վարկային կորուստների պահուստները ձևավորվում են այն պարտքային կորուստների համար, որոնք առաջանում են հաջորդող 12 ամիսների ընթացքում դեֆոլտի հավանական դեպքերի արդյունքում (12-ամսյա ժամանակահատվածում ակնկալվող վարկային կորուստներ): Պարտքային ռիսկերի ենթարկվածության բոլոր տեսակների համար, որոնց պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից ի վեր էականորեն ավելացել է, ակնկալվող վարկային կորուստների պահուստը պետք է ձևավորել ակտիվի ողջ ժամկետայնության ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների համար՝ անկախ դեֆոլտի տեղի ունենալու ժամկետից (ակտիվի ողջ ժամկետայնության ընթացքում ակնկալվող վարկային կորուստներ):

Առևտրային դեբիտորական պարտքերի (ենթակա չեն պայմանական գնանշման) և այլ դեբիտորական պարտքերի համար, որոնք ժամկետանց են 12 ամսից ավելի քիչ, Խումբը կիրառում է ակնկալվող վարկային կորուստների հաշվարկման պարզեցված մոտեցումը, ինչպես թույլատրվում է ՖՀՄՍ 9-ով: Հետևաբար, Խումբը չի հետևում պարտքային ռիսկի փոփոխություններին, այլ յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին կորուստի պահուստը ճանաչում է՝ հիմք ընդունելով ողջ ժամկետայնության ընթացքում ակնկալվող վարկային կորուստները: Խումբը սահմանել է պահուստավորման մատրիցա, որը հիմնված է իր պատմական ակնկալվող վարկային կորուստների վրա՝ ճշգրտված պարտատերերի և տնտեսական միջավայրին բնորոշ ապագային միտված գործոններով:

Ամորտիզացված արժեքով պահվող այլ ֆինանսական ակտիվների համար (որոնք ժամկետանց են 12 ամսից ավել), ակնկալվող վարկային կորուստները հիմնված են 12-ամսյա ժամանակահատվածում ակնկալվող վարկային կորուստների վրա: 12-ամսյա ժամանակահատվածում ակնկալվող վարկային կորուստները ակտիվի ողջ ժամկետայնության ընթացքում ակնկալվող վարկային կորուստների մի մասն են կազմում, որը առաջանում է ֆինանսական գործիքի դեֆոլտի դեպքում, որը հավանական է, որ տեղի կունենա հաշվետու ժամանակաշրջանից հետո 12 ամսվա ընթացքում: Սակայն, այն դեպքում, երբ ակտիվի սկզբնական ճանաչումից ի վեր առկա է պարտքային ռիսկի էական ավելացում, պահուստը պետք է հիմնված լինի ակտիվի ողջ ժամկետայնության ընթացքում ակնկալվող վարկային կորուստների վրա: Սահմանելու համար, թե արդյոք ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից ի վեր էական ավելացել է, թե՛ ոչ, Խումբը հաշվի է առնում ողջամիտ և հուսալի տեղեկատվությունը, որը համապատասխանում է և հասանելի է առանց ավելորդ ծախսի և ջանքերի: Սա ներառում է ինչպես քանակական, այնպես էլ որակական տեղեկատվություն և վերլուծություն՝ հիմնված Խմբի պատմական փորձի և պարտքերի գնահատման, ներառյալ՝ ապագային միտված տեղեկատվության վրա:

Խումբը ֆինանսական ակտիվը համարում է դեֆոլտ եղած, եթե դրա գծով պայմանագրային վճարումները 1 տարուց ավել ժամկետանց են: Այնուամենայնիվ, որոշակի դեպքերում, Խումբը կարող է ֆինանսական ակտիվը համարել դեֆոլտ եղած, եթե ներքին կամ արտաքին տեղեկատվությունը ցույց է տալիս, որ հավանական չէ, որ Խումբը մինչև Խմբի կողմից պահվող որևէ պարտքային դիրքի ամրապնդումը հաշվի առնելը ամբողջությամբ կստանա պայմանագրային գումարը: Ֆինանսական ակտիվը դուրս է գրվում, եթե առկա չէ պայմանագրային դրամական միջոցների հոսքերի վերականգնման ողջամիտ ակնկալիք և սովորաբար տեղի է ունենում այն դեպքում, եթե 1 տարուց ավել ժամկետանց է և ենթակա չէ հարկադրված գործողության:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում Խումբը գնահատում է, թե արդյոք ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական ակտիվները արժեզրկված են, թե ոչ: Ֆինանսական ակտիվը արժեզրկված է, եթե տեղի են ունեցել մեկ կամ ավելի դեպքեր, որոնք ունեցել են բացասական ազդեցություն ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական հոսքերի վրա: Ֆինանսական ակտիվների արժեզրկման գնահատման վերաբերյալ լրացուցիչ քննարկումների վերաբերյալ ներկայացված է Ծանոթագրություն 30-ում և Ծանոթագրություն 21-ում:

39. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)

բ) Ֆինանսական գործիքներ. սկզբնական ճանաչումը և հետագա չափումը (շարունակություն)

Ֆինանսական պարտավորություններ

Սկզբնական ճանաչում և չափում

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են սկզբնական ճանաչման ժամանակ որպես իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ, վարկեր և փոխառություններ, կրեդիտորական պարտքեր, կամ անհրաժեշտության դեպքում ածանցյալ գործիքներ նախատեսված որպես արդյունավետ հեջավորման գործիքներ: Բոլոր ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ վարկերի ու փոխառությունների և կրեդիտորական պարտքերի դեպքում՝ ուղղակիորեն վերագրելի պայմանագրային ծախսերը գուտցաված: Խմբի ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը, վարկերը և փոխառությունները, ներառյալ՝ բանկի օվերդրաֆտները:

Հետագա չափումը

Ֆինանսական պարտավորությունների չափումը կախված է դրանց դասակարգումից, ինչպես նկարագրված է ստորև.

Իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ

Իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորությունները ներառում են վաճառքի համար պահվող ֆինանսական պարտավորությունները և սկզբնական ճանաչման ժամանակ որպես իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող նախատեսված ֆինանսական պարտավորությունները:

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես վաճառքի համար պահվող, եթե դրանք ձևավորվել են առաջիկայում հետգնման նպատակով: Այս դասը ներառում է նաև Խմբի ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք հեջավորման գործարքներում նախատեսված չեն որպես հեջավորման գործիքներ, ինչպես սահմանված է ՖՀՄՄ 9-ում: Առանձնացված ներկառուցված ածանցյալ գործիքները նույնպես դասակարգվում են որպես վաճառքի համար պահվող, եթե դրանք նախատեսված չեն որպես արդյունավետ հեջավորման գործիքներ: Վաճառքի համար պահվող ֆինանսական պարտավորությունների օգուտներն ու կորուստները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում:

Վարկեր և փոխառություններ ու առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Սկզբնական ճանաչումից հետո, տոկոսային վարկերն ու փոխառություններն ու առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Օգուտներն ու կորուստները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, երբ պարտավորությունները ապաճանաչվում են, ինչպես նաև արդյունավետ տոկոսադրույքի ամորտիզացիայի գործընթացի միջոցով:

Ամորտիզացված արժեքը հաշվարկվում է՝ հաշվի առնելով ձեռքբերման ժամանակ ցանկացած զեղչ կամ հավելավճար և արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մաս հանդիսացող վճարներ կամ ծախսեր: Արդյունավետ տոկոսադրույքի ամորտիզացիան ներառվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Այս դասը հիմնականում կիրառվում է տոկոսային վարկերի և փոխառությունների ու առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի դեպքում: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Ծանոթագրություն 24-ը և Ծանոթագրություն 27-ը:

37. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)**բ) Ֆինանսական գործիքներ. սկզբնական ճանաչումը և հետագա չափումը (շարունակություն)****Ֆինանսական պարտավորություններ (շարունակություն)****Ապաճանաչում**

Ֆինանսական պարտավորությունը ապաճանաչվում է, երբ դրա հետ կապված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցրած է ճանաչվում: Երբ գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է միևնույն փոխառուի՝ էականորեն տարբեր պայմաններով մեկ այլ պարտավորությամբ, կամ գոյություն ունեցող պարտավորության պայմանները էականորեն ձևափոխվում են, ապա այդպիսի փոխարինումը կամ ձևափոխումը դիտվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում: Համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքում:

Ֆինանսական գործիքների հաշվանցը

Ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները հաշվանցվում են և գուտ գումարը ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում, եթե առկա է ներկայումս կիրառելի ճանաչված գումարների հաշվանցման օրինական իրավունք և գուտ հիմքով կատարելու, ակտիվները իրացնելու և միաժամանակ պարտավորությունները կատարելու մտադրություն:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ֆինանսական վիճակի մասին առանձին հաշվետվությունում ներառում են դրամական միջոցները բանկերում և դրամարկղում, ինչպես նաև կարճաժամկետ ավանդներ, որոնց մարման ժամկետը սկզբնապես երեք ամսից պակաս է, բայց բացառում է ցանկացած սահմանափակված դրամական միջոցներ: Սահմանափակված դրամական միջոցները հասանելի չեն Խմբի կողմից օգտագործման համար և, հետևաբար, չեն համարվում բարձր իրացվելի. օրինակ՝ տեղանքի վերականգնման պարտավորությունների համար առանձնացված դրամական միջոցները:

Դրամական միջոցների հոսքերի մասին առանձին հաշվետվության պատրաստելու նպատակով դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցները և դրանց համարժեքները վերոնշյալ սահմանմամբ:

Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Խումբն օգտագործում է ածանցյալ ֆինանսական գործիքները, ինչպիսիք են ապրանքային ֆորվարդ պայմանագրերը՝ ապրանքի գնի ռիսկերը հեջավորելու նպատակով: Սակայն, նման պայմանագրերը չեն հաշվառվում որպես արդյունավետ հեջավորում գործիքներ համաձայն ՀՀՄՍ 39-ի: Այդպիսի ածանցյալ ֆինանսական գործիքները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով այն օրը, որ օրը ածանցյալ գործիքի պայմանագիր կնքվել է և հետագայում վերաչափվում են իրական արժեքով: Ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ֆինանսական ակտիվներ, երբ իրական արժեքը դրական է, և որպես ֆինանսական պարտավորություններ, երբ իրական արժեքը բացասական է: Ցանկացած օգուտ կամ վնաս, որն առաջանում է ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխություններից, ուղղակիորեն տարվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին առանձին հաշվետվություն:

Ոչ ֆինանսական ակտիվի ստացման կամ մատակարարման նպատակով կնքված և դեռ պահվող պայմանագրերը համաձայն Խմբի ակնկալվող գնման, վաճառքի կամ օգտագործման պահանջների, ընկնում են ՀՀՄՍ 32 «Ֆինանսական գործիքներ. Ներկայացում», և ՀՀՄՍ 39-ի բացառության շրջանակներում, որը հայտնի է որպես «նորմալ գնում կամ վաճառքի բացառություն»:

Այս պայմանագրերի և հիմնական պայմանագրերի մաս կազմող ներկառուցված ածանցյալ գործիքների համար, նրանք հաշվառվում են որպես կատարման ենթակա պայմանագրեր: Խումբը ճանաչում է այդպիսի պայմանագրերը իր ֆինանսական վիճակի մասին առանձին հաշվետվությունում միայն այն ժամանակ, երբ կողմերից մեկը կատարում է դրամական միջոցներ կամ ոչ ֆինանսական ակտիվ մատակարարելու պայմանագրում նշված իր պարտականությունը: Ֆինանսական գործիքների իրական արժեքների վերլուծության և չափման վերաբերյալ հետագա մանրամասների համար, տես Ծան. 30-ը:

37. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)**բ) Ֆինանսական գործիքներ. սկզբնական ճանաչումը և հետագա չափումը (շարունակություն)****Ընթացիկ և ոչ ընթացիկ դասակարգում**

Խումբը ներկայացնում է ակտիվները և պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին առանձին հաշվետվությունում ընթացիկ / ոչ ընթացիկ դասակարգման հիման վրա: Ակտիվը ընթացիկ է, երբ այն.

- ▶ Ակնկալվում է իրացվել կամ նախատեսված է վաճառքի կամ սովորական գործառնական փուլի ընթացքում սպառման համար, կամ
- ▶ Պահվում է հիմնականում առևտրային նպատակով, կամ
- ▶ Ակնկալվում է իրացվել հաշվետու ժամանակաշրջանից հետո 12 ամսվա ընթացքում, կամ
- ▶ Դրամական միջոց է կամ դրամական միջոցների համարժեք՝ բացառությամբ, երբ ակտիվի փոխանակումը կամ օգտագործումը, պարտավորություն մարելու նպատակով, սահմանափակված է հաշվետու ժամանակաշրջանից հետո նվազագույնը 12 ամսվա ընթացքում:

Բոլոր մնացած ակտիվները ճանաչվում են որպես ոչ ընթացիկ:

Պարտավորությունը ընթացիկ է, երբ.

- ▶ Այն ակնկալվում է մարվել սովորական գործառնական փուլի ընթացքում, կամ
- ▶ Այն հիմնականում պահվում է առևտրային նպատակով, կամ
- ▶ Ենթակա է մարման հաշվետու ժամանակաշրջանից հետո 12 ամիսների ընթացքում, կամ
- ▶ Չկա անվերապահ իրավունք՝ հետաձգելու պարտավորության մարումը հաշվետու ժամանակաշրջանից հետո նվազագույնը տասներկու ամիս

Խումբը դասակարգում է բոլոր մնացած պարտավորությունները՝ որպես ոչ ընթացիկ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները դասակարգվում են որպես ոչ ընթացիկ ակտիվներ և պարտավորություններ:

գ) Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ

Խումբը հիմնականում զբաղվում է պղնձի/մոլիբդենի խտանյութի արտադրության բիզնեսով և որոշակի հանգամանքներում մատուցում է բեռնափոխադրումների/առաքման ծառայություններ: Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթը ճանաչվում է, երբ ապրանքների և ծառայությունների հսկողությունը փոխանցվում է փոխհատուցման գումարի չափով, որի նկատմամբ Խումբն ակնկալում է հաճախորդին ապրանքներ և ծառայություններ փոխանցելու դիմաց ստանալ իրավունք:

Խումբն ընդհանուր առմամբ եզրահանգել է, որ հանդիսանում է հասույթի պայմանագրերի հիմնական կողմը, քանի որ սովորաբար այն հսկում է ապրանքներն ու ծառայությունները մինչև հաճախորդին փոխանցելը:

Պայմանագրային մնացորդներ**Պայմանագրային ակտիվներ**

Պայմանագրային ակտիվը հաճախորդին ապրանքներ և ծառայություններ փոխանցելու դիմաց ստացված փոխհատուցման նկատմամբ իրավունքն է: Եթե Խումբն ապրանքների և ծառայությունների փոխանցումն իրականացնում է մինչև հաճախորդի կողմից փոխհատուցումն իրականացնելը կամ մինչև վճարման իրականացումը, պայմանագրային ակտիվը ճանաչվում է վաստակած փոխհատուցման համար, որը պայմանական է: Խումբը չունի պայմանագրային ակտիվ, քանի որ կատարումն ու փոխհատուցման նկատմամբ իրավունքի ձեռքբերումը տեղի է ունենում կարճ ժամանակահատվածում և փոխհատուցման նկատմամբ բոլոր իրավունքները պայմանական չեն:

37. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)**գ) Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ (շարունակություն)*****Առևտրային դեբիտորական պարտքեր***

Դեբիտորական պարտքը ներկայացնում է ոչ պայմանական փոխհատուցման գումարի նկատմամբ խմբի իրավունքը (այսինքն՝ միայն պահանջվում է ժամանակի անցում մինչև կկատարվի փոխհատուցման վճարումը):

Պայմանագրային պարտավորություններ

Պայմանագրային պարտավորությունը հաճախորդին ապրանքների և ծառայությունների փոխանցման պարտականությունն է, որի դիմաց Խումբը հաճախորդից ստացել է փոխհատուցում (կամ փոխհատուցման գումարը ստացման ենթակա է): Եթե հաճախորդը վճարում է փոխհատուցումը մինչև խմբի կողմից ապրանքների կամ ծառայությունների փոխանցումը հաճախորդին, պայմանագրային պարտավորությունը ճանաչվում է, երբ վճարումն իրականացվում է կամ երբ վճարումն ստացման ենթակա է (որն ավելի շուտ է): Պայմանագրային պարտավորությունները ճանաչվում են որպես հասույթ, երբ Խումբն այն իրականացնում է պայմանագրի համաձայն:

Ժամանակ առ ժամանակ, Խումբը (CIP) միջազգային առևտրի պայմանների համաձայն իրականացված մետաղի խտանյութի որոշ վաճառքների գծով ճանաչում է պայմանագրային պարտավորություններ, որի դեպքում դրամական միջոցների հոսքերի մի մասը հաճախորդից կարող է ստացվել մինչև բեռնափոխադրումների/առաքման ծառայությունների մատուցումը: Պայմանագրային պարտավորությունների վերաբերյալ լրացուցիչ մանրամասների համար տե՛ս Ծանոթագրություն 29-ը:

Պղնձի/մոլիբդենի խտանյութի (մետաղի խտանյութի) վաճառքները

Խմբի՝ մետաղի խտանյութի վաճառքների մեծամասնությունը հնարավորություն է տալիս գինը ճշգրտել՝ հիմք ընդունելով պայմանագրով սահմանված համապատասխան գնորդման ժամանակաշրջանի վերջում շուկայական գինը: Սրանք կոչվում են պայմանական գնանշման պայմանագրեր և այնպիսին են, որ մետաղի խտանյութի վաճառքի գինը հիմնված է հաճախորդին առաքումից հետո սահմանված ապագա ամսաթվին գերակշռող սփոթ գների վրա: Վաճառքի գնի ճշգրտումներն իրականացվում են մինչև գնորդման ժամանակաշրջանի վերջը շուկայական գների շարժերի հիման վրա: Պայմանական ապրանքագրի և գնորդման ժամանակաշրջանի վերջի միջև ժամանակահատվածը կարող է լինել մեկից երեք ամիս:

Հասույթը ճանաչվում է այն ժամանակ, երբ հսկողությունը անցնում է հաճախորդին, որը տեղի է ունենում այն ժամանակ, երբ մետաղի խտանյութը ֆիզիկապես տեղափոխվում է նավի, գնացքի, փոխադրողի կամ առաքման այլ մեխանիզմի վրա: Հասույթը չափվում է այն գումարի չափով, որի նկատմամբ Խումբն ակնկալում է ստանալ իրավունք, որը իրենից ներկայացնում է գնորդման ժամանակաշրջանի վերջում ակնկալվող ստացվելիք գնի գնահատումը, այսինքն՝ ֆորվարդի գինը, իսկ համապատասխան առևտրային դեբիտորական պարտքերը ճանաչվում են: (CIP) առաքման պայմաններին ենթակա պայմանագրերի համար, պայմանագրային գնի մի մասը բաշխվում է առանձին մատուցված բեռնափոխադրումներին/առաքման ծառայություններին:

Այս պայմանական գնանշված պայմանագրերի համար, գնորդման ժամանակաշրջանի ընթացքում տեղի ունեցած ցանկացած ապագա փոփոխություններ պարունակվում են պայմանականորեն գնանշված առևտրային դեբիտորական պարտքերում և, հետևաբար, գտնվում են ՖՀՄՍ 9-ի և ոչ թե՛ ՖՀՄՍ 15-ի շրջանակներում: Հաշվի առնելով ապրանքների գների փոփոխությունների ռիսկին ենթարկվածությունը՝ պայմանականորեն գնանշված այս առևտրային դեբիտորական պարտքերը ՖՀՄՍ 9-ի շրջանակներում չեն անցնում դրամական միջոցների հոսքերի բնութագրիչների թեստը, և սկզբնական ճանաչումից սկսած մինչև գործարքի կատարման ամսաթիվը պահանջվում է չափել որպես իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Իրական արժեքի այս հետագա փոփոխությունները յուրաքանչյուր հաշվետվող ժամանակաշրջանում ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և ներկայացվում են հաճախորդների հետ պայմանագրերի հասույթից առանձին՝ որպես «պայմանականորեն գնանշված առևտրային դեբիտորական պարտքերի իրական արժեքից օգուտներ/վնասներ»: Գնորդման ժամանակաշրջանի ընթացքում և դրա վերջում իրական արժեքի փոփոխությունները գնահատվում են՝ հիմք ընդունելով ռիսկո և պղնձի վերանայված ֆորվարդ շուկայական գները, ինչպես նաև հաշվի առնելով ՖՀՄՍ 13-ով սահմանված այլ համապատասխան իրական արժեքի փոփոխությունները, ներառյալ՝ տոկոսադրույքի ռիսկի և պարտքային ռիսկի ճշգրտումները:

37. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)**զ) Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ (շարունակություն)****Բեռնափոխադրումների/առաքման ծառայություններ**

Ինչպես վերևում նկարագրված է, Խմբի մետաղի խտանյութերի վաճառքների մի մասը իրականացվում է (CIP) միջազգային առևտրի պայմանների համաձայն, որի դեպքում Խմբի կողմից հաճախորդներին մետաղի խտանյութի հսկողությունը փոխանցելու ամսաթվից հետո Խումբը պատասխանատվություն է կրում բեռնափոխադրումների/առաքման ծառայությունների մատուցման համար (որպես պայմանագրի հիմնական կողմ): Հետևաբար, Խումբը բեռնափոխադրումների/առաքման ծառայությունների գծով ունի առանձին կատարման ենթակա պարտավորություն, որը իրականացվում է միայն արտադրված ապրանքների վաճառքը հեշտացնելու նպատակով:

Խմբի կողմից սովորաբար օգտագործվող միջազգային առևտրի այլ պայմաններից է «Մինչև նավի վրա»-ն, երբ հենց բեռնման նավահանգստում ապրանքների հսկողությունը փոխանցվում է, Խումբը պատասխանատվություն չի կրում բեռնափոխադրումների կամ ապահովագրության համար և «Հասցրած մինչև համաձայնեցված վայր»-ը, երբ ապրանքների հսկողությունը փոխանցվում է, երբ ապրանքը առաքվում է համաձայնեցված վայր: Միջազգային առևտրի պայմաններին բավարարող այս պայմանագրերի դեպքում, միակ կատարման ենթակա պարտավորությունները ապրանքների տրամադրումն է այն պահին, երբ հսկողությունը փոխանցվում է: (CIP) պայմանագրերի համար, պայմանագրային գինը (ինչպես վերևում նկարագրված է) բաշխվում է մետաղի խտանյութի և բեռնափոխադրումների/առաքման ծառայությունների վրա՝ օգտագործելով առանձին վաճառքի գնի մեթոդը: Այս պայմանագրերի համաձայն, պայմանական ապրանքագրի համաձայն փոխհատուցման մի մասը կարող է ստացվել հաճախորդի կողմից կանխիկ առաքման ամսաթվին կամ դրան մոտ ամսաթվին: Հետևաբար, որոշ բեռնափոխադրումների/առաքման ծառայություններին վերաբերող դեռևս չտրամադրված կանխավճարային փոխհատուցումները հետաձգվում են: Դա հետագայում ճանաչվում է որպես հասույթ այն ժամանակ, երբ Խումբն իրականացնում է կատարման ենթակա պարտավորությունը: Այս բեռնափոխադրումների/առաքման ծառայությունների հետ կապված ծախսերը նույնպես ճանաչվում են այն ժամանակ, երբ կատարման ենթակա պարտավորությունը կատարվում է Խմբի կողմից:

Բեռնափոխադրումների/առաքման ծախսերի վճարումը կարող է առաջանալ մինչև ծառայությունների մատուցումը (և, հետևաբար, ճանաչվում է որպես պայմանական պարտավորություն): Վերջին մասը վճարվում է ծառայությունների մատուցման ավարտից հետո: Այս կանխավճարային գումարների ստացման և բեռնափոխադրումների/առաքման ծառայությունների բավարարման միջև ժամանակահատվածը սովորաբար մինչև 4 ամիս է: Հաշվի առնելով այս գումարների չափը և կանխիկ դրամական միջոցների և կատարման ենթակա պարտավորության կատարման միջև կարճ ժամանակահատվածը՝ Խումբը կիրառել է էական ֆինանսավորման բաղադրիչի ազդեցության համար խոստացված փոխհատուցումը չճշգրտելու կիրառելի նպատակահարմար մոտեցում, քանի որ հաճախորդին ապրանքների և ծառայությունների փոխանցման և հաճախորդի կողմից այդ ապրանքի կամ ծառայության դիմաց վճարման միջև ժամանակահատվածը մեկ տարի կամ պակաս է:

դ) Նվիրատվություն սոցիալական ծրագրերին

Այն չափով որքանով սոցիալական ծրագրերին Խմբի հատկացումները ծառայում են հանրության շահերին և չեն սահմանափակվում Խմբի աշխատակիցներով, դրանք ճանաչվում են առաջանալուն պես, որպես նվիրատվություններ սոցիալական ծրագրերին համապարփակ ֆինանսական արդյունքների մասին առանձին հաշվետվությունում:

ե) Ֆինանսական եկամուտ և ծախս

Խմբի ֆինանսական եկամուտը և ֆինանսական ծախսը ընդգրկում է.

- ▶ Տոկոսային եկամուտ;
- ▶ Տոկոսային ծախս;
- ▶ Տեղանքի վերականգնման պահուստի և արձակման նպաստների պահուստի գծով զեղչի ծախսագրում;
- ▶ Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից գուտ օգուտ/վնաս:

Տոկոսային եկամուտը կամ ծախսը ճանաչվում է՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

37. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)**ե) Ֆինանսական եկամուտ և ծախս (շարունակություն)**

Փոխառության ծախսումները, որոնք անմիջականորեն չեն առնչվում որակավորվող ակտիվի ձեռքբերման, կառուցման կամ արտադրության հետ, ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին առանձին հաշվետվությունում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից գուտ օգուտ/վնասը ճանաչվում է իրացված միայն կանխիկ մարման դեպքում:

զ) Արտարժույթ**Արտարժույթի փոխարկում**

Արտարժույթով գործարքները սկզբնապես ճանաչվում են ֆունկցիոնալ արժույթով, փոխարկվում են կիրառելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային հոդվածների փոխարժեքային տարբերություններից գուտ օգուտ կամ վնասը իրենից ներկայացնում է հաշվետու տարվա սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսով և ժամանակաշրջանի ընթացքում վճարումներով ճշգրտված ամորտիզացված արժեքի և արտարժույթով արտահայտված ու հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ամորտիզացված արժեքի տարբերությունը:

Պատմական արժեքով չափվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները փոխարկվում են գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Արտարժույթի փոխարկումից առաջացող տարբերությունները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին առանձին հաշվետվությունում:

է) Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել որպես կարճաժամկետ դրամական միջոցների տեսքով պարգևավճար, եթե Խումբն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարելու որպես աշխատողի կողմից մատուցված անցյալ ծառայության արդյունք կամ կարող է արժանահավատորեն գնահատել պարտականությունը:

ա. Աշխատակիցների արձակման նպաստներ

Աշխատակիցների արձակման նպաստները ծախսագրվում են, երբ Խումբն այլևս չի կարող չեղյալ համարել նշված նպաստների առաջարկը: Եթե արձակման նպաստների ամբողջական վճարումը չի ակնկալվում հաշվետու ժամանակաշրջանի ավարտին հաջորդող 12 ամսվա ընթացքում, ապա արձակման նպաստները զեղչվում են:

ը) Շահութահարկ

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված տարրերին:

ա. Ընթացիկ շահութահարկ

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանի շահութահարկի ընթացիկ հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են այն գումարով, որն ակնկալվում է ստանալ հարկային մարմիններից կամ վճարել հարկային մարմիններին: Հարկերի դրույքների և հարկերի գումարների հաշվարկման համար օգտագործվող օրենքներն, այն օրենքներն են, որոնք կիրառվել կամ սահմանվել են հաշվետու ամսաթվի դրությամբ այն երկրներում, որտեղ Խումբը գործում և առաջացնում է հարկվող շահույթ:

37. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)**ը) Շահութահարկ (շարունակություն)**

Ընթացիկ շահութահարկը, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում կամ սեփական կապիտալում ուղղակիորեն ճանաչված հոդվածներին, ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում կամ սեփական կապիտալում և ոչ շահույթ կամ վնասում: Ղեկավարությունը ժամանակ առ ժամանակ գնահատում է հարկերի փոխհատուցումների դիրքերը, ըստ այն իրավիճակների, որտեղ կիրառվող հարկային կարգավորումները հանդիսանում են մեկնաբանությունների առարկա, և անհրաժեշտության դեպքում սահմանում է պահուստներ:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը ճանաչվում է հաշվեկշռային մեթոդով հաշվետու ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների հարկային բազաների և դրանց ֆինանսական հաշվետվություններում արտացոլված հաշվեկշռային արժեքների ժամանակավոր տարբերությունների հիման վրա:

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, բացառությամբ՝

- Երբ հետաձգված հարկային պարտավորությունը առաջանում է գույքիլի կամ ձեռնարկատիրական գործունեության միավորում չհանդիսացող գործարքներում ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչումից, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի կամ վնասի վրա,
- Համատեղ ձեռնարկումներում, դուստր և ասոցացված կազմակերպություններում ներդրումների հետ կապված հարկվող ժամանակավոր տարբերությունների դեպքում, որտեղ ժամանակավոր տարբերությունների հակադարձման ժամանակահատվածը կարող է վերահսկվել և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունները չեն հակադարձվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների, տեղափոխված չօգտագործված հարկային զեղչերի և չօգտագործված հարկային վնասների համար այնքանով, որքանով հավանական է, որ կլինի հարկվող շահույթ, որի դիմաց այդ նվազեցվող ժամանակավոր տարբերությունները և տեղափոխված չօգտագործված հարկային զեղչերը և վնասները հնարավոր կլինի օգտագործել՝ բացառությամբ հետևյալ դեպքերի՝

- Երբ նվազեցվող ժամանակավոր տարբերություններին վերաբերող հետաձգված հարկային ակտիվը առաջանում է ձեռնարկատիրական գործունեության միավորում չհանդիսացող գործարքներում ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչումից, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի կամ վնասի վրա,
- Համատեղ ձեռնարկումներում, դուստր և ասոցացված կազմակերպություններում ներդրումների գծով նվազեցվող ժամանակավոր տարբերություններից հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են այնքանով, որքանով հավանական է, որ ժամանակավոր տարբերությունները կհակադարձվեն տեսանելի ապագայում և կլինի հարկվող շահույթ, որի դիմաց հնարավոր կլինի օգտագործել ժամանակավոր տարբերությունները:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում է այնքանով, որքանով այլևս հավանական չէ, որ բավարար հարկվող շահույթ կլինի, որի դիմաց կօգտագործվի հետաձգված հարկային ակտիվը: Զճանաչված հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճանաչվում այնքանով, որքանով հավանական է, որ ապագա հարկվող շահույթը թույլ կտա վերականգնել հետաձգված հարկային ակտիվը:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են այն հարկային դրույքաչափերով, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն այն տարում, երբ ակտիվները կիրառվեն կամ պարտավորությունները կմարվեն՝ հիմնվելով հաշվետու ամսաթվի դրությամբ կիրառված կամ կիրառման ենթակա օրենքով սահմանված հարկային դրույքաչափերի (և հարկային օրենքների) վրա:

Հետաձգված հարկը, որը վերաբերվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներին կամ սեփական կապիտալի հոդվածներին, ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում կամ սեփական կապիտալում և ոչ թե շահույթում կամ վնասում:

37. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)**ը) Շահութահարկ (շարունակություն)**

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե կա իրավաբանորեն ամրագրված իրավունք ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների նկատմամբ հաշվանցելու, և հետաձգված հարկերը վերաբերում են միևնույն հարկվող կազմակերպությանը և հարկային մարմիններին:

Որպես ձեռնարկատիրական գործունեության միավորման մաս՝ ձեռքբերված հարկային օգուտները, որոնք այդ ամսաթվի դրությամբ չեն բավարարում առանձին ճանաչման չափանիշներին, կճանաչվեն հետագայում, փաստերի և իրողությունների փոփոխությունների վերաբերյալ նոր տեղեկատվության առկայության դեպքում: Ճշգրտումը կդիտարկվի որպես նվազեցում գույքի (քանի դեռ այն չի գերազանցում գույքի արժեքը), եթե այն վերաբերում է ձեռնարկատիրական գործունեության միավորման սկզբնական հաշվառման պահին կամ՝ կարտացոլվի շահույթում կամ վնասում:

Նշանակալից դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ

Դատողություն է պահանջվում՝ որոշելու, թե որ գործառնություններն են համարվում հարկում շահույթից գործառնական ծախսերի փոխարեն: Դատողություն է նաև պահանջվում հետաձգված հարկային ակտիվները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչելու համար: Հետաձգված հարկային ակտիվները, այդ թվում չօգտագործված հարկային վնասներից առաջացող, խմբից պահանջում են ապագա ժամանակաշրջանում բավարար հարկվող շահույթ առաջացնելու հավանականության գնահատում, ճանաչված հետաձգված հարկային ակտիվները օգտագործման համար:

Ապագա հարկվող շահույթի առաջացման մասին ենթադրությունները կախված են Ղեկավարության ապագա դրամական հոսքերի գնահատումներից: Ապագա հարկվող շահույթի այս գնահատումները հիմնված են գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքերի կանխատեսումների վրա (որոնց վրա ազդում են արտադրության և վաճառքի ծավալները, ապրանքների գները, պաշարները, գործառնական ծախսերը, փակման և վերականգնողական ծախսերը, կապիտալ ծախսումները, շահաբաժինները և այլ կառավարչական գործարքները): Ապագա դրամական միջոցների հոսքերի և հարկվող շահույթի նշանակալի տարբերությունը գնահատվածից, կազմի հաշվետու ամսաթվի դրությամբ խմբի գուտ հետաձգված հարկային ակտիվների օգտագործման հնարավորության վրա: Բացի այդ, հարկային օրենքների հետագա փոփոխությունները այն իրավասությունում, որտեղ խումբը գործում է, կարող են սահմանափակել խմբի՝ ապագա ժամանակաշրջանում հարկային նվազեցումներ ձեռք բերելու կարողությունը:

թ) Ռոյալթիներ

Բացի շահութահարկից, խմբի առանձին ֆինանսական հաշվետվությունները ներառում են նաև, և ճանաչում, են որպես շահույթից հարկում, գուտ շահույթի գծով այլ հարկատեսակներ:

Ռոյալթիները, ռեսուրսների վարձավճարների գծով հարկերը և հասույթի վրա հիմնված հարկերը հաշվառվում են ՀՀՄՍ 12-ի, երբ համապատասխանում են շահութահարկի բնութագրիչներին: Վերջինս տեղի ունենալ այն, երբ պետական մարմնի կողմից հարկերը գանձվում են հիմնվելով հարկվող շահույթի վրա, այլ ոչ արտադրանքի ծավալի վրա կամ որպես տոկոս հասույթից՝ ժամանակավոր տարբերությունների ճշգրտումից հետո: Նման համաձայնությունների համար ընթացիկ և հետաձգված շահութահարկը հաշվարկվում է նույն հիմքերով, ինչ վերը նշված հարկման այլ ձևերի համար: Ռոյալթիների գծով առաջ եկող այլ պարտավորությունները, որոնք չեն բավարարում այս չափանիշներին, ճանաչվում են որպես ընթացիկ պահուստներ և ներառվում են այլ ծախսերում:

Ռոյալթիները հաշվարկելիս կիրառվում են այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ էության, ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ: Ռոյալթիները ճանաչվում են շահույթում կամ վնասում տարեկան կտրվածքով հիմք ընդունելով հասույթի և հարկվող շահույթի համակցությունը՝ ճշգրտված կիրառելի օրենքների և կանոնակարգերի ուղեցույցների և պահանջների համաձայն: Ռոյալթիները բաղկացած են երկու բաղադրիչից՝ հասույթի 4%-ի չափով հաշվարկվող ռոյալթի և հարկվող շահույթի 12.5%-ի չափով հաշվարկվող ռոյալթի՝ ճշգրտված կիրառելի օրենքների և կանոնակարգերի ուղեցույցների և պահանջների համաձայն:

Ղեկավարությունը գտնում է, որ ռոյալթիի գծով ծախսն իրենից շահութահարկ չի ներկայացնում, քանի որ ընդհանուր հասույթի գործոնը (համախառն ցուցանիշ) էական է վճարվելիք ռոյալթիի գումարի որոշման գործընթացում: Ռոյալթիները հաշվառվում է որպես այլ գործառնական ծախսեր:

37. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)**ժ) Պաշարներ**

Պղնձի և մոլիբդենի խտանյութը, արտադրության ցիկլում գտնվող մետաղը և հանքաքարի պաշարները ֆիզիկապես չափվում են կամ գնահատվում են սկզբնական արժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Իրացման գուտ արժեքը ապրանքի հաշվարկված ապագա վաճառքի գինն է, որով Խումբը ենթադրում է իրացնել այն, երբ ապրանքը լինի արտադրված և վաճառված՝ հանած արտադրությունը ավարտին հասցնելու և վաճառքի ծախսումները: Այն դեպքում, երբ դրամի ժամանակային արժեքը նշանակալի է, ապագա ավարտին հասցնելու և վաճառքի ծախսումները գեղջվում են:

Եթե հանքաքարի պաշարների մշակումը չի ակնկալվում հաշվետու ժամանակաշրջանից հետո 12 ամսվա ընթացքում, այն ներառվում է ոչ ընթացիկ ակտիվների մեջ և իրացման գուտ արժեքը հաշվարկվում է գեղջված դրամական հոսքերի մեթոդով:

Արժեքը որոշվում է միջին կշռված արժեքի մեթոդով և ներառում է գնման ուղղակի ծախսումները և վերջնական արտադրանքի ստացման փոփոխություն և ֆիքսված վերադիր ծախսումների համապատասխան մասը՝ ներառյալ ամորտիզացիան և մշակվածությունը, որոնք օգտագործվել են նյութերի՝ պատրաստի արտադրանքի փոխարկման ժամանակ, նորմալ արտադրական հզորության հիման վրա: Համատեղ արտադրանքների միջև արտադրական ծախսումների բաշխումն իրականացվում է հաշվի առնելով արտադրանքների հարաբերական վաճառքի գները՝ արտադրության ավարտից հետո: Յուրաքանչյուր մետաղի փոխարկման ծախսերը, որոնք հնարավոր է տարանջատել, բաշխվում են համապատասխանաբար:

Նյութերը և այլ պաշարները չափվում են սկզբնական արժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Պաշարների սկզբնական արժեքը հաշվարկվում է առաջինը մուտք, առաջինը էլք սկզբունքով և ներառում է պաշարների ձեռք բերման ծախսերը, արտադրական կամ փոխարկման ծախսերը և դրանք ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսերը:

Հնացած պաշարների պահուստները որոշվում են յուրաքանչյուր պաշարներից ելնելով: Պարբերաբար իրականացվում են ուսումնասիրություններ հնացված պաշարների պահուստների որոշման համար:

ի) Հիմնական միջոցներ**ա. Զանաչում և չափում**

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մշակվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները: ՖՀՄՄ-ներին անցման ամսաթվի՝ 2007թ. հունվարի 1-ի դրությամբ հիմնական միջոցների սկզբնական արժեքը որոշվել էր հիմք ընդունելով վերջիններիս իրական արժեքն այդ ամսաթվի դրությամբ (եղակետային սկզբնական արժեք):

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերմանն ուղղակի վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը, ուղղակի աշխատուժի գծով ծախսերը, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած այլ ծախսումները, ակտիվի ապատեղակայման և քանդման ծախսերը, տեղանքի վերականգնման ծախսերը և կապիտալացված փոխառության ծախսումները: Ձեռքբերված համակարգչային ծրագիրը, որը հանդիսանում է համապատասխան սարքավորման ֆունկցիոնալության անբաժանելի մասը, կապիտալացվում է որպես սարքավորման մաս:

37. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)**ի) Հիմնական միջոցներ (շարունակություն)**

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղկացուցիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը և վնասը որոշվում են համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում են զուտ հիմունքով այլ եկամուտ/այլ ծախս հոդվածում շահույթում կամ վնասում:

բ. Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցների բաղկացուցիչ փոխարինման ծախսերը ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ Խումբ կհոսեն այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները և վերջինիս արժեքը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցիչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

գ. Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և շահագործման հանձնելու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա մնացորդային արժեքը:

Արտադրական հոսքագծում օգտագործվող ակտիվների գծով մաշվածությունը հաշվառվում է կիրառելով թողարկված միավորների մեթոդը՝ հիմք ընդունելով ակտիվի գնահատված ընդհանուր արտադրողականությունը և փաստացի արդյունահանված ու մշակված հանքաքարը: Բոլոր այլ ակտիվների գծով մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը: Հողերի գծով մաշվածություն չի հաշվարկվում:

Ստորև ներկայացված են օգտակար ծառայության գնահատված ժամկետները ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար:

	<i>Թողարկված միավորների մեթոդ</i>	<i>Գծային մեթոդ</i>
Շենքեր		
• արտադրական շենքեր և շինություններ	միջին հզորություն 182-ից 303 մլն տոննա	
• այլ շենքեր		10-ից 100 տարի
Մեքենա-սարքավորումներ		
• արտադրական մեքենա-սարքավորումներ	միջին հզորությունը 18-ից 352 մլն տոննա	
• այլ մեքենա-սարքավորումներ		2-ից 100 տարի
Տնտեսական գույք		2-ից 70 տարի
Հանքարդյունաբերության ակտիվներ		25 տարի

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

յ) Մակաբացման (թափոնների հեռացման) ծախսեր

Որպես հանքաարդյունաբերական գործունեության մաս, Խումբն ունենում է մակաբացման (թափոնների հեռացման) ծախսեր իր գործունեության և զարգացման, և արտադրության փուլում: Հանքի զարգացման փուլում առաջացող մակաբացման ծախսումները, մինչ արտադրության փուլի սկսելը (զարգացման մակաբացում), կապիտալացվում են որպես հանքի շինարարության արժեքի մաս, և հետագայում ամորտիզացվում են իր օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ թողարկված միավորների մեթոդով: Զարգացման մակաբացման ծախսումների կապիտալացումը դադարում է, երբ հանքը/բաղադրիչը հանձնվում է շահագործման կամ պատրաստ է շահագործման, ղեկավարության նախատեսված ձևով:

37. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)**յ) Մակաբացման (թափոնների հետացման) ծախսեր (շարունակություն)**

Բաց հանքի արտադրական փուլում իրականացված մակաբացման գործունեության (արտադրական մակաբացում) հաշվառումը ներկայացված է ստորև: Արտադրության սկսելուց հետո, հանքի հետագա զարգացումը կարող է պահանջել արտասովոր մեծ ծավալի մակաբացման անհրաժեշտություն, որն, ըստ էության, նման է մակաբացման զարգացման փուլին:

Նման մակաբացման ծախսերը հաշվառվում են այնպես, ինչպես զարգացման փուլի մակաբացման ծախսերը (ինչպես ներկայացված է վերևում):

Խումբը մակաբացումից կարող է ստանալ երկու տեսակի օգուտ՝ օգտագործելի հանքաքար, որը կօգտագործվի պաշարների արտադրությունում, և բարելավված հասանելիություն հանքաքարի լրացուցիչ ծավալներին, որոնք կարող են հանքաքարի հետագայում: Այն դեպքում, երբ մակաբացման գործունեությունից առաջացող օգուտն արտահայտվում է արտադրված պաշարների տեսքով, Խումբը մակաբացման ծախսումները հաշվառում է որպես այդ պաշարների արտադրության ծախսի մաս: Երբ ստացվող օգուտն արտահայտվում է հանքաքարի հասանելիությանը բարելավման տեսքով, ապա Խումբը ճանաչում է այդ ծախսումները՝ որպես ոչ ընթացիկ ակտիվ, որպես «մակաբացման գործունեության ակտիվ», եթե բավարարվում են հետևյալ չափանիշները՝

- ▶ Մակաբացման գործունեության հետ կապված ապագա տնտեսական օգուտները (հանքաքարի հասանելիության բարելավում) հավանական են,
- ▶ Հանքաքարի այն բաղադրիչը, որին հասանելիությունը բարելավվել է, կարող է նույնականացնել,
- ▶ Այդ բաղադրիչի գծով մակաբացման գործունեության ծախսումները կարող են արժանահավատորեն չափվել:

Եթե այս չափանիշներից որևէ մեկը չի բավարարվում, մակաբացման գործունեությունից առաջացող ծախսերը արտացոլվում են շահույթում կամ վնասում՝ որպես գործառնական ծախսեր:

Հանքի բաղադրիչների բացահայտման համար Խումբը սերտորեն համագործակցում է հանքարդյունաբերական գործունեության անձնակազմի հետ յուրաքանչյուր հանքարդյունաբերական գործունեության համար՝ յուրաքանչյուր հանքի պլանի վերլուծման նպատակով: Ընդհանուր առմամբ, հանքի բաղադրիչը հանդիսանում է ընդհանուր հանքի ենթամաս, և հանքը կարող է ունենալ տարբեր ենթամասեր: Հանքի պլանը, և, հետևաբար, բաղադրիչների նույնականացումը, կարող են տարբերվել հանքերի միջև՝ պայմանավորված մի շարք պատճառներով: Պատճառները ներառում, բայց չեն սահմանափակվում՝ ապրանքի տեսակով, հանքաքարի երկրաբանական բնութագրերով, աշխարհագրական դիրքով, և/կամ ֆինանսական նկատառումներով: Հաշվի առնելով Խմբի գործունեության բնույթը, բաղադրիչներն, ընդհանուր առմամբ, հանդիսանում են զգալի խոչընդոտներ, և հանդիսանում են ավելի մեծ ներդրումային որոշման մաս, որը պահանջում է խորհրդի հաստատումը:

Մակաբացման գործունեության ակտիվը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով, որը՝ հանքի բաղադրիչի հասանելիությունը բարելավելու նպատակով իրականացված, մակաբացման գործունեությանը ուղղակիորեն վերաբերող ծախսումների հանրագումարն է՝ գումարած տեղաբաշխված ուղղակիորեն վերագրելի վերադիր ծախսերը: Եթե արտադրական մակաբացման հետ միաժամանակ տեղի են ունենում լրացուցիչ գործողություններ, բայց որոնք անհրաժեշտ չեն արտադրական մակաբացման նախատեսվածի պես իրականացման համար, այս ծախսերը չեն ընդգրկվում մակաբացման գործունեության ակտիվի արժեքի մեջ:

Եթե մակաբացման գործունեության ակտիվի և արտադրված ապրանքների գծով ծախսերը հնարավոր չէ առանձնացնել, ապա կիրառվում է արտադրության համապատասխան չափանիշի վրա հիմնված վերագրման սկզբունք արտադրական մակաբացման ծախսերի՝ մակաբացման գործունեության ակտիվի և արտադրված ապրանքների միջև բաշխման համար: Արտադրության այդ չափանիշը հաշվարկվում է հանքաքարի նույնականացված բաղադրիչի համար և օգտագործվում որպես ուղենիշ՝ որոշելու ապագա օգուտների ստեղծման համար տեղի ունեցած լրացուցիչ գործունեությունների ծավալները: Որպես չափանիշ Խումբն օգտագործում է հանքաքարի արտադրության տվյալ ծավալների համար արդյունահանված թափոնների ծավալները՝ համեմատաձև ակնկալվող ծավալների հետ:

37. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)**յ) Մակաբացման գործունեության ակտիվ (շարունակություն)**

Մակաբացման գործունեության ակտիվը կարող է հաշվառվել որպես գոյություն ունեցող ակտիվի լրացում կամ բարելավում, և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված է առանձին տողով: Դրանք կազմում են ընդհանուր ներդրման մաս համապատասխան դրամաստեղծ միավորում, որոնք էլ դիտարկվում են արժեզրկման համար, երբ դեպքերի կամ հանգամանքներ փոփոխությունը վկայում են, որ հաշվեկշռային արժեքը կարող է չփոխհատուցվել:

Մակաբացման գործունեության ակտիվը հաջորդիվ մաշեցվում է կիրառելով թողարկված միավորների մեթոդը հանքաքարի նույնականացված բաղադրիչի ակնկալվող օգտագործման ծառայության ընթացքում, որի հասանելիությունը բարելավվել է մակաբացման գործունեության արդյունքում: Տնտեսապես փոխհատուցվող պաշարները, որոնք ներառում են հաստատված և հնարավոր պահուստները, օգտագործվում են հանքաքարի ակնկալվող օգտակար ծառայության ժամկետը որոշելու համար: Այնուհետև մակաբացման գործունեության ակտիվը հաշվառվում է սկզբնական արժեքով՝ հանած մաշվածությունը և արժեզրկման կորուստները:

ի) Ոչ նյութական ակտիվներ**ա) Համակարգչային ծրագրեր**

Խմբի կողմից ձեռքբերված համակարգչային ծրագրերը, որոնք ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները:

բ) Հետագա ծախսումներ

Հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են այն առանձին ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, որին վերաբերում են: Բոլոր այլ ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

գ) Ամորտիզացիա

Ամորտիզացիան հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի կամ դրան փոխարինող այլ գումարի գծով՝ հանած դրա մնացորդային արժեքը:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում սկսած այն պահից, երբ դրանք դառնում են մատչելի օգտագործման համար, քանի որ այս մեթոդն առավել ճշգրիտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը: Օգտակար ծառայության գնահատված ժամկետն ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար հետևյալն է.

- ▶ Հաշվապահական ծրագրեր 10 տարի

Ամորտիզացիայի հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

ծ) Հետախուզման և գնահատման ակտիվներ**ա. Նախքան իրավունքի ձեռքբերման ծախսեր**

Մինչ լիցենզիայի ստանալը կատարված ծախսերը վերաբերում են ծախսերին, որոնք Խումբը կրել է նախքան համապատասխան տարածքն ուսումնասիրելու օրինական իրավունքի ձեռքբերումը: Նման ծախսերը կարող են ներառել հետազոտման տվյալների ձեռքբերման և այդ տվյալների վերլուծման հարակից ծախսերը: Այս ծախսերը ճանաչվում են առաջանալու ժամանակաշրջանում:

37. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)

ծ) Հետախուզման և գնահատման ակտիվներ

բ. Հետախուզման և գնահատման ծախսումներ

Հետախուզման և գնահատման գործունեությունը ներառում է օգտակար հանածոների որոնում, տեխնիկական իրագործելիության որոշում և որևէ որոշակի հանածոյի առևտրային կենսունակության գնահատում:

Հետախուզման և գնահատման գործունեությունը ներառում է՝

- Պատմական հետախուզման տվյալների ուսումնասիրում և վերլուծություն,
- Երկրաբանական ուսումնասիրությունների միջոցով հետախուզման տվյալների հավաքագրում,
- Հետախուզական հորատում և նմուշառում,
- Հանածոների ծավալի և աստիճանի որոշում և ստուգում,
- Փոխադրման և ենթակառուցվածքային պահանջների ուսումնասիրություն,
- Շուկայի և ֆինանսների ուսումնասիրությունների իրականացում

Գոյություն ունեցող հետախուզման տարածքի հետախուզման իրավունքի համար վճարված լիցենզիայի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են մինչև թույլտվության ուժը կորցնելը:

Հետախուզման օրինական իրավունք ստանալուց հետո, հետախուզման և գնահատման ծախսումները ճանաչվում են շահույթ կամ վնասում առաջանալու պահից, բացառությամբ այն դեպքերի, երբ խումբը եզրակացնում է, որ ապագա տնտեսական օգուտները ավելի շուտ հնարավոր է, քան ոչ, որ կստացվեն: Այդ ծախսումները ներառում են ուղղակիորեն վերագրելի աշխատակիցների վարձատրության ծախսերը, նյութերի և վառելիքի օգտագործման, հետազոտման, հորատման ծախսումները և կապալառուներին կատարված վճարումները:

Որոշելու համար, թե արդյոք ծախսումները համապատասխանում են կապիտալացման չափանիշներին՝ օգտագործվում են տեղեկատվության տարբեր աղբյուրներ: Ապագա օգուտների հավանականությունը որոշելու համար օգտագործվող տեղեկատվությունը կախված է իրականացված հետախուզման և գնահատման աշխատանքների խորությունից:

Հետախուզման և գնահատման ծախսումները, որոնք վերաբերում են այն լիցենզիաներին, որոնցով հանածո դեռ չի ձևավորվել՝ ծախսագրվում են, երբ կազմակերպությունը կրում է տվյալ ծախսումները, քանի դեռ նշանակալի գնահատում չի իրականացվում համապատասխան հանածոյի ձևավորման համար: Այս փուլում դուրս գրված ծախսումները ներառվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում որպես այլ ծախս:

Ձեռնարկատիրական գործունեության համախմբման արդյունքում ձեռքբերված հետախուզման և գնահատման ակտիվները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, ներառելով ռեսուրսներն և հետախուզման պոտենցիալը, որոնք ենթադրվում է, որ ներկայացնում են ավելի մեծ արժեք, քան հաստատված և հնարավոր պաշարները: Նմանապես, հետախուզման և գնահատման ակտիվների (որոնք չեն ներկայացնում ձեռնարկատիրական գործունեություն) ձեռք բերելու հետ կապված ծախսումները նույնպես կապիտալացվում են: Այդ ակտիվները հետագայում չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված արժեքկումը:

Առևտրային առումով կենսունակ պաշարների հայտնաբերումից հետո, հետախուզման և գնահատման ակտիվները ստուգվում են արժեզրկման տեսանկյունից, և փոխանցվում են 'Հանքարդյունաբերական ակտիվներ, որը հանդիսանում է հիմնական միջոցների ենթադաս: Հետախուզման և գնահատման փուլում ամորտիզացիա չի հաշվարկվում:

37. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)**ծ) Հետախուզման և գնահատման ակտիվներ (շարունակություն)***գ. Հետախուզման և գնահատման ակտիվների արժեզրկում*

Հետախուզման և գնահատման ակտիվները պետք է ստուգվեն արժեզրկման համար, երբ փաստերն ու հանգամանքները վկայում են, որ հետախուզման և գնահատման ակտիվների հաշվեկշռային գումարը կարող է գերազանցել իր փոխհատուցվող գումարը: Համաձայն ՖՀՄՄ 6-ի, ներքոհիշյալ մեկ կամ մի քանի փաստերի և հանգամանքների առկայությունը վկայում է, որ կազմակերպությունն իր հետախուզման և գնահատման ակտիվների համար պետք է արժեզրկման ստուգում իրականացնի (թվարկումը սպառիչ չէ):

- ▶ Երբ տվյալ ժամանակաշրջանում լրացել է կամ մոտ ապագայում պետք է լրանա այն ժամկետը, որի ընթացքում կազմակերպությունը իրավունք ունի հետախուզելու համապատասխան տարածքը, և չի սպասվում, որ այն կերկարաձգվի;
- ▶ Երբ համապատասխան տարածքում օգտակար հանածոների հետագա հետախուզման և գնահատման հիմնական ծախսը ոչ բյուջետավորված է, և ոչ էլ պլանավորված:
- ▶ Երբ համապատասխան տարածքում օգտակար հանածոների հետախուզումը և գնահատումը չի հանգեցրել օգտակար հանածոների առևտրային առումով կենսունակ քանակությունների հայտնաբերմանը, և կազմակերպությունը որոշել է այլևս չշարունակել այդ տարածքում նմանատիպ գործունեությունների իրականացումը:
- ▶ Երբ բավականաչափ տվյալներ կան վկայելու, որ, չնայած համապատասխան տարածքում հնարավոր է անցնել օգտակար հանածոների մշակմանը, հետախուզման և գնահատման ակտիվի, հաշվեկշռային արժեքը հաջող մշակման կամ վաճառքի դեպքում անհավանական է, որ ամբողջովին կփոխհատուցվի:

Խումբը որոշել է, որ 2017թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա է հետախուզման և գնահատման ակտիվի արժեզրկման հայտանիշ: Հետախուզման և գնահատման ակտիվի արժեզրկման մանրամասները ներկայացված են Ծան. 17-ում:

Հական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ

Հետախուզման և գնահատման ակտիվների ծախսերի հետ կապված՝ Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառումը, պահանջում է դատողության կիրառում որոշելու համար, թե արդյոք ապագա տնտեսական օգուտներ կստացվեն ապագա շահագործումից կամ վաճառքից, կամ թե արդյոք գործընթացները չեն հասել այն փուլին, որ հնարավոր է իրականացնել պաշարների առկայության ողջամիտ գնահատում:

Ի լրումն դատողությանը որոշելու համար, թե արդյոք ապագա տնտեսական օգուտներ կստացվեն Խմբի հետախուզման և գնահատման ակտիվներից, կամ թե արդյոք գործընթացները չեն հասել այն փուլին, որ հնարավոր է իրականացնել պաշարների առկայության ողջամիտ գնահատում, Խումբը պետք է կիրառի բազմաթիվ գնահատումներ և ենթադրություններ:

Հետախուզման և գնահատման ծախսերի հետաձգումը անմիջական ազդեցություն է ունենում գնահատումների վրա: Հետաձգման քաղաքականությունը ղեկավարությունից պահանջում է, որպեսզի որոշակի գնահատումներ և ենթադրություններ արվեն ապագա իրադարձությունների և հանգամանքների մասին, մասնավորապես, թե արդյոք հնարավոր է իրականացնել տնտեսապես կենսունակ արդյունահանման գործունեություն: Ցանկացած նման գնահատումներ և ենթադրություններ կարող են փոխվել նոր տեղեկատվության ի հայտ գալու պարագայում: Եթե ծախսումների կապիտալացումից հետո հայտնի է դառնում, որ ծախսերի փոխհատուցումը հավանական չէ, համապատասխան կապիտալացված գումարը դուրս է գրվում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում այն ժամանակահատվածում, երբ նոր տեղեկատվությունը դառնում է հասանելի:

37. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)**կ) Պահուստներ****ա. Տեղանքի վերականգնման պահուստներ**

Խումբը կլրի տեղանքի վերականգնման ծախսերը կամ գործունեության ընթացքում կամ Խմբի հանքարդյունաբերական գույքի գործառնական կյանքի ավարտից հետո: Խումբը գնահատում է իր տեղանքի վերականգնման պահուստը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ: Տեղանքի վերականգնման պահուստը ճանաչվում է, երբ Խումբն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտավորություն որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք և այդ պարտավորությունը կարելի է արժանահավատորեն չափել: Այս վերականգնման գործողությունները ներառում են՝ հանքի փակում, թափոնների լցակայանների, պոչամբարների և կից կառուցվածքների տարածքների վերականգնում, բարելավում և բուսականության վերականգնում:

Երբ պարտավորությունը սկզբնապես ճանաչվում է, գնահատված ծախսերի ներկա արժեքը կապիտալացվում է՝ ավելացնելով կապված հանքարդյունաբերական ակտիվների հաշվեկշռային արժեքը այն չափով, որքանով այն իրականացվել է հանքի զարգացման/կառուցման համար: Թափոնների լցակայանների և հանքի փակման հետ կապված ծախսերը ներկայացվում են զուտ ներկա արժեքներով և ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Տեղանքի վերականգնման ժամանակացույցի կամ գնահատված ապագա ծախսերի փոփոխությունները ճանաչվում են առաջընթաց ճշգրտելով տեղանքի վերականգնման պարտավորության և համապատասխան ակտիվի մնացորդը, եթե նախնական գնահատումը սկզբնապես ճանաչվել է ՀՀՄՍ 16-ի համաձայն որպես ակտիվի մաս, այլապես, փոփոխությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Տեղանքի վերականգնման պարտավորության ցանկացած նվազեցում, և, հետևաբար, ցանկացած նվազեցում ակտիվից, որին այն վերաբերում է, չի կարող գերազանցել ակտիվի հաշվեկշռային արժեքը: Հակառակ դեպքում՝ հաշվեկշռային արժեքի գերազանցող մասը անմիջապես ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին առանձին հաշվետվությունում:

Եթե գնահատման փոփոխությունը հանգեցնում է վերականգնման պարտավորության աճի և, հետևաբար, ակտիվի հաշվեկշռային արժեքի ավելացման, Խումբը դիտարկում է՝ արդյոք առկա են ակտիվի արժեզրկման հայտանիշեր և ստուգում է արժեզրկման համար:

Ժամանակի ընթացքում, ներկա արժեքի փոփոխությամբ պայմանավորված, զեղչված պարտավորությունը աճում է՝ հիմնված զեղչման դրույքի վրա, որը արտացոլում է ընթացիկ շուկայական գնահատումները և պարտավորությանը բնորոշ ռիսկերը: Զեղչման պարբերական ծախսագրումը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին առանձին հաշվետվությունում՝ որպես ֆինանսական ծախս: Փակված տեղանքների համար գնահատված ծախսերի փոփոխությունները անմիջապես ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին առանձին հաշվետվությունում:

37. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)**h) Վարձակալություն**

Սահմանելու համար, թե արդյոք պայմանագիրը վարձակալության է (կամ պարունակում է վարձակալություն), հիմք է ընդունվում վարձակալության սկզբի դրությամբ պայմանագրի էությունը: Պայմանագիրը վարձակալության է (կամ պարունակում է վարձակալություն), եթե պայմանագրի կատարումը կախված է կոնկրետ ակտիվի (կամ ակտիվների) օգտագործումից և պայմանագիրը փոխանցում է ակտիվի (կամ ակտիվների) օգտագործման իրավունքը, եթե նույնիսկ այդ ակտիվը (կամ այդ ակտիվները) հստակ նշված չէ (չեն) պայմանագրում:

Խումբը՝ որպես վարձակալ

Վարձակալության սկզբի ամսաթվին վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն կամ գործառնական վարձակալություն: Վարձակալությունը, որի դեպքում սեփականության հետ կապված էական բոլոր ռիսկերն ու հատույցները փոխանցվում են Խմբին, դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն: Վարձակալության սկզբում ֆինանսական վարձակալությունները կապիտալացվում են վարձակալության սկզբի դրությամբ վարձակալված միջոցի իրական արժեքով կամ նվազագույն վարձակալության գծով վճարումների ներկա արժեքով, եթե վերջինս ավելի ցածր է:

Վարձակալության գծով վճարումները բաշխվում են ֆինանսական վճարների և վարձակալության գծով պարտավորության նվազեցման միջև այնպես, որ պարտավորության մնացորդի վրա ձեռք բերվի հաստատուն տոկոսադրույք:

Ֆինանսական վճարները համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են ֆինանսական ծախսերի մեջ: Ակտիվի օգտակար ծառայության ընթացքում վարձակալված ակտիվը արժեզրկվում է: Սակայն, եթե չկա ողջամիտ որոշակիություն, որ վարձակալության ժամկետի վերջում Խումբը ձեռք կբերի ակտիվի սեփականության իրավունքը, ակտիվը արժեզրկվում է ակտիվի գնահատված օգտակար ծառայության և վարձակալության ժամկետներից նվազագույնի ընթացքում:

Գործառնական վարձակալություն են համարվում բոլոր այն վարձակալությունները, որոնք ֆինանսական չեն: Վարձակալության ժամկետի ընթացքում գործառնական վարձակալության գծով վճարումները համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես գործառնական ծախսեր՝ կիրառելով գծային մեթոդը:

Խումբը՝ որպես վարձատու

Վարձակալությունը, որի դեպքում Խումբը չի փոխանցում սեփականության հետ կապված էական բոլոր ռիսկերն ու հատույցները, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Վարձակալության ժամկետի ընթացքում ձևավորված վարձակալական եկամուտները հաշվառվում են գծային մեթոդով և իրենց գործառնական բնույթի պատճառով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ ներառվում են հասույթում: Բանակցությունների և գործառնական վարձակալության կազմակերպման ժամանակ կատարված սկզբնական ուղղակի ծախսերը ավելացվում են վարձակալված ակտիվի հաշվեկշռային արժեքին և վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են նույն կերպ, ինչ վարձակալական վճարները: Պայմանական վարձակալական վճարները ճանաչվում են որպես հասույթ այն ժամանակաշրջանում, երբ Խումբը դրանք վաստակել է: